Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

19509

12

8.31.39

4-20

891.99
Ֆ-20

ԵՐԳԻՉ ՓԱՀՐԱՏԻ

ՈՂԲԵՐՆ ՈՒ ՀԱՌԱՉՆԵՐԸ

կամ

ՆՈՐԱ ԲԵԿԲԵԿ ՔՆԱՐԻ ՏՄՈՒՐ ԱՐՁԱԿԱՆՔԸ

Մասն Ա.

„Զայն հառաչանաց
«Հեծութեան արտի»
Նարեկ.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ.
Տպարան Յակովբ Ղասապեանցի
1907
(33)

29439-4,2

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մ. Մ. Մեսրոպյան
ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

12439-58

2003

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ

ԵՌԱՆԳՈՒՆ ԳՈՐԾՕՆ

ԱՆՄԱՀ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆՑԻ

ՆՈՒԻՐԱԿԱՆ ԱՃԻՒՆԻՆ ԻԲՐ ՅՈՒՇԱՐՁԱՆ

ՍՐՑԱԲՈՒԽ ՆՈՒԻԷՐ

ՎԾՏՈՏ ՀԵՂԻՆԱԿԻՑ

ՀԽՍՀ-ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. անվ. Մեսրոպի անվ.
Ա. им. А. Мясникяна

ՊԱՅԾԵԼԻ ՄՈՑՐԻԿՍ

Բնութիւնը օժտել է քեզ,
Գեղեցիկ ես, մայրիկս,
Անմահական փառքն անվաղճան,
Երջանիկ ես, մայրիկս.
Եղեմական ծլած ծաղիկ,
Անուշիկ ես մայրիկս,
Աստուծու արցունքով ցողած,
Շուշանիկ ես, մայրիկս,
Մեծ—հզօր թագաւորների—
Սրտին մօտիկ ես, մայրիկս.
Աշխարհի փառք ու պարծանք,
Կռուածաղիկ ես, մայրիկս։

Տիկնանց տիկին—վեհ թագուհի,
Յաւերժահարս գեղ համեստ.
Ո՞ր զգայուն մարդն է կարող,
Լռել-չտալ քեզ գովեստ,
Ծնած որդիքդ զարգացած,
Սրված են բազում արհեստ,
Ինքդ շնորհ, ձիրք ու տաղանդ,
Հանճարներու ես պահեստ.
Մեծ-հզօր թագաւորների,
Սրտին մօտիկ ես, մայրիկս,
Աշխարհի փառք ու պարծանք,
Կռուածաղիկ ես, մայրիկս։

Մեռաւ մարդդ՝ չը շուարար,
Բեհեղներդ հանեցիր,
Աշխատար տղամարդի պէս,
Որբերդ պաշտպանեցիր,
Պարսիկ, Արաբ, Օսման, Հոռոմ,
Սիրոյդ դերին շինեցիր,
Ոչ ոքի հետ չըպսակուար,
Բոլորին յետ վանեցիր.
Մեծ-Հզօր թագաւորների,
Սրտին մօտիկ ես մայրիկս,
Ռուս, Գերման, Անգլիային.
Կռուածաղիկ ես, մայրիկս։

Քաջ որբերդ մեծացել են,
Լրացել է իղձ փափաղ,
Ուրախ եղիր, այրի՛ մայրիկ,
Քեզ փայլում է արեգակ,
Տխուր վայրկեաններում այժմ,
Ցաջորդել է նոր վիճակ,
Սասնայ կուսանց թարմ արիւնից,
Պատրաստուել է քեզ պսակ.
Մեծ-Հզօր թագաւորների,
Սրտին մօտիկ ես մայրիկս,
Ռուս, Ֆրանս, Իտալիայի,
Կռուածաղիկ ես, մայրիկս։

Բերլինի մեծ յոդուածովը,
Մի մարդ ծնուեց պատուական,
Այդ մարդի անունն ազգանունն

Էր ազատ յեղափոխական,
Մենք տեսանք իննսուն թուին,
Արժանի ես, տո՛ նորան,
Ամուսնութիւնից մի խորշի,
Սուրբ օրէնք է բնական,
Յարգէ Ֆահրատիս խնդիրը,
Շուտ տուր պսակման նշան,
Բաղդը քեզի որոնում է,
Թագուհի մայր Հայաստան,
Յարգանքով մեծարէ զգուէ,
Քո փեսայ Դաշնակցութեան.
Մեծ-հզօր թագաւորների,
Սրտին մօտիկ ես, մայրիկս,
Արևելեան հարց անունով,
Կռուածաղիկ ես, մայրիկս։

Յուշարձան հանգուցեալ Ղ. Աբովեանի յիշատակին

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Արարատեան բարբառ հոգոյս բարեկամ,
Կաթնաբուխ քաղցր աղբիւր, ջուր անմահական,
Հոսէ միշտ խայտալով, սահիր ամեն ժամ,
Զովացուր պապակած հային մշտական։

Մեծն Այրարատի ժայռիցն ես բղխում,
Լուսաւորչի ծաղկած այգին նորոգում,
Արշակունեաց դամբարաններն ողողում,
Բուսցնում շիրմաց մօտ ծաղիկ պատուական։

Ստեփաննոս Նազարեանը մաքրեց ճահիճդ,
Խաչատուր Աբովեանն խոտակեց խիճդ,

Բայց անմահ Բաֆֆին մեծ դերքով լիճդ
Շինեց, որ անարատ մնաս յաւիտեան։

Արծրունի Գրիգորն էլ փափաղ էր,
Կենսատու կոթնաղբիւր, քեզ միշտ կիստակէր,
Թէ ձկներիդ խառն տեսնէր զորշ դորտեր,
Կսպանէր՝ որ մնային մաքուր իսկական։

Պալատական մարդը քո սիրոյդ մշակ,
Երկար տարի բահը ձեռին մշակեց,
Արծիւին էլ ակիդ մօտ դալ գուշակեց,
Զարգացուց ափերիդ ծառ եղեմական։

Վասպուրականի Արծիւն էլ սիրովդ ծարաւ,
Փշրեց փակուած վանդակ, դէպի քեզ թռաւ,
Խմեց զով ջրերէդ կարօտը առաւ,
Օրհնեց՝ որ միշտ մնայ ակդ անխափան։

Զօր գիշեր կաղաչեմ—կանեմ աղերսանք,
Երգիչ Ֆահրատին եմ, այս է իմ բաղձանք,
Տայ Աստուած Արծիւին խաղաղ երկար կեանք,
Զմերձենան ակիդ ագռաւք անպիտան։

ՀԵՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Ոչ ոք մեզ այնպէս չէ հարուածել
Խիստ մահացու վէրքերով,
Յատուկ մենք ենք մեր թշնամին,
Թոյն—աւերիչ ձեռքերով.
Նախանձ, ամբարիշտ, բամբասող,

Դինին ձեռքերիս ազգասէր,
Զուարճանում ենք թուրքերի
Անպատուաբեր երգերով։

Մենք իրար սիրել չգիտենք
Եղբայրական ջերմ հոգով,
Թշնամի ենք մեր լաւ մարդկանց,
Հալածասէր—չար սրտով,
Ազատ-անկախ ապրել խօսքը,
Հասկանում ենք վատ մտքով,
Ազատութեան հակառակ ենք,
Անմիաբան բարքերով։

Մենք միասին գործել չգիտենք,
Կուսակցական ենք ծայրահեղ,
Հին նախարարների ոգին,
Մեր մէջ եռում է ահեղ,
Հայրենիքից ընթանում է,
Ահռելի արեան հեղեղ,
Կոյր ենք—չենք տեսնում,
Ապրում ենք հին սարուկի վարքերով։

Ազգային պատմութեան փոխան,
Շահիսմայիլ, յայսմաւուրք,
Աւետարանից խօսողին կասենք
Ֆարմասо, կամ թուրք,
Մայրաքաղաք պաշտող հայ
Գիտնականն էլ խդէալից զուրկ,
Ժողովուրդը չունի խրատող,
Կապրի տգէտ մտքերով։

Մեր թշնամիքը նեղ սրտով,
Մեզ Հրէայ են ասել,
Բայց սխալ են, Հրէաներ,
Դիտեն իրար շատ սիրել,
Մենք ընդհակառակն իրարու
Հարստահարել և կրկել,
Մատնիչ ենք մէկմէկու,
Թուրքին հաճելի կրքերով։

Օտարը մեղաւոր չէ, իրար
Վնաս պատճառողը մենք ենք,
Մէկ մէկու ջան ասած բառը,
Զոռի ճառողը մենք ենք,
Մեզ մորթող քուրտ ու թուրքերի
Ձէնք վաճառողը մենք ենք,
Այդ գիտնալով գործում ենք,
Գռօշ ձեռք բերելու յոյսերով։

Զուներնք տէրտէր և ուսուցիչ,
Լաւ վեհափառ հովուապետ,
Որ կռուի դարաւոր մեզ վէրք
Պատճառող աղտերու հետ,
Դաւառներում կին ու աղջիկ
Ապրում են անգրագէտ,
Անգրագէտներից մարդիք
Ծնվում փթած իղձերով։

Երգիչ ֆահրատս չեմ տեսած,
Հայ հարուստներից լաւ բան,
Դեռ չմեռած կտակ անեն
Յօգուտ խղճուկ հայութեան,
Դառնում են երեսփոխաններ,

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ես ինձնէ մի կոյր երգիչ եմ։ Լոյսի, գոյների և ուրիշ շատ բաների մասին միայն իլրոյ և ընկերների բացատրութիւններից տեղեկութիւն ունիմ։ Անողոք բնութիւնը զլացել է տալ ինձ տեսողութեան թանկագին պարգևը։ Այդ կողմից ես ինձ խիստ ապաբաղդ եմ զգում։

Այդ այդպէս լինելով հանդերձ, ուրեմն ուսման տաճարների շնորհատու դռները կրկնակի ամրապինդ փականքներով փակ են մնացել ինձ համար։ Իսկ ես գէթ այն բաղդաւորներից չէի, որ Եւրոպական հողի վերայ ծնուած լինէի, ուր ինձ նման կոյրերի համար հազարաւոր դպրոցներ կան, և քաղաքակրթեալ ու զարգացած ծնողների գրկի մէջ ու ձեռի տակ մեծանալի և արբունքի հասնէի։ Ո՛չ, այդ բանը, այդ երջանկութիւնը ինձ համար չէր պահուած ու տնօրինուած։

Իմ սկզբնական կրթութեան դպրոցն ու վարժարանը եղել են սրճարաններն ու ընտանեկան մասնաւոր նեղ շրջանները. իսկ համալսարանս՝ ժողովրդական ընդարձակ-լայն ու անծայր խաւերը։ Իմ մեծ պրոֆեսորը եղել է ինքը ժողովուրդը, իսկ հոգատար ուսուցիչներս՝ իմ պաշտելի ընկերներն ու անգնահատելի բարեկամները, որոնք ոչ մի ճիգ ու ջանք ձեռքից բաց չեն թողել իմ յառաջընթացութեան ու կատարեալ զարգացման հասնելու համար։ Ժամեր, օրեր, շաբաթներ, ամիսներ ու մինչև իսկ տարիներ շարունակ, այդ սրտացաւ մտերիմներս իրանց թանկ ժամանակից խլելով ու գողանալով ինձ են նուիրել. երբեմն լրագիր և երբեմն ամբողջ հատորներով գրքեր են մօտս կարդացել... և դեռ այդ բաւական չէ՝ շատ անգամ էլ ինձ համար դժուար հասկանալի տեղերն ու բառերը պատմել և բացատրել են, որպէս զի ես նրանց իմաստը

լաւ հասկանամ, ըմբռնեմ ու իւրացնեմ և հարկաւոր դէպքերում, փոխանակ թուրքերէն խանդոտ, անմիտ ու անբովանդակ հեքեաթների, ժողովրդին զբաղեցնելու համար, պատմեմ անմահ Բաֆֆու, Ծերենցի, Ա.տրպետի, Ա.Հարոնեանցի և ուրիշ շատ շատերի իմաստալից և բազմաբովանդակ պատմական ու բարոյական վէպերն ու վէպիկները, որոնցից ազգային համ ու հոտ կըբուրէ։

Նոյնպէս անմասն չեն թողել ինձ մի քանի արհեստների մասին կարևոր ծանօթութիւններ ու տեղեկութիւններ տալուց, որոնցից ոմանք ըմբռնելով ու իւրացնելով, այժմ ըստ հնարաւորութեան գործադրում եմ։

Ա.հա այս է եղել իմ ամբողջ էութիւնն ու գոյութիւնը։ Սակայն կխոստովանիմ, որ մերթ ընդ մերթ աշուղներին յատուկ հիւանդութիւնով ես էլ վարակուեցայ, և ժամանակի պահանջին համաձայն, յանդգնութիւն ունեցայ երբեմնապէս, ոչ ուսումնական, այլ ռամկական երգեր յօրինելով զբաղուիլ, որպէսզի ձանձրալի վայրկեաններս սպանեմ ու ազատ ժամերս զուր չանցնին և շատերի նման աննպատակ չդեգերիմ աստ և անդ։

Ա.հաւասիկ իմ մտքի, սրտի և հոգու այդ արտադրութիւններն են, որոնք այժմ իմի ամփոփելով՝ իգիր արձանագրեցի և իբրև «հովուի արմաղան» կհամարձակիմ ընծայաբերել հայ ազգի հասարակութեանը։

Յեղափոխութեան կատարելատիպ մեծ վարդապետը դարեր յառաջ ասել է—«ում որ շատ տուաւ, նրանից էլ շատ կպահանջուի»։

Ի լրումն այս իմ համառօտակի ծանուցման, արդ շընորհ մեծ ունիմ ամեն քայլափոխում ինձ օգնող ու օժանդակող ընկերներին ու բարեկամներին, որոնց ընդ միշտ երախտապարտ կմնամ, առանց որևէ փոխարինութեան։ Իսկ ինձ լիուլի վարձատրած կըհամարիմ, երբ ընթերցող հասարակութիւնը շնորհ կանէ ձեռքն առնելու իմ այս չընչին երկասիրութիւնը, որով պիտի պանծայ, հրճուի ու մխիթարուի Ձեր

Երզիկ Ֆաքրաստ

Գողնում գաղում անպայման,
Մեռնելիս մի սուտ կտակով,
Թաղվում են մեծ փառքերով։

ՍԱՍՆՈՅ ՊԱՇԱՐՈՒՄԸ 1894 Թ.

Իսլամների գոռ վաշտերը կատաղի,
Պաշարել են մեր լեռները սոսկալի։
Ելէք, ելէք, քաջ Հայեր,
Արիւն թափենք անձնուէր,
Վասն ազատման Հայրենեաց,
Թափենք մեր վերջին արիւն,
Այս է պահանջում դարը։

Շէնիկ, Սէմալ շրջապատուած քուրտերով,
Տալուորիկի անցքն է փակուած զօրքերով։
Մի վախենար քաջ Սասուն,
Ել թշնամուն դէմ առ դէմ,
Մեր պապերից սորված ենք,
Մեռնել տղամարդու պէս,
Սուր մեզ թողին յիշատակ։

Քոյրն եղբօրից բաժանելու եկել են,
Հայր և որդի սպանելու եկել են։
Ի սէր Աստծու դժուար է—
Հպատակուել Իսլամին,
Լաւ է մեռնել առանց Հայ,
Քան թէ յանձնուել թուրքին,
Անխիղճ են ու անասուած։

Թնդանօթների դէմ կռուենք քաջ սրտով,
Սովին դիմադրենք կաթով, բանջարով։
Դէ, քեզ տեսնեմ քաջ Մուրատ,

Սուրդ շարժիր անվհատ,
Ռուսահայ եղբայրներ—
Եւրոպի պէս անխիղճ չեն,
Գուցէ կգան օգնութեան։

Գարնան ելման գետի նման գոռալէն,
Թափուենք դէպի մեր դուշմանը փռփռալէն։
Թող որոտան հրացանք,
Մեր ժայռերի ծերպերից,
Թող խոցոտի շուն Վալին,
Նանթենք չար սուլթանի սիրտը,
Որպէս կայծակ երկնքից։

Քաջ աղջիկներ առէք վառօդ ու կապար,
Լցէք դատարկ փամփուշտները չարաչար։
Իսկ դուք կանայք ժրաջան,
Առէք սուր ու հրացան,
Ազատէք մեր լեռները,
Ձեր մայրական արիւնով։

ՍԱՍՈՒՆՑՈՒ ՎԻՃԱԿԸ

Ծուխ-մառախուղ ամեն տեղ,
Կրակներ կը փիլփիլան,
Մըր մանուկներն խաց յաբով,
Եաման, խաւար, խիստ գիլան։

Օրտուներ բռնած—
Մըր չորս կողմը կրակով,
Մըզի կսպանեն,
Մըզի կու ծակծկեն նիզակով։*)

*) Ամեն տան վերջը կրկնել այս տունը։

Սասնայ սովու, սրի ձէն,
Գնաց Ստամբօլուց դէն,
Իտալ կըկլու վերան Վան,
Զուզեն լսել աղբօր ձէն։

Արուն քրտինք իրար խետ,
Ծոր ծոր կաթաց մըր թրէն,
Թուլ Բուլանուխ, անխիղճ Մուշ,
Կուզեն փախնել մըր երկրէն։

Սասո՛ւն, Սասո՛ւն, ա՛խ Սասուն,
Գետ է դարձեր մըր արուն,
Յօրի մարդիկ քար դարձած,
Զըն իգա մեզ օգնութուն։

ՀԱՅԻ ՆՕԳՆԱՐԱՆԸ

Հնարագէտ լինենք հայեր,
Փանգենք Եվրոպը հնարով
Խլենք թուրքից մեր սուրբ վայրեր,
Կեանքի արեան կաթիլներով։

Թէև թրքաց կայ պետութիւն,
Մեզի էլ կայ շատ շատ գիտուն,
Եկէք սիրենք սէր միութիւն,
Նրանց յաղթենք գաղափարով։

Մեր քաջ Արաբօն անվեհեր,
Ընկերներն են անձնանուէր,
Յաղթութիւնը մերն է, հայեր,
Թէկուզ գան հազար հազարով։

Սուլթանն անննպատակ սատկի,
Մենք ծառայենք խելք ու մտքի,

Հոգւով զինուած ելնենք ոտքի,
Յաղթութիւնը մերն է բարով։

Լինինք թուրքին անհաշտ-ընդդէմ,
Դառնանք առաքինի վսեմ,
Երգիչը էլ կըմասնակցեմ,
Մեծ գործին երգով քնարով։

ԱՒՏԻՔ ՀԱՅՐԵՆԵՐՈՑ

Տամ քեզի աւետիք գերի հայրենիք,
Եկել են քո ուրախ ժամանակներդ,
Ոչինչ բան չմնաց թերի, հայրենիք,
Գործում են եռանդով քաջ զաւակներդ։

Հայրենիք, բաղդը քեզ դռները է բացէ,
Կազատուիս արիւնոտ արցունքէ լացէ,
Զոհերուդ արիւնը բողոք է դարձէ,
Յոյս կայ որ նորոգւին աւերակներդ։

Անխելք որդիքներդ խելքի են եկել,
Աղաչելու փոխան զէնք են վեր առել,
Շատերն ազատութեան սիրով են մեռել,
Մարդ կը ոգևորեն նահատակներդ։

Քաջամարտիկներուդ Սուլթանն է լսէ,
Ելդրզ քեօշքը տատանուել է սկսէ,
Հզօր Սերոբ փաշադ պատրաստ կսպասէ,
Բացուել են կռուի կոչ դրօշակներդ։

Երգիչ Ֆահրատին եմ սիրոյդ նուիրուած,
Լրացել է արդէն զոր ինչ կայ գրուած,
Մնանիմ էլ՝ ուրախ եմ, իղձս է կատարուած,
Շուտով պիտ փարատուին վիշտ-կրակներդ։

ՉԱՐԹԻՐ ԼԱՎ

Սասունայ սար փչէ ուր հով,
Արև կշտէդ ընցնի ամպով,
Զուր ճր քնիս էրազներով,
Զարթիր լաւ, մըռնիմ քըզի,
Մըռնիմ քըզի՝ օգնէ խալուն։

Բոբիկ ոտով չուր Աղթամար,
Էրթաս յիլամ քըզի խամար,
Թուրբդ օրշնէ սուրբ Տիրամար.
Զարթիր լաւ և այլն։

Էրթամ պագեմ մառմառ քումպէթ,
Եօթ անուան Տէր էղնի քու խետ,
Թուրքի արուն կաթայ թրէդ.
Զարթիր լաւ և այլն։

Զուր ճր հէսքիր մնանք լալով,
Երկրէ երկիրներ ման գալով,
Մեռանք թուրքի պարտքեր տալով.
Զարթիր լաւ և այլն։

Գրող տանի քուրտ Աբօյին,
Որ չսպանէր ջոջ Ափօյին,
Իլլաճ մացեր Արաբօյին.
Զարթիր լաւ և այլն։

12439-58

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ԱՄՍ ССР
Ա. ՍԱՍԱՆԻՀԱՅԱՆ ԱՆՎԱՆ

ՀՌՈՐԵՆԱՍԷՐԻ ԿՈՉԸ

Ով որ քաջ է, ինչ կսպասէ,
Արդէն ժամանակ է, թող գայ,
Մահ պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է թող գայ։

Թափենք գնդակ ինչպէս տարափ,
Թշնամին լինի յուսախաբ,
Տարածենք մահ—ահ ու սարսափ,
Ով որ տղամարդ է, թող գայ։

Մերթ Սասուն, մերթ սարէ Սիփան,
Կռիւ կունենանք անխափան,
Մինչև որ փրկենք Հայաստան,
Այս յոյսն ունեցողը, թող գայ։

Կամ կռուինք պարպինք վերջանանք,
Կամ զէնքով փրկութիւն ստանանք,
Բաւական է գերի մնանք,
Ազնիւ մտածողը թող գայ։

Երկաթէ մարդ, քարի որդի,
Վրէժխնդիր լինի թուրքի,
Աշխուժով քարի տակ չոքի,
Անսխալ խրփողը թող գայ։

Սուրը մէջքին, հրացանն ուսին,
Համարձակ դիմէ օրհասին,

Մահուան պատանքը միասին—
Մահն արհամարհողը թող գայ։

Հինգ դար է որ մեզ կսպանեն,
Բռնի կրօնից կը հանեն,
Կին ու աղջիկներս կը տանեն,
Նամուս ունեցողը թող գայ։

Բոլոր ազգեր մեզ ատել են,
Քանզի չունինք իրար հետ սէր,
Զունենալ Եւրոպից յոյսեր,
Այսպէս հասկացողը թող գայ։

Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զէնքով պէտք է մաքրել հաշիւ,
Յարգել զէնքը, տալ մեծ պատիւ,
Սերովբ փաշին սիրողը թող գայ։

ՀԱՅ ԶԻՆԻՈՐԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Մենք անկեղծ զինուոր ենք տառանցի վիճակ,
Պէտք է սուրբ ծառայենք երկար ժամանակ,
Պարսկաստանի խորքից եկել է նամակ.
Գնում ենք բարով,
Կուշանանք տարով,
Արիւն սուր ու թուր,
Պատերազմի դաշտ—
Կսպասէ մեզի։

Դուշմանը տուեց մեզ ջանֆիտայ անուն,
Այդ անուան համաձայն՝ տեսաւ զօրութիւն,
Մենք չենք սիրել ազատ կեանքի բռնութիւն.

Ուխտել ենք կռուել,
Այդ սիրով մեռնել,
Համոզուած ենք որ—
Միայն զէնքով կայ—
Հային փրկութիւն։

Բանկի պաշարումը, Յոյն պատերազմից,
Աւելի մեծ սարսափ թողեց սուլթանին,
Զէյթունը քաջ կերպով յաղթեց գազանին.
Կեցցէ Զէյթունը,
Խրոխտ Սասունը,
Կուսակցութիւններն—
Անխտիրօրէն—
Պարծանք Հայութեան։

Ստամբօլը պէտք է լինի արեան ծով,
Ամեն կողմից կռիւ կսկսուի շուտով,
Գօթուրից դէպի Վան անցնել շտապով.
Աջից Վարդանը,
Ձախից Իշխանը,
Գրաւել Աղբակ,
Տարածել սարսափ,
Փառք դաշնակցութեան։

Անհաւատ ժողովուրդ, հրաշք կսպասէք,
Գետ չէք տուել, ծովի չափ կը բամբասէք,
Դարձեալ հայ զինուորը չէ յուսահատուած.
Առանցի գանգատ,
Կռվում է ազատ,
Գործին հարազատ,
Երկաթի կամքով—
Տանում ամեն բան։

Մեր զարգացած խիղճը, մեր սուրբ օրէնքն է,
Հաստատ համոզմունքը մեր անյաղթ զէնքն է,
Մարգասէր իգէալն մեր սկզբունքն է.
Կեցցէ հայրենիք,
Կեցցէ իրաւ—փափագ,
Անյաղթ կմնայ,
Անթիւ դարէդար,
Աստուածահաճոյ մեր վեհ դրօշակ։

ՍԱԼԱԹ ՄԻՀՐԻԻ ԵՐԳԸ ԱՐԱԲՕՅԻՆ

Զարթէք, զարթէք, ձըր Աստու սիրուն,
Իմալ արուն գօլել թրուն,
Լոխպել անօրէն քրիստերուն,
Վարագի ճանկ թաթով կիգայ։

Զըր Աստու սէր, դէն իրիշկէք,
Առէք զէնքեր, զրխեր հագէք,
Թոթվէք ձեռնի, սիրտը պագէք,
Տեսէք ինչ խըվաթով կիգայ։

Զգի մըռնիմ Սասնայ ծռեր,
Էն որ ա կիգայ մըր լեռներ,
Քսան թուրքի գլօխ թեռներ—
Գրած՝ զառզաւաթով կիգայ։

Սպանել է Ֆաթոյ Զանկին,
Գլօխ զարկեր է թվանքին,
Մեռնիմ էն պատ պռնկին,
Իմաձ սանթանաթով կիգայ։

Ախլախնձոր — տեփուր յերես,
Դուշմանի կեանք թորկեր է կէս,
Նարինջ ձին տակ - ասլանի պէս,
Խօրօտ — շախշիաթով կիգայ։

Սասնայ վիշապ — ազնաւուր բէտ,
Զար աչք քօռնայ՝ չտեսնի խէթ,
Ալիզբռնացի Լեոնի հետ,
Արծուի զօլ զանատով կիգայ։

Արընով է սրվել լոզը,
Բարութով է կտրել դոզը,
Քրտի մահ, թուրքին յաղթողը,
Զէնքով, դառ զիննաթով կիգայ։

Մէկ հարցուցէք գալող որն է,
Քաջ Արաբոյ բախտաւորն է,
Կարմիր Իրիցանց զինուորն է,
Առաքելսի - զարդով կիգայ։

Ոտքի կայնի կարիճ Խէրան,
Զօրքով գնայ յառաջ ուրան,
Սալաթ Մէհրին բաժին խուրբան,
Արաբոս գոլվաթով կիգայ։

Արաբոյիս բաժնի բօղուն.
Բարութ գուլլէն ուր բնաղուն,
Կը թափայ ձըր վախկոտ աղուն,
Հայ անարատ կաթով կիգայ։

ՈՐԴԵԿՈՐՈՅՍ ՄԱՅՐԸ

Ես երգեցի մի երգ յուզուած,
Զանֆիդալի մօր մօտը,
Նա փարատեց իւր կարծիքը,
Առաւ որդու կարօտը։

Թշուառ մայրը դեռ չգիտէր,
Թէ Զէյթունն է իւր որդին,
Իմ դիւցազնի երգից լսեց,
Որ ապրում է սիրելին։

Լսեց նոր նոր յաղթանակներ,
Լուրեր հարցուց Բաշկալից,
Հուրաց—փայլեց սև աչքերը,
Ինչպէս կրակ բոցալից։

Շանթի նման լի շեշտերով—
Կրկնեց որդու անունը,
Մայրական վեհ զգացմունքով,
Յայտնեց երջանկութիւնը։

«Ես բաղդաւոր մայր եմ, ասաւ,
«Արդէն հասայ փափագիս,
«Պատմութիւնը դափնեայ պսակ—
Պատրաստել է զաւակիս»։

ՂԱՐԻՊ ԶԷՅԹՈՒՆՑԻՆ ԲԱԴՈՒ

Ես կանիծեմ Էգիսոնին,
Որ չհնարեց էնպէս մէկ գիւտ,
Սիրած սրտեր հեռու տեղից,
Իրարու մօտ գնային շուտ։

Ա՜խ, նազելիս, չեմ մոռացել,
Մեր լեռների ծաղիկները,
Դու այդ ծաղիկների զարդը,
Կեանք ու հոգիս էր քո սէրը,

Շատ գիշերներ լաց լինելով,
Միտք եմ բերել Մարաշ - Զէյթուն,
Կիզիլ Ատա, Բլդան աղբիւր,
Ա՜խ, մանաւանդ սիրուն Զէհուն։

Ես յիշում եմ քրոջս հետ,
Լողում էիք ձկան նման,
Ես հիացած՝ հիւրի—փէրի—
Կարծում էի քեզ անպայման։

Շորերդ կիսահագնուել,
Վրայ տուին մեզ Լեկզիները,
Առար հրացանն անշփոթ,
Գրաւեցիր բարձր դիրքեր։

Ոչ մի գնտակ զուր չը անցաւ,
Թշնամին փախաւ յուսահատ,
Հպարտ լեռների թագուհի,
Ի՞նչպէս կռուար անվախ ազատ։

Ես հեռուից դիտում էի,
Որ նեղն ընկնես գամ օգնութեան,
Բայց դու վերջ տուիր քաջի պէս,
Հոգիս հոգուդ լինի զուրբան։

Այնուհետև նստանք սեղան,
Դու խմեցիր մի նոր կենաց,
Ատծու պատգամի կարծիք էր
Հոգոյս մէջ յիշատակ մնաց։

Յայտնեցիր որ Զէյթունն անկախ,
Ազատ հող լինի հայկական,
Այնտեղ խմբուենք և ոյժ կազմենք,
Ապա գրաւենք ողջ Հայաստան։

Ափսոս, բաղդն ինձ գցեց Բագու,
Երջում եմ անտուն անկայան,
Դէպի քեզ կը թռչիմ, հոգիս,
Սպասում եմ անուշ գարնան։

Հէնց գալուն պէս մի նոր կռիւ,
Ես կստեղծեմ քաղաքական,
Թող դարձեալ Ելգրզի դևին,
Խունկ խնկարկէ կեղծ Եւրոպան։

Բայց մենք պիտի շարունակենք,
Անյուսահատ — անվերջ կռիւ,
Հասկանանք որ ամեն ազգ էլ,
Կռուով է մաքրել իւր հաշիւ։

Աջող կռուից զիրկդ կընկնեմ,
Մազերըդ փրոէ երեսիս,

Ձերմ համբույրին հովն յաջորդէ,
Ազատ շունչդ դիպցուր սրտիս։

Այնուհետև սիրովդ օժտուած,
Աշուղ Ֆահրատ ես կը դառնամ,
Հայրենիքիս փրկութիւնը—
Քեզ կը երգեմ անուշ Մարիամ։

Կը երգեմ որ, կորաւ թուրքը,
Այս է սրտիս իղձ ու փափագ,
Ազատ երկիր, ազատ դպրոց,
Սա է կեանքիս վերջին պսակ։

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՔԱՐՈԶԶԻ ԿՏԱԿԸ

Հիւանդ եմ ես, գուցէ մեռայ,
Էսիր իմ կտակս տիկին,
Մի թողնիր որ հայ կղերը,
Խունկ ծխէ դագաղիս չորս դին։

Կանչէ թող գան հայ հայդուկներ,
Զինուորական խրոխտ պատուով,
Վառօդ ծխեն, սրի հոտով,
Հայը պիտ լինի ազատով։

Մռայլ հոգու շարականի—
Տեղակ երգեն, երգն քաջի,
Հրացանի սուինք փայլեն—
Գլխիս վերև փոխան խաչի։

Գերեզմանս մի փորել տայ,
Կղերի տականք ժամկոչներուն,
Պահպանողական տիրացուք,
Թող մօտ չգան, Աստուծ սիրուն։

Թող ինձ թաղեն ջանֆիտահներ,
Դրօշակի թեթեր կարդան,
Վրան պարպեն քանիմ հրացան,
Զատվորով կնքեն հոդս յաւիտեան։

Իսէր այն անցեալ օրերուն,
Կատարիր վերջին կտակս,
Սիրելիդ իմ, աւանդ պահիր,
Մանկիկներիս յիշատակս։

ԱՐԱՄ ԱՐԱՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ելդըզ քեօշկից հրաման —
Տուեց դահիճ Սուլթանը,
Մնաք բարեաւ ազնիւ ընկերներ,
Մօտ է կեանքիս վաղճանը։

Կարմրագոյն պատանքս,
Բանդի պատէն մեխել են,
Դիւապաշտի անգութ ֆարմանը,
Գլխիս վերև կախել են։

Պահանջում են թուրքանալ,
Կեանքը գնել մատնելով,
Ապրել այս դառն աշխարհում ստոր,
Ազգի գաղտնիք պատմելով։

Ես պաշտել եմ գաղափար,
Ուխտել եմ զոհուել ազգին,
Կախաղանի անգութ սարսափով,
Չեմ ծախել իմ սուրբ հոգին։

Արև լուսի կարօտով,
Երկար տարու տանջանքին,
Կախաղանը վերջ կտայ շուտով,
Էրուած—խորուած իմ կեանքին։

Թող չը թաղէ ինձ թուրքը,
Թողնի հոգի երեսը,
Թող կատարէ իւր անգութ ամարդի,
Գազանային հանդէսը։

Բայց դուք անուշ ընկերներ,
Ձեր սրտի մէջ գերեզման,
Թաղէք ձեր հէք Թաթուլին լացով,
Մահս յիշէք մշտական։

Յայտարարէք Դրօշակին,
Կենսագրութիւնս անարատ,
Ազգ ուրացողներին թող լինի,
Ազնիւ մահս սուրբ խրատ։

ՊԵՏՐՈՍ ՍԷՐԷՄՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի ջանֆիտահ եմ,
Թափառական տուն չունիմ,
Եարիս փոխան զէնքն եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունիմ։

Արնոտ երկրի սուգ ու շիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,
Տանջուած հայրենիքիս սէրն ինձ,
Զը վախեցուց վտանգից։

Սասնայ լեռներ Գողգոթայից—
Շատ բարձր էր, խիստ դժուար,
Կեանքի խաչը ես շալակած,
Այնտեղ տարայ սիրայօժար։

Ես խաչուեցայ, ջանֆիտահի,
Սկզբունքս սուրբ մնայ,
Թող իմ արեան կաթիլներով,
Հայ հայդուկը զօրանայ։

Մակեդոնին հետ միանալը,
Իմ խաչովս պսակուեց,
Եղբայրական սիրոյ զէնքով,
Գազան սուլթանն խորտակուեց։

Կախաղանից երբոր քամին—
Ինձ տարբերէ ճօճալէն,
Յիշէք Պետրոս Սէրէմճեանին,
Թուրքին վրէժ գոռալէն։

Ապա հանգիստ հող կը մտնեմ,
Յոյսը դուք էք, ընկերներ,
Շարունակէք սիրած գործս,
Դաշնակցութեան վեհ քաջեր։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ԿՆՈՋ ԵՐԳԸ

Հայաստանից եկած զինուոր,
Սիրականս — կեանքիս հատոր,
Քեզ կսպասէի օրէ օր,
Շողշողուն զէնքերիդ մատաղ։

Տուր զէնքերդ առանձին պահեմ,
Յոգնած — տանջուած հոգիդ շահեմ,
Վառ համբուրով դէմքդ շոյեմ,
Թրթռան նեարդերիդ մատաղ։

Արկածալի կեանք խորհրդով,
Լեռներ ես անցել շտապով,
Արեգակն է այրել տապով,
Սևորակ պատկերիդ մատաղ։

Կգաս դու զոհերի երկրէն,
Պատմիր Մոկունքցի Եսթերէն,
Խօսիր Գիսակի խօսքերէն,
Արտաշարժ խօսքերիդ մատաղ։

Զով Սասունի հովէն կուգաս,
Վանայ ծփան ծովէն կուգաս,
Անդրանիկի քովէն կուգաս,
Զօրաց շէֆ զինուորիդ մատաղ։

Սերոբ փաշի գերեզմանը,
Տեսել ես իմ սիրեկանը,

Դիտել ես ողջ Հայաստանը,
Ապագայ յոյսերիդ մատաղ։

Սիրտս է դառել սիրոյ անօթ,
Տասն օր կեցիր՝ առնեմ կարօտ,
Յետոյ գնա Սաքօյի մօտ,
Թանկագին ընկերիդ մատաղ։

Արփենիկն եմ, լի բերկրանքով,
Գգուեմ պաշտելոյս բաղձանքով,
Քնենք ամուսնու տենչանքով,
Սիրուհու կարօտ սէրիդ մատաղ։

ԵՐԱԽՏԱՒՈՐ ՔԵՌՈՒ—
(Զիշմանեանի) յիշատակին

Սարեր ձորեր իրար տուող,
Հոգիս քուն ու դադար չունիր,
Ամեն մի տեսակ դառնութիւն,
Սիրտս ուրախութեամբ կ'տանիր։

Ես տրտնջալ չը գիտէի,
Ընկերներս էլ ինձի նման,
Տանում էինք ֆիտահական,
Ծանր լուծը մենք մշտական։

Ես ուխտեցի բազմաչարչար—
Ազգիս սիրոյ համար մեռնել,
Զարկել—զարկուել զօր ու գիշեր,
Անգութ թուրքից վրէժ առնել։

Ես զոհեցի սիրուհու սէր,
Ազգ ու երամ քոյր և եղբայր,
Հարստութիւն երջանիկ կեանք,
Նաև թողի հանգիստ աշխարհ։

Բայց մէկ օր էլ գինադադար,
Թողի կռիւ, սուր, հրացան,
Գնացի ազգիս մեծ ժողովքին,
Ինձ նախատինք տեսան արժան։

Իմ յոյսերս փշրուեցին,
Ծրագիրներս ցնորք դարձան,
Հիասթափուած գնացի թուրքին,
Ասի տուր ինձ բանդ, կախաղան։

Ձեր հէք Քեռի Ռուբէնի —
Կտակն այս է ջանքիտահներ,
Գործէք, կռուէք զօր ու գիշեր,
Միք տեսնի ազգային ջոջեր։

Ձեր սուրը սիրտը ապակի է,
Կը կոտորեն — չի նորոգուի,
Նրանք գիտեն վիրաւորել,
Միք տեսնի, միք հիասթափուի։

ԻՄ ՍԻՐՈՒՀՈՒՄ

Սիրուններ դուք միք նեղենալ,
Մշտական իմ եարս եմ գովում,
Միք նախանձուի, միք զարմանալ,
Որ պատուական եարս եմ գովում.
Թէկուզ լինիք աստղ ու լուսին,
Անգաւաճան եարս եմ գովում,
Ինչ կայ նրան՝ այն չկայ ձեզ,
Իմ աննման եարս եմ գովում։

Դուք խեղճերու արհամարհող,
Հարստութեան երկրպագող,
Պար ու խնջոյք—շռայլութիւն,
Աննպատակ ցոփ կեանք սիրող,
Կեանք մեռցնող կօրսէտներով,
Զարդի համար հոգի տուող,
Այդ բոլորին արհամարհող,
Իմ գովական եարս եմ սիրում։

Ձեր գէնքերը արդու զարդն է,
Ցառաջ եկէք շորով ոսկով,
Աշխատէք որ մարդ գրաւէք,
Անբնական շինծու խօսքով,
Քնընութեան չէք դիմանալ,
Խիստ ապքատ ու խեղճ էք գործքով,
Գործքով պահանջիս համաձայն,
Ինձ օգնական եարս եմ գովում։

Զարդամոլ կուռք, կանացի
Սիրտ, ոսկոյ մարգարտի ղուլ չէ,
Իսկական իւր փոքրերուն մայր,
Տնտեսական գործին ծոյլ չէ,

Փչած տիկ—ծռկլտան տիկին—
Ների նման անգործ թռչլ չէ,
Գործքով եռուն, կազմով ասողջ,
Իմ սիրեկան եարս եմ գովում։

Իւր մարդու դրամը տալով,
Մեծ բարեգործ չէ ձևանում,
Հօր կարողութեան արդիւնքով,
Բարերար չէ հանդիսանում,
Իւր շնորհ—ձիրք ու տաղանդով,
Փող աշխատում արցունք սրբում,
Դրա համար անուշ ազնիւ,
Իմ գիտնական եարս եմ գովում։

Նա զարգացած դեմօկրատ է,
Կսիրէ ընդհանուր մարդկութեան,
Մարդկութեան որբն՝ այժմ հայն է,
Նա նուիրվել է հայութեան,
Երբեմն Կավկազի դէպքերը,
Երբեմն լիշում է տաճկաստան,
Բանտարկելոց դրութեան մէջ—
Մտնող լացկան եարս եմ գովում։

ՀԱՅ ԶԻՆԻՈՐԻ ԲԱՂՁԱՆՔԸ

Ո՛չ փառք ու պատիւ, ո՛չ պարծանք,
Ո՛չ ոսկի, ո՛չ երջանիկ կեանք,
Վառուած սրտիս մէջը միայն,
Քեզի տեղ տուի, հայրենիք։

Կանացի գգուանքներից զուրկ,
Սիրտս գրկեց մէկ հրացան,
Անուշ օրիորդի փոխան,
Քեզ սիրեցի Մայր Հայաստան։

Ո՛չ քուրոջ լաց, ո՛չ մօր բողոք,
Կրնան դարձնել ճանապարհէս,
Ո՛չ բռնակալների ոյժը —
Կարեն խաղդել գաղափարէս։

Օտարի տուած փառքի տեղ,
Կրեցի ազգէս բամբասանք,
Սիրոյդ համար, որբ հայրենիք,
Անձս առայ հազար վտանգ։

Ազգերը անգութ վճռեցին,
Արիւն է պէտք նպատակիդ,
Թող իմ կարմիր թարմ արիւնը,
Ներկ լինի փառք ու պսակիդ։

Հաւասարականութեան զոհ—
Մարմինս թող թաղուի Կարին,
Արժանի է ազատութիւն,
Քեզի նման սուրբ աշխարհին։

ՄԱՍԻՍ ԽՄԲԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սուրբ զինատար Մասիս խումբ,
Ճանապարհդ է ապահով,
Կեանքից ձեռք քաշած քաջեր,
Անցնում էք ծովէ իծով։

Ձեզ յանձնեցի Կոմս, Վաթան,
Որ տանէք Երկաթի քով,
Աստուած սիրէք, սիրելոյս,
Տեղ հասուցէք ապահով։

Քիւրտ բարեկամների մօտ,
Հանգստանայ Վաթանս,
Ասէք ազնիւ Թօխմախին,
Զը մոռանայ պայմանս։

Դաշնակցութեան փառք, պարծանք,
Իմ Քղեցի, քեզ ղուրբան,
Զէնք ու զինուոր Կոմս, Վաթան,
Տար հասցրու մինչև Վան։

Սասնայ բարձր լեռներից,
Լուրեր գրէք քաջերին,
Յոյս ու հաւատ ներշնչէք,
Մօտ ապագայ հայերին։

ԻՄ ԱԶՆԻՒ ՊՕՂՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մանկութեան օրից խիստ հաւատարիմ,
Միշտ երկրպագեց վեհ ազատութեան,
Հայրենեաց սիրով տոգորուած զինուոր,
Զոհեց իւր կեանքը ազգի փրկութեան։

Սրանից աւելի բարձր բարութիւն,
Չկայ աշխարհումս անգին—թանկագին,
Երբ մարդ իւր կեանքն է զոհում ուրիշին,
Կամենում փրկել իւր թշուառ ազգին։

Այսպէս էր ազնիւ Պօղոս Քղեցիս,
Պատմութիւնն անեմ ազի արցունքով,
Յիշեմ ողբալէն հզօր անցեալը,
Երբ ապրում էր նա ֆիտայի կեանքով։

Բնութիւնը ոչ մի սխալ չէր գործել,
Օժտել էր քաջիս բոլոր պայմանով,
Դէմք, պարթև հասակ, հոգին անարատ,
Սիրտն ընկերասէր՝ սուրբ ամեն բանով։

Աւաղ, նա չկայ, լացէք ընկերներ,
Թաղուաւ պատմութեան մէջ քաջ կտրիճը,
Երգ ու հառաչանքս է քաջիս պատկերը,
Երգում եմ վրէժ... ապրում է մատնիչը։

ՔՂԵՑԻ ՊՈՂՈՍԻ ՔԸՋՈՒԹԵԱՆ ԷՔԹԻՒ

Պատրիարքից մինչ ժամկոչ,
Սէր, գուրթ չունին մեր ազգին,
Նոցա միջից պակաս է,
Ազգայնական վեհ հոգին.
Յաղթական կռուից կգաս,
Կաթում արիւնըդ անգին,
Կաթեցուր հայ կղերի,
Քօռ աչերը լոյս տեսնին...
Պողոս ջան, քեզ ղուրբան,
Մեր գիւման, դու՛ ես, դու։

Քարացած հայ հարուստներ,
Կռապաշտ են վատ հոգւով,
Չեն տեսնում ազգի թարախ,
Թուրքացած են չար սրտով,
Ամեն օր կլուսնները,
Չեղխ քէֆ անում շատ ոսկով,
Յոյց տուր նրանց մի մահակ,
Այդ վատերը խելքի գան...
Պողոս ջան և այլն։

Ղաթրրի պէս զրբխուած,
Ոսկոյ զանգլակ խանումներ,
Կապիկի պէս հետևող,
Մօտայասէր աղջիկներ.
Խելքից խղճից զրկուած,
Նոքա չունեն ազգի սէր,
Պատմիր բանդ ու հալածանք,
Անզգամներ խելքի գան,
Պողոս ջան և այլն։

Ծոյլ երիտասարդները,
Կեանք են վարում խայտառակ,
Արբեցող—շռայլ կեանքով,
Ապրում են աննպատակ.
Զուներն ազգի սէր թասիպ,
Քեզնից առնին օրինակ,
Յանդիմանէ վատերին,
Լաւ խրատ տուր համարձակ...
Պոզոս Ջան և այլն։

ՁՕՆ ԱՆՄԱՀ ՄԵՍՐՈՎՊ-ՄԱՇՏՈՑԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ

Ո՞վ էր այն մութ դարերին,
Կոչուեց ուսուցիչ հայերուն,
Փրկելով խաւարից դարձաւ,
Լուսաւորիչ հայերուն,
Նա իսկ դարձաւ փրկութեան կէտ,
Պաշտպան կարիճ հայերուն,
Թարգմանելով սուրբ գրքեր,
Դարձաւ թարգմանիչ հայերուն,
Վերոյիշեալ սրբութիւնը,
Տուեց գրիչ հայերուն,
Երախտաւոր անմահ սիրոյ,
Երկրորդ փրկիչ հայերուն։

Այս մարդուն չ'ճանաչելը,
Աններելի յանցանք է,
Նրա անունը չգիտնալը,
Պարտութիւն ամօթանք է,
Նրա թողած լիշատակը,
Փառք ու պատուի պարծանք է,

Նրա Աստուածացած գիւտը,
Կեանք ու հոգու բերկրանք է,
Վերոյիշեալ սրբազնութիւնն,
Տուեց գրիչ հայերուն,
Լեզուի պաշտպան, ազգի պատուար,
Երկրորդ փրկիչ հայերուն։

Նա ազատեց Յոյն, Ասորի,
Կղերների ճանկից մեզ,
Որոնք բարբարոս երեսի,
Դիմակ առած որպէս հեզ,
Փրկարար ձեռքերով եթէ՝
Նա չմտնէր ասպարէզ,
Մեր լեզուն էլ ձեռքից կերթար,
Ոչինչ բան չէր մնալ մեզ.
Վերոյիշեալ վեհութիւնը,
Տուեց գրիչ հայերուն,
Հիմք կրօնի, մայր գրութեան,
Երկրորդ փրկիչ հայերուն։

Աթէնք առաւ ուսում դարձաւ,
Մագիստրոս դիպլոմատ,
Եկաւ Հայոց Վրաց հիմքը,
Արաւ յաւիտեան հաստատ,
Խուժադուժ ազգերի նման,
Կլինէինք անարմատ,
Նրա շնորհիւ ապրում ենք,
Կատարեալ հայ հարազատ,
Վերոյիշեալ բարձրութիւնը,
Տուեց գրիչ հայերուն,
Գրականութիւնն ապահովող,
Երկրորդ փրկիչ հայերուն։

Ծնաւ Տարօն — Հացիկ աւան,
Գերեզմանն է Օշական,
Գերեզմանին երկրպագել,
Յարգանք տածելն է արժան,
Պէտքէ յիշենք, ձօնենք, տօնենք,
Գովենք մինչև լաւիտեան,
Որ ապրում ենք մարդավայել,
Մենք նրան ենք պարտական,
Նա չլինէր կը մնայինք—
Անգիր Եզրտու նման,
Նրա շնորհիւ գոյութիւն,
Ունի ազգ, հայ, Հայաստան,
Լեզուս տկար չեմ կարող տալ,
Ըստ արժանոյն գովասան,
Այն Մեսրովբն էր, որ շնորհեց,
Գիրք ու գրիչ հայերուն,
Սուրբն Մաշտոց—հայը բազմերախտ,
Երկրորդ փրկիչ հայերուն։

ՆՈՒԷՐ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՂԱՐԱ—ՄԵԼԻՔԻՆ

Երբ պատանի աշխոյժ սիրով մտար ասպարէզ,
Կեանքի մէջը միայն մի բան ընտրեցիր,
Յեղափոխութեան քարոզիչ ուխտեցիր սրտով,
Մինչի վերջն այդ գերը լաւ կատարեցիր։

Հաստատ համոզմունքով, տոկուն անփոփոխ սրտով,
Երբ ոտքդ դրեցիր սուրբ ասպարիզում,
Ճշմարտութեան զէնքով զինուած կռուար չարաչար,
Յաղթեցիր մարդկութեան ցեցերին բազում։

Վառ երևակայութիւնդ համաձայն խելքիդ,
Բնական հանճարով օժտուած հերոս,
Ազնիւ զգացումներով լի, աղբիւր գիտութեան,
Ամբողջ գոյութիւնդ էր հոգի միութեան։

Դու ունեցար երկու հզօր ահեղ թշնամի,
Մէկը բռնակալը, միւսը չար խուժան,
Հաստատ համոզմունքով անվախ շարունակեցիր,
Քեզ չվախեցուց բանդ, մահու կախաղան։

Վշտատար կարեկից սիրտդ՝ դարտերու ծովից,
Ողբեր են լսելի ազգիդ դրութեան,
Հոգեբանօրէն կցկտուր ազդու խօսքերդ,
Բացատրութիւն է թշուառ գերութեան։

ԱՆՄԱՀ ՎԻՊԱՍԱՆ ԲԱՓՓԻԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սիրել եմ քեզ պաշտելու չափ,
Ով անմահ անհաս վիպասան,
Սիրոյդ գերին փափագանօք,
Երկրպագուդ եմ մշտական։

Քո «Կայծերդ» սկզբի դաս,
Յեղափոխեց կեանքս ու հոգիս,
«Սամուէլդ» խոր իմաստով,
Խիստ դրօշմով տիրեց սրտիս։

Աստուածամոլ Նարեկացու —
Նման մոլի գաղափարիդ,
Նեարդային լաց արտասուքով,
Մերձեցայ ներքին աշխարհիդ։

Աղաչել եմ կնոջս որ —
Միշտ երգէ ուժեղ երգերէդ,
Լոյս աւանդէ մանկիկներուս,
Աստուծոյ բերան դրքերէդ։

Անունդ ոսկեայ տառերով,
Քաշել եմ իմ պարանոցէն,
Աղնիւ պատկերդ կախել եմ,
Երեխոցս օրօրոցէն։

Ես կարծել եմ տիկին Աննան,
Բաղդի հասած մեծ երջանիկ,
Որ ապրել է քեզ հետ մէկտեղ,
Շունչդ է շնչել, ով չնաշխարհիկ։

Հազար էրնէկ, սերունդ ունես,
Գուցէ մաս ունեն քո կուրծքից,
Անյաղթ մարդու զաւակներ են,
Ծնուած գաղափարի կուռքից։

Մալումաթի, Սաբաներու —
Կարծիքներով կրիտիկոս,
Հայկունիներ չքացել են,
Փառքիդ առաջև, ով հերոս։

Եղիշէի նման մենակ,
Զը ճանչեցիր մէկ հատ Վարդան։
Գրիչդ բազմակողմանի,
Դու գրեցիր մեզի շատ բան։

Ստեղծեցիր բարձր մտքեր,
Հասկանալի սահուն ոճով,
Ընկեր մեծ մարդ — Արծրունու,
Կռուար խաւարի դէմ գրիչով։

Յառաջ տարար հզօր ձեռքով,
Գաղափարի դրօշակը,
Մերթ հնութիւն, մերթ նորութիւն,
Զարգացուցիր մեր ճաշակը։

Երգիչ Ցահրատը քեզ երբէք —
Չի մոռանայ, մեծ բարերար,
Ուր որ լինիմ միշտ Բաֆֆի,
Կը երգէ իմ տխուր քնար։

ԹԱԹՈՒԼԻ ՔՈՅՐ ԴՈՀԱՐԻԿԻ ԵՐԳԸ

Եղբայրս թուրքի բանդում,
Արև, լոյսի կարօտով,
Վայ իմ սև օրերին, վայ,
Ես ինչպէս հագնեմ կապեմ,
Նաշխուն շորեր նարօտով.
Աւաղ, իմ սև օրերին, աւաղ,
Ես դարտ ունիմ ասրերով,
Թողէք վառուեմ ցաւերով,
Վայ անբախտ եմ, վայ անբաղդ։

Ահա տարին լրանում է,
Չեմ ստացել մէկ նամակ,
Վայ իմ սև օրերին, վայ,
Տխուր ու տրտում սիրտս,

Զունի ուրախ ժամանակ,
Աւաղ իմ սև օրերին, աւաղ,
Ես կրակոտ երգերով,
Թողէք վառուիմ դարտերով,
Վայ անբաղդ եմ, վայ անբաղդ։

Ես ինչպէս ուտեմ խմեմ,
Երբ նա բանտում ծարաւ է, քաղցած,
Վայ իմ սև օրերին, վայ,
Ես ինչպէս խնդամ, պարեմ,
Մինթէ խիղճը ս է մեռած.
Աւաղ իմ սև օրերին, աւաղ,
Առանց նրան ոնց մնամ,
Լաւ է մեռնիմ վերջանամ,
Վայ անբաղդ եմ, վայ անբաղդ։

ԸՆԶՆԻՒ ՄԸՐԴԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԸՆԽՈՐՀՈՒՄ

Պատանի աշխոյժ մտաւ ասպարէզ,
Սիրեց ժողովրդին—կեանքը նուիրեց,
Բայց ժողովուրդը անգութ անարդար կերպով,
Հայհոյանքով նորան միշտ վարձատրեց։

Քաջ էր, նա երբէք չը վհատեցաւ,
Արդարութեան զէնքը ձեռին կռուեցաւ,
Լոյս սփռել խաւարին, գործել զոր գիշեր,
Կեանքը ժողովրդի օգտին խոստացաւ։

Ժողովուրդն ստեղծեց շատ խոչնդոտներ,
Յառաջ բերեց անգութ կերպով հալածանք,
Շատ անգամ բռնութեան հետ միացան,
Տուին իրանց սիրոյ զոհին բանդ, տանջանք։

Բաղդի դիպուածով մի կերպ ազատուեց,
Վերստին կրակոտ կերպով սկսեց,
Ներեց խուժանի անգութ վարմունքը,
Դարձեալ նրանց օգտին եռանդով գործեց։

Անթիւ հալածանքներ դիպան հերոսին,
Ինչպէս փոթորիկը դիպչի ժեռ քարին,
Նա կար և միշտ մնաց սուրբ հաւատարիմ,
Սիրած սկզբունքին, վեհ գաղափարին։

Այցելեց շատ տեղեր գիտութեան որդին,
Քարոզեց սէր ու գութ միութիւն ազգին,
Բծախնդիր մարդիք վատ բան չը գտան,
Գործքն համաձայն էր պերճախօս լեզուին։

Դարձեալ ծածուկ տեղեր բամբասանքի ծով,
Ցօրինեց խուժանը խռոված հոգով,
Որպէս հերետիկոս, որպէս ֆարմասօ,
Հալածեցին խեղճին տիրացու սրտով։

Կոյրերն էլ ազդուան խաւար ամբոխից,
Որոնց բնակարանն էր միշտ գինետունը,
Թուրքի ճաշակով, քէֆի մօտ խաղով,
Հայհոյեցին բարձր մարդու անունը։

Ոչինչ լաւ բան չկայ խաւար Ասիա,
Լաւ մարդին հայհոյանք թուք նախատինք կայ,
Վատերուն պատիւ կայ ամեն մարդի մօտ,
Լաւ մարդը կմեռնի միշտ հացի կարօտ։

Յայնժամ կը հաշտուի անգութ խուժանը,
Երբոր լսեց մեծ գործիչի վաղճանը,
Կը զղջայ իւր ստոր անգութ վարմունքը,
Ափսոսալով կը փորէ խոր գերեզմանը,

Հ. Բ. Վ. ԹԱԻԱՔԱԼԵԱՆԻ ԼԱՅԸ ՎԱՐԱԳԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Սիրոյ որբ եմ, անխիղճ մարդիք,
Մի՞ք դիպնի կոտորուած սրտիս,
Առանց այն էլ արդէն լի է,
Կսկիծներով խոցուած հոգիս։

Ես զոհեցի մօրս սէրը,
Իմ տանջուած հայրենիքին,
Մանուկ կեանքս ենթարկեցի,
Գազան թուրքերի վտանգին։

Վաղուց իվեր չէի յիշել,
Մօրս տխուր արցունքները,
Վարագայ սիրուն տեսարանը,
Յիշեցուց մօրս պատկերը։

Ա՜խ, նա այժմ թառամել է,
Զուրկ է վարդի պչրանքներից,
Ուրախ սիրտը սրգի փոխուել,
Հեռու բոլոր զարդարանքից։

Անցնում սև ու սուգ գիշերներ,
Տանջվում է անկեղծ սիրով,
Որոնում է կորած որդին,
Աղիողորմ արցունքներով։

Եռ յիշում եմ երբ եղբայրս—
Գալիս էր շատ հեռու տեղից,
Ի՜նչպէս յուզուած անուշ մայրս,
Գնում էր դէպ Կասպից ծովին։

Դողում սիրտը, փոխվում դէմքը,
Մերթ ծիծաղկոտ, մերթ լալագին,
Հասաւ ծովափ—խլեց որդին,
Կպցուց ուշագնաց կրծքին։

Միւս օրը հագաւ կապեց,
Իւր հարսնական շորերն անգին,
Մայրական վեհ զգացմունքով,
Տարաւ մեզ մայր եկեղեցին։

Մանուկ սիրտս թրթռում էր,
Եղբօր գալուց, մօր խօսքերով,
Ո՜հ, պաշտելի բոպէներ,
Զեմ մոռանայ ձեզ դարերով։

Հանգիստ խղճով ես դառնում եմ,
Իմ սիրելի սկզբունքին,
Թողել մայրական արցունքներ,
Ծառայել որբ հայրենիքին։

Որտեղ հազարաւոր մայրեր,
Տանջվում են իմ մօր նման,
Պէտք է մնամ հաւատարիմ—
Ես այս մտքին մինչ յաւիտեան։

ՆՈՒԻՐ ԿԱԹՈՂԻՆ ՄԱՅՐԻԿԻՍ

Զարթնում եմ խոր քնից, տեսնում եմ նստած,
Գեղեցիկ պատկերով անուշ մայրիկս,
Աղօթում է կեանքիս, ձեռքերն առ Աստուած,
Տարուած որդոյ սիրով քնքոյշ մայրիկս։

Արցունքոտ աչքերով նստած բարձիս մօտ,
Փայփայում — խնամում մինչև առաւօտ,
Արթուն պահապան է միշտ քնի կարօտ,
Ամեն մի գիշերով զգոյշ մայրիկս։

Ասում է, Տէր Աստուած, որդիս մեծանայ,
Զարգանայ հայ հոգւով — դիւցազն դառնայ,
Տառապեալ հայերին օգնութեան գնայ,
Կուզէ ուղարկել սրով դէպ Մուշ մայրիկս։

Բախտաւոր զինուոր եմ, մայրս աննման,
Զօր ու գիշեր ուշք ու միտքն է Տաճկաստան,
Պատմում է քաջերից կռիւ իսկական,
Տալիս է խօսքերով նմուշ մայրիկս։

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Մի հոգի կայ Աստծու պէս անկաշառ,
Եւ անխարդախ անարատ է մշտական,
Կեանքից ձեռք է քաշել խոէր թշուառին,
Նա հաւասար օրէնք ունի մարդկութեան։

Հզօր պաշտպան – բարերար է որբերու,
Աստուածացած ձեռքն է բժիշկ ցաւերու,
Դէմ է բռնութեան և բռնակալներու,
Նրա օրէնքն ունի արդար դատաստան։

Նորա զինուորներն են անվարձ անթօշակ,
Զինուած գաղափարով, ունեն նուրբ ճաշակ,
Յաղթանակ հաւատով, ունեն դրօշակ,
Ծառայում են զրկուած մարդկանց փրկութեան։

Այս ուժեղ հոգին է՝ ընկեր խեղճ մարդկանց,
Այժ ունի, բայց թագաւոր չէ վեհապանծ,
Զրզվում է մեծաւոր բառից չափազանց,
Նա հաւասար օրէնք ունի մարդկութեան։

Ֆահրատի պէս՝ ուժեղ հոգուն դաւանէք,
Հոգով սրտով սիրէք – մտքից չը հանէք,
Յեղափոխութիւն կամ դէմօկրատ անուանէք,
Նա մի ջանֆիտահ է կը փրկէ Հայաստան։

ԶԷՅԹՈՒՆՑԻ ԿՆՈՋ ԵՐԳԸ

Ես հանեցի սուր պատեանից,
Արտասուքով օծեցի,
Տրտմաւ անուշ սիրականս,
Երբ իմ ողբը կարդացի,
Նա երգուեց իմ սիրովս,
Զինայել թուրքերուն,
Այս պալմանով աշխոյժ քաջիս,
Սուր հրացան յանձնեցի։

Ոգևորած կրկնեց քաջս,
Ո՞ւմ կապասենք, վայ մեզի,
Նա բաժանուեց մոնչալով,
Ինչպէս կորիւն առիւծի,
Խլեց բերդեր, այրեց գեղեր,
Սուլթանն առաւ այս բօթը,
Ծակեց չար սուլթանի քիթը,
Ձենճերային գարշ օդը։

Երբ հասաւ մեր յաղթող լուրը,
Մեծ մարգասպան սուլթանին,
Նա կատաղեց—ինչպէս գազան,
Ձեռքը զարկեց ղուռանին,
Հրամայեց իւր զօրքերին,
Գնալ ջնջել Զէյթունը,
Ֆանատիկոս թաքրիրներով,
Ոտքի հանեց խուժանին։

Եկան լացկան լատիֆներով,
Պարփակեցին մեր լեռները,
Սովալլուկ սառան, կորան,
Շարժեց Զէյթուն իւր բուքեր,

Փրփրալով որպէս հեղեղ,
Մեր ժայռերից դէպի ծով,
Քաջս գնաց հսկաներով,
Յաղթեց, դարձաւ ապահով։

Զարդեց, եկաւ գերիներով,
Անմահացուց անունը,
Սև մազերով սրբեմ փայլուն,
Արէն կաթուած արիւնը.
Հանգստացնեմ սրտիս վերայ,
Շխանգարեմ իւր քունը,
Մեղմ համբոյրով, կեցցէ կրկնեմ,
Ազատուած է Զէյթունը։

Ատուած սիրէք, հայ աղջիկներ,
Եկէք ուխտենք միասին,
Այսուհետև էլ չսիրենք,
Կռուից փախչող վախկոտին.
Խիստ զզուելի կերպով նայենք,
Ոսկոյ սիրով մեռնողին,
Համբուրի տեղ՝ թոյն կամենանք,
Թուրքից վրէժ չառնողին։

Տիրանիս պէս քաջեր սիրէք,
Արժանի են մեր սիրոյն.
Որոնք գիտեն սրով պաշել,
Կին չեն յանձնել թուրքերուն.
Ես քեզ մեռնիմ, Տիրան, Տիրան,
Փառք Զէյթունի, սիրական,
Հազար էրնէկ ամեն հայ կին,
Մարդ ունենար քեզ նման։

Բաբգենիկս ոտքով օրրեմ,
Վառօդ մաղեմ ձեռքերով,
Վատ Սուլթանի հետ գործ ունինք,
Դեռ հայ ազգը չէ ապահով.
Կգայ գարուն, մենք կսկսենք,
Նոր գործ, նոր կռիւ թուրքի հետ,
Մեր լեռներից արիւն պէտք է—
Հեղայ ինչպէս Գեհոն գետ։

ՄՈՎԱՅԻ ԳՐԻԳՈՐԻ ԵՐԳԸ

Ձեռ թողնի որ հանգիստ մնամ,
Անուշմես սուգ—ազգու հոգոց,
Դարձել ես մի կրակ ու բոց,
Ես ինչ անեմ՝ սիրտս քեզի։

Ճշմարտութիւն ես որոնում,
Ոչինչ արդար բան չես գտնում,
Մարդկանցից զզուանք ես յայտնում,
Բա ուր տանեմ՝ սիրտս քեզի։

Եկ բարձր սարեր անցկենանք,
Անուշ Վաթանին բարև տանք,
Բինգեօլ—Սարէսիփան գնանք,
Գուցէ շահեմ՝ սիրտս քեզի։

Այնտեղ էլ կան քիւրդեր, թուրքեր,
Ցառաջ կուգան նոր նոր ցաւեր,
Դու չես սիրի անխիղճ բաներ,
Ես ուր տանեմ՝ սիրտս քեզի։

Մի երկիր կայ սուրբ – սրբութիւն,
Ուզածիդ պէս սէր միութիւն,
Այն է խրոխտ, անյաղթ Ազգութիւն,
Անդ կըտանեմ սիրտս քեզի։

Ազատ – անկախ արդուզարդով,
Ազգութիւն կապրինք մենք անվրդով,
Փորձուած մարդկերանց խորհրդով,
Անդ կըպահեմ սիրտս քեզի։

ԵՂԲՕՐ ԽՐԱՏ

Հայ աղջիկը անհոգի է,
Անտարբեր ամեն մի գործի,
Քրանտ կոկուել զուգուելուց դուրս,
Ոչ մի ուրիշ աշխարհ չունի։

Նա մի անմեղ թիթեռնիկ է,
Զարն ու բարին չգիտեցող,
Մօտայի կուռք, զարդի ստրուկ,
Ոսկու համար հոգի տուող։

Հայ աղջըկայ սէրը սուտ է,
Նայած ով շատ զարդ կբերէ,
Ազգակործան վաշխառուն էլ,
Զարդի համար նա կսիրէ։

Բարձր միտք, ազնիւ գաղափար,
Զոհ կբերէ հարստութեան,
Շռայլութեան միշտ ենթակայ,
Նա չի սիրէ գրադարան։

Թուիվրոի - մէկ գունտմ միս,
Սպառողի դեր կատարող,
Անպէտք իւր մարդի գործերուն,
Աննպատակ ցոփ կեանք սիրող։

Տեսել եմ բարձր զարգացած—
Դիպլոմաւոր շատ աղջիկներ,
Նրանք էլ տգէտներից վատ,
Անգործ են, չունին անկեղծ սէր։

Հայ կը կոտրեն, ազգ կը ջնջեն,
Չունին գործ գործելու բաղձանք,
Այդ լճացած – հոտած կեանքից,
Չի լսվում անկեղծ հառաչանք։

Կը դառնան անպէտք ծնողներ,
Տղայք կունենան փալասանկ,
Շնորք – կրթութեան փոխարէն,
Կսովրեցնեն վատ հայհոյանք։

Հարուստի կինն էլ զբաղուած,
Ապրաշչիկները կը հաւաքէ,
Մօտան ուսումնասիրել է,
Նոր տարազով շոր կը կարէ։

Քանի մեր իգական սեռը—
Ընկած է, մենք չենք բարձրացնէ,
Մեր ազգի բոլոր չարիքը,
Տգէտ մայրերից կը բղխէ։

ԻՐԱՒԱՅԻ ԲՈՂՈՔ

Բռնութեան դէմ կռուող հոգիս,
Վախն ինչ բան է՝ չգիտէր,
Ազատութեան կեանքի խաչը,
Նա տանում էր անվեհեր։

Կոյր ամբոխից արհամարհուած,
Բռնակալից հալածուած,
Հպարտ հոգիս լաղթող կռուով,
Միշտ բռնութեան դէմ կեցած։

Այժմ վախկոտ և երերուն,
Մինչև անգամ յուսահատ,
Խորտակեցին ուրախ սիրտս,
Սպանեցին վառ հաւատ։

Հէյ վախ, անցան լաւ օրերս,
Վէրք ունեցայ բիւր հազար,
Ընկերներից խոցուած սիրտս,
Երբէք չունի դեղ ու ճար։

Բռնակալն ինձ չ'տապալեց,
Ընկերներն ինձ կոտրեցին,
Ժողովրդին զոհուած սրտիս,
Անբուժելի վէրք բացին։

Գնաց իմ փառք ու պարծանքը,
Այժմ սիրոյ որբ ապրում,
Անցեալըն է մի մասնաւոր,
Տխուր սիրտս սփոփում։

Նէմրութի սարում ճարտար Յակոբն ասում է

ՍԵՐՈԲ ՓԱՇԱՅԻՆ

Զոկեցի անհատ քաջերը,
Անցայ ընդարձակ դաշտերը,
Հասայ ձնապատ լեռները,
Հոգիս, քեզ տեսնելու եկայ։

Սուքայ սարից մինչ Ղաթաւի,
Հոգիս մէջս չէր դադարի,
Դիպայ անթիւ սարի քարի,
Ազատ գիրկդ ընկնելու եկայ։

Վանայ ծովէն մինչև Տարօն,
Նէմռուութից կը հսկես Սասուն,
Մէկդին Յակովբ, մէկդին Սօսօն,
Կարօտիս առնելու եկայ։

Դու մեր կեանքը, դու մեր բերկրանք,
Սուրբ արիւնդ է ազգի փրկանք,
Դաշնակցութեան փառք ու պարծանք,
Երկու համբոյր տալու եկայ։

Դրօշակի Աղբիւր—Սերոբ,
Սիրած գործիդ զոհն է Յակոբ,
Դաշնակցութեան զէնքերն ամփոփ,
Միայն քեզ յանձնելու եկայ։

Պետերպուրգից մինչև Շիրակ,
Ծանօթներ քաշում են փափագ,
Յայտնի մարդկերանցից նամակ,
Յատկապէս քեզ տալու եկայ։

ՍԱՔՕՅԻ ԲԱՆԴԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Այն օրը որ ես քեզ տեսայ,
Հոգւոյս բարեկամ ընտրեցի,
Քո պատճառով շատ սիրեցի,
Որտեղ տեսայ Սև—Քարեցի,
Սեւ—Քարիդ զուրբան Սաքոյ ջան
Սաքոյ ջան հայ, Սաքոյ ջան վայ,
Սաքոյ ջան՝ ջան, աղբէր ջան։

Բոբիկ ոտքով ուխտ գնացի,
Փառք Աստծու, մուրազիս հասայ,
Ա՜խ, ինչ երջանիկ օր էր որ—
Քեզ ըսկզբում Դերեկ տեսայ.
Դերեկիդ զուրբան Սաքոյ ջան և այլն։

Հարցրեցի վարդապետին,
Ասի, որտից է արեղան,
Ասաւ, արեղայ չէ, հոգիս,
Զինուոր է այդ սիրուն տղան.
Զինուորիդ զուրբան և այլն։

Պատարագից վերջ՝ հրացան,
Գնացինք զարկելու նշան,
Հայը Թաւաքալ, Պետո, Կարօ.
Ի՜նչ սիրելի ընկերներ կան.
Ընկերիդ զուրբան և այլն։

Թաճիր Սաքօ—Ասլան Բալա,
Տաղ—Քեարամի կարմիր արիւն,
Ժողովուրդը պատմութիւնով,
Քեզ տուել է հազար անուն։
Անունիդ զուրբան և այլն։

Դուշման – Դարայ, Ազբակ, Գեաւառ,
Սարայ, Խիզան, Վան, Սպարկերտ,
Վարդանի հետ ահ ու սարսափ —
Տարածել էք մինչև Խարբերդ.
Հայոց տաղաւարի արև.
Արևիդ զուրբան և այլն։

Վանայ Վալին Մշուց էլ խիստ,
Անթիւ զօրքեր, բերդ խրոխտաբար,
Չկարեցան քեզի բռնել,
Որովհետև ձեռքդ զէնք կար.
Զէնքերիդ մատաղ և այլն։

Գործը այդպէս էր պահանջում,
Քեզ ճամբեցին զէնքից զրկուած,
Հազարներու դէմ դնող մարդ,
Քեզ մի լիմար քիւրտ է բռնած.
Վանայ խրոխտ բերդի փոխան,
Մշոյ խարխուլ բանդն են դրած.
Լսել, մայրիկդ լալիս է,
Մայրիկիդ զուրբան և այլն։

Երկար յաղթութիւններից վերջ,
Այժմ էլ տանջանքին դիմացիր,
Անհատ ջանֆիտահ լինելու,
Մեծ մարդ կոչմանն արժանացիր,
Այդ դէպքում էլ պատմութեան մէջ,
Անհատ տոկուն փառքն ստացիր,
Անհատիդ զուրբան և այլն։

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋԸ

Գնաց խաղաղութիւնն անարգար ձեռքով,
Ժամանակը ճնշում է անխիղճ կերպով,
Քնէդ արթնցի հայ, զինուիր նոր զէնքով.
Հարկաւոր է վառօդ,
Պաշտպանուի անշփոթ,
Անզէնք մնալն է ամօթ,
Անզէնք մարդիք՝ մարդ չեն։

Յալտնի Դումանն է պաշտպանում ազգին,
Կազմել է իւր կռուի մարշրուտն առանձին,
Մտնենք գրօշի տակ, զարկ տանք մեծ գործին.
Կռուենք հզօր ջանքով,
Անձնուէրի կեանքով,
Դիմադրենք զէնքով,
Անզէն մարդիք՝ մարդ չեն։

Անդրանիկի թիկնապահներն անվհատ,
Սէյտօ, Պօղոս, Սարգիս, Հաջի, քաջ Սմբատ,
Կայծակ, Առաքել, Աւետիս, վեհ Մուրատ.
Քեռի Ֆահրատ Զանկեզօր,
Սեպուհ Արշակ հզօր,
Բոլորս լինինք զինուոր,
Անզէն մարդիք՝ մարդ չեն։

Սև - Քարեցի Սաքօս իւր անուանն արժան,
Այս անգամն էլ գործեց անցեալին համաձայն,
Փրկեց հայ պատիւը հերոսի նման.

Մատաղ հայ քաջերուն,
Նզովք հայ հարուստներուն,
Թող զոհ լինին թուրքերուն,
Նրանց ափսոսողն էլ մարդ չէ։

ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒԼ — ԽԱՉՈՅԻՆ

Արդեօք մտաբերում են ինձ իմ ընկերները,
Մի անօգնական ջանֆիտահ եմ թուրք բանտում.
Գոմաձորի կռուի վերջին դիշերը,
Ձեռք ընկայ ու տանջվում եմ թուրք բանտում։

Դեռ չգիտեմ հզօր Խանը ո՞ւր գնաց,
Վեհապուն Նաւրուզը արդեօք ո՞ւր մնաց,
Ցաւ ու կսկիծ — հոգսեր սրտիս են դիզուած,
Արև, լուսի կարօտ խոնաւ թուրք բանտում։

Սով ու սարսափ, ծեծ ու տանջանք, բռնութիւն,
Հալումաշ են արել կեանքս օրն իբուն,
Մահուան կախաղանով կուզեն մատնութիւն,
Դեռ մաքուր է տոկուն հոգիս թուրք բանտում։

Իսէր Աստու, քաջեր, մեռէք քաջի պէս,
Երբէք բռնակալի ձեռքը մի՛ք ընկնի,
Ես տեսայ՝ մարդատեաց Ներոնն էլ չտեսնի,
Անելեակայելի անգութ բան է թուրք բանտը։

Ի՞նչ աշխուժով Ախալցխայից դուրս եկայ,
Հազար ափսոս, Նպատակիս չը հասայ,
Արշակ, Յակոբ, Ասլան, Ստէփ, Մատոյ չտեսայ,
Կարօտով էրվում — խորվում եմ թուրք բանտում։

Երգէ, երգիչ Ֆահրատ, Ուսուլ Խաչոյին,
Երգէ, դարալի պատմութիւնս թարմ մնայ,
Ով մոռնայ—չմոռնայ, դու չես մոռանայ—
Տանջուած ֆիտահին, թուրքի բանտերում։

ՎԱՂԱՐՇԱԿԻ ՑԻՉԱՏԱԳԻՆ

Աղքատ ընտանիքից ծնուեց,
Հարուստ փարթամ վեհ հոգին,
Ազգի վիշտ ու տառապանքը,
Նա մոտ զգաց իւր սրտին։

Մալը Աթոռը իւր մեծ դիրքով,
Բան չըտուեց մեր գործին,
Վաղարշակի մուրթ պատուալը,
Շատ բան տուեց հայ դատին։

Գինեվաճառ դրօշի տակ,
Նա միշտ մնաց անարատ,
Բոլոր քաջեր դէպի նրան,
Միշտ ունէին վառ հաւատ։

Բայց մեր անխիղճ ժողովուրդը,
Այդ սուրբին էլ բամբասեց,
Երբոր տեսաւ կարմիր արիւն,
Խիստ զզջալով՝ վայ ասեց։

Որքան պրոֆեսոր Մարրը,
Գիտութիւնով բարձրացած,
Վաղարշակն էլ այնքան Հայոց -
Գործի մէջն էր զարգացած։

Մահ շալակած ման էր գալիս,
Վստահ, անվախ — համարձակ,
Հայ ազգի ազատութիւնը,
Մտածում էր շարունակ։

Նաբաթներով մութ անկիւններ,
Արև — լուսի կարօտով,
Նա գնում էր ալ — եշիլին,
Կարօտի պէս իւր ոտով։

Նրա ձեռք բերած կոյսերը,
Գրկից խլում էր շուտով,
Հանում էին Սասուն, Զէյթուն,
Երկար տխուր պատմութիւնով։

Հազար Էրնէկ եպիսկոպոսք,
Հայ հարուստն էլ նրա պէս,
Սիրտ ու նամուս ունենային,
Գործը չառնէին անտես։

Երկար տարի մենք կը լիշենք,
Քաջ Վաղարշակ Մինասեան,
Սիրած ընկերների հետը,
Մէկտեղ իջաւ գերեզման։

Էրնէկ նրանց, շուտով մեռան,
Մեր սև օրը չը տեսան,
Հայ գրիչը սուրը զոհերին,
Կարծես դարձել է դաւաճան։

ՀԻՆՈՒՈՐԻ ՍԷՐԸ

Երեք օր է, որ չեմ տեսել նազելիս,
Երեք օրը տարի դարձաւ, սիրելիս։

Արի գնանք քեզ հետ այգի մանգալու,
Քո թշներուդ նման խնձոր քաղելու։

Ելնենք Օրգով—նայենք դէպի Սուրմալի,
Տեսարանով կեանքդ հրճուի աւելի։

Առնաղբիւրով լուսա սիրուն պատկերդ,
Ասա—լսեմ, ինձ կեանք տուող խօսքերդ,

Առանց քեզի ես չեմ ապրի—կը մեռնեմ,
Յոյս տուր, հոգիս, գուցէ կարօտս առնեմ։

ԱՒԵՏԻՔ ՄԱԼՕՅԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երանի քեզ սիրուն Բասեն,
Որ նոր ուխտատեղի դարձար.
Վաղամեռիկ սուրբ հոգալիս,
Անմահ մահովը սրբացար։

Սրթըհանից Դալիբաբա,
Տեղատեղի կանգնիր նշան,
Որպէս քաջի ընկած երկիր,
Լինի ցոյցեր պատուոյ արժան։

Թող առ այժմ մի կոպիտ քար,
Լինի վկայ սուրբ Նշխարին,
Բայց ապագան ոչն կ'որոշէ,
Որպէս մեծ մարդ՝ հայ աշխարհին։

Անույշ հովի գուրգուրանքով,
Մնայ անշուք շիրիմն ամպով,
Նոր սերունդը շուտով նորան—
Կըփայլեցնէ գմբէթներով։

Թող այժմեանից բնութիւնն էլ,
Իղձ ներշնչէ հայ աղջկանց,
Երգեն անմահ նահատակիս,
Մեծ անունին՝ երգ գիւցազանց։

Թող ամենքին յայտնի լինի,
Որ նա Շիրակայ ծաղիկն էր,
Հոգին անուան հետ համաձայն,
Դաշնակցութեան Աւետիքն էր։

Մեծ կսթողը՝ մեծ շիրիմին,
Արձանագիրն Մալոյեան,
Երկսեռի դպրոց յիշատակ,
Լինի քաջիս անուանն արժան։

ՀՕԿ ԳՈՒՐԳԷՆԻ ԵՐԳԸ—

(Բաղտասար Մալիեան)

Իմ անուշիկ քոյրիկս,
Կանչէ թող դալ մայրիկս,
Տամ իմ վերջին բարևս,
Կանչում է հայրենիքս։

Գնում եմ օգնելու, կռուելու,
Ցաղթելու լուսով,
Դէմ դնել քաջի պէս,
Թշնամուց փրկել հայրենիք։

Բացուել է սուրբ դրօշակ,
Գնանք խմբուենք նրա տակ,
Սերոբ փաշի նմանակ,
Լինինք ազնիւ նահատակ։

Ուխտել եմ, զինուել եմ,
Անձնուէր քաջի պէս կռուել,
Ազատութեան կռիւներով—
Փրկել մեր հայրենիք։

Այնտեղ թուրքն է մեզ ջնջում,
Այստեղ ուրիշն է զրկում,
Համարում են մեզ մրջիւն,
Ամեն ինչ ձեռքից խլում։

Վերջ դընել այս չարքաշ,
Ստրուկ, որբ կեանքն լուսահատ,
Կամ մեռնել, կամ ապրել,
Լիազօր մարդի պէս ազատ։

Արտէս արիւն է գնում,
Երբ օտարն է մեզ ճնշում,
Մեր պապերի սուրբ հողում,
Մեր դուշմանն է զօրանում։

Մինչ երբ տանեն այս անասնական—
Դրութիւնն անվերջ,
Թող վառուի մեր մէջ ազատութեան—
Կրակը անշէջ։

ԽԱՆԱՍՕՐԻ ՎԻՐԱՒՈՐ ՁԻՆՈՒՈՐԸ

Ես ընկել եմ քիւրտերի մէջ,
Արնաշաղախ վէրքով լցուած,
Ինձ կարծել են մեռած,
Թողել գնացել են.
Ես այս արեան դաշտում,
Անտէր անտիրական,
Կիսամեռ թշուառս ինչ անեմ,
Մնացել եմ անօգնական։

Երբ նայում եմ լուսնի լուսով,
Հազարներով փռուած գետին,
Սատկած և վիրաւոր,
Նարաք բէգի քուրտեր,
Մրմնջում են մեղամաղձոտ,
Հէք դլոներ,
Տեսարանն ուրախալի էր,
Թեթևանում էր իմ վշտեր։

Քրտական լաց—կոծի միջից,
Ցանկարծ լսեցի մայրիկ ջան,
Ա՜խ, այդ ազգու—
Հառաչանքն էր հայկական,
Գնացի դէպ նորան,
Տեսայ՝ ընկերքս էր,
Զինուոր էր նա վերք ստացած,
Արեան դաշտն ընկել ինձ նման։

Զեռք մեկնեցի մտերիմիս,
Ասի, նայիր չորս բոլորդ,
Տես և հոգի ստացիր,
Հայի յաղթութիւնից.
Մեծ է ջանքիտահը,
Փառք իւր դրօշակին,
Յաղթութիւնով ոգևորուած,
Հեռացանք այն արեան դաշտից։

Երուսաղէմի դաշի պէս,
Տեսէք վերքերուս տեղերը,
Հաւատացէք հայ զինուորի—
Ուղղութիւնը,
Որ չէ խնայում ձեզանից—
Իւր արիւնը,
Ազատութեան զոհերն ենք,
Կարեկից անձնուէր սրտով։

ԳՐԻԶԻ ԵՒ ԿԱՐՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մնաք բարով սուրբ ընկերներ,
Ձեզ թողնում ենք դաշտն արեան,
Ուր որ հայ կան և դուք այնտեղ,
Ձեզ կը՝ողբանք մինչ յաւիտեան։

Երկաթէ մարդ հաստատ կամքով,
Յատուկ ֆիտահ—վեհ հայդուկ,
Դուք հոյակապ կռուաք հոգւով,
Մարդկանց ուժիցը վեր—յանդուգ։

Սիրած Պետոյի փոխարէն,
Մէկ ցեղ ջընջուեցաւ հազարով,
Վրէժ առաք հերոսաբար,
Հանգստացաք արդար խղճով։

Ձեզ թողինք բաց երկնքի տակ,
Մի՛ք նեղենայ ընկերներ,
Բայց դուք ամեն հայ զինուորի,
Սրտին ունէք մեծ գերեզման։

Ձեզ թաղեցինք մեր հոգու մէջ,
Արձանագիրը մեր ճակտին,
Կարդայ անհաւատ հարուստը,
Լաւ ճանաչէ քաջ ֆիտահին։

Թող Դաշնակցութեան Եղիշէն,
Ողբա Գրիշ Լոռեցեան,
Աւարայրի փոխան՝ Աղբակ,
Տայ նոր Վարդան մեր պատմութեան։

Արիստակէս Զօհրիեանը,
Քեզ հետ ընկաւ ահարկու,
Անմենքդ մի երկրի պարծանք,
Անշուշտ գտաք դուք իրարու։

Նահատակներ, ձեռք վերուցէք,
Անէծք թափէք անգութին,
Ով որ հայ է, չի մասնակցի,
Ձեր զոհ եղած բարձր գործին։

Կռէք, կոփէք, ժանգ՝ու երկաթ,
Սաստկացուցէք հուր, հնոց,
Դաւաճանի կնքով կնքէք,
Ձեզ չսիրող անխիղճ մարդոց։

ՄԵՐ ԳՐԻԳՈՐԻՆ

Դաշնակցութեան վեհ սուրհանդակ,
Ամեն երկրից ունիս նամակ,
Աստուած սիրես, կերթաս Շիրակ,
Միլիմին բարև արա։

Ասա քեզ կաղօթէ Բասեն,
Որ Աստուած փրկէ օրհասէն,
«Ուսուլ—Էրմանի» էլ կասեն,
Միլիմին բարև արա։

Հայոց գործին է համակուել,
Դաշնակցութեանն է ենթարկուել,
Ձէնքերի հետ է պսակուել,
Միլիմին բարև արա։

Ասա՛ քո քոլրիկ Գայանէն,
Համբոյր զրկեց իւր բերանէն,
Չէ փոխուել ուխտ ու պայմանէն,
Միլաիմին բարև արա։

ԶԻՆՈՒՈՐԻ ՍԷՐԸ ԻՒՐ ՍԻՐՈՒՀՈՒՆ

Եկ համբուրեմ կուրծքդ բարձր նազելիս,
Ոգևորուած սիրտդ գուցէ դադարի,
Գործեցիր դրօշակ, յանձնեցիր քաջիդ,
Որպէս զի այդպիսով իղձդ կատարի։
—Արդէն կատարուած է իղձդ, իմ աննման,
Վերջին յաղթութիւնով, քեզ ենք պարտական։

Գործած դրօշակդ երբ փողփողում էր,
Կարդացուում է Աստծոյ հաճոյ խօսքերդ,
Կռուին ուղեկցում էր չքնաղ պատկերդ,
Կուզէի որ աշխարհ դառնար արեան ծով։
—Մի ամբողջ ցեղ մատաղ արինք ոտներուդ,
Այս բոլորը կատարուել է քո սիրուդ։

Գգուեցիր զինուորներն, ինչպէս վեհ ծնող,
Թրթռում էր սիրտդ, ո՛վ դու սուրբ գործող,
Արշաւանքը եթէ անցնէր անյաջող,
Վերջ կտայիր կեանքիդ անո՛ւշ գիցուհիս։
—Խնդա՛ աստուածուհիս, յոյսեր տարածէ,
Իսկապէս յաղթել ենք, էլ մի՛ մտածէ։

Ջնջուեց Մարգիկ ցեղը, որ սիրտդ էր վառել,
Որի գոյութիւնը քեզ՝ սուգ էր պատճառել,
Պատժուեց լրբութիւնն, բարձրացաւ հայը,

Ազգեր ճանաչեցին մեր զէնքի փայլը։
—Սուլթանի ֆարմանը, ահա դիր ոտքիդ տակ,
Վատ Շարիֆի թուրը պահէ յիշատակ։

ՍԱՍՈՒՆԻ ՎԻՃԱԿԸ

Դուշմաններ չորս կողմից շրջապատել են մեզ,
Կարօտ ենք օգնութեան, մի մեռնում ենք անպաշտպան,
Լողում ենք անյատակ արեան ծովերի մէջ,
Երկինքն էլ կարծես թէ՝ մեզնից ձեռք վերառել է,
Թշնամին վառօդի ծուխով բռնել է արեգակի դէմ,
Մնացել ենք. զթութիւն, օգնութիւն,
Փրկութիւն մի տեղից, չկայ մեզ.
Մի լար, մի լար, քաջ Մուրատ,
Պահիր քեզի անվհատ,
Արտասուքդ սովից շատ,
Ազգում է զինուորներուդ,
Իսէր Սասնոյ լաց մի լինի,
Հառաչանքդ է սրտագին։

Անդովիկ – Անդովիկ, պաշտպանէ քաջերուդ,
Ամենքից յոյս կտրած, յոյս դրած ենք քո ժայռերուդ,
Թռչուններ բուներից, եղջերուք անտառից,
Հրացանների ձայնից, փախչում են դէպի դաշտ.
Իսկ անօգնական Սասունցին, չունի փախուստի ճանապարհ։
Մատնուած սովին առանց հաց,
Հալածուած, տանջուած,
Զէնք ձեռին կռուում է,
Գազանական շէյխերը,
Արիւնարբու զօրքերով,

Երգուել ու եկել են,
Որ մեր անմեղ կոյս ու հարսանց,
Արիւններով լողանան,
Դրդուած չար սուլթանից։

Էրզուրում աւերակ, Բաղէշն էլ փլատակ,
Գաղթաւէր Բուլանուխն էլ, չի տեսնում մեր վիճակ,
Տապվումենք կրակով, քանդում են մեր տունը,
Օգնութիւն, օգնութիւն, ախ, այրում են Սասունը,
Մեր լաց ու կոծ ու հառաչանք, ժայռերն են
գտնում արձագանք։

Չկայ լսող... աւերակ, հիմնատակ—
Արին մեր քաջաց վայր Սասունը,
Ելիր, ելիր քարայրէն,
Մուրատ—առիւծի կորիւն,
Հազար ամօթ մեր հայերուն,
Որ նրանք էլ Եւրոպի պէս—
Չը գթացին Սասունին,
Զոհուեց մի պատառ հացի։

ԵՐԿՈՒ ՀԵՐՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեր երկիրն է որբացել,
Զկան երկու քաջերը,
Սերոբ, Յակոբ ասելով,
Լաց են լինում հայերը.
Ա՜խ, ազնիւ նահատակներ։

Երկու կտրիճ ազգական,
Մեր երկրի փառքն էին,
Ծերունիների օրհնէք,
Հայ աղջկանց երգն էին.
Վ՜ախ, ազնիւ նահատակներ։

Մէկ ազգական Բասենից,
Մէկը Նէմռութ — Սասունից,
Գործում էին անշփոթ,
Փրկելով մեզ ցասումից.
Ա՜խ, ազնիւ նահատակներ։

Վա՛յ մատնիչք, ձեր տունն աւրի,
Ի՞նչպէս դարձաք դաւաճան,
Մեռցուցիք մեր պաշտելիք,
Սուգ սփռեցիք Հայաստան.
Վա՛յ, ազնիւ նահատակներ։

Ջանֆիտա՛հներ, սէրն Ասսու,
Սուր շողցուցէք ահռելի,
Ջնջէք վատ մատնիչներուն,
Տանջէք, զրկէք սոսկալի.
Վրէժ առէք քաջեր։

ԶԻՆՈՒՈՐԻ ՆԱՄԱԿը

Ա՜խ, նազելիս, չեմ մոռացել,
Գնաս բարեաւ կրկնեցիր,
Աստուածային ձեռքերովդ,
Երկու կապոց ինձ յանձնեցիր,
Ես յիշում եմ, ինչպէս ձիւնա-
Փայլ մատներով կապեցիր,
Կեանքից ձեռք քաշած հայդուկի —
Հոգին այնտեղ ամփոփեցիր։

Մէկ կապոցը գրոշակ էր,
Այն պարգեցի Սարէ — Սիփան,
Պատկանում էր ընդհանուրին,
Իրաւունք էր նրա բացման։

Դարձաւ կռիւների սկիզբ,
Եւ յաղթութեան հզօր նշան,
Փողփողում երկրի խորքը,
Մահ տարածել ողջ տաճկաստան։

Մէկ կապոցը որ շորեր էր,
Հազարաւոր նաշխ ու նիկեար,
Լուսաշաղ ձեռքերով ձևել —
Կարել ես հասակիս յարմար։
Ես մոլեռանդ մի ուխտաւոր,
Որպէս հին սուրբերի մասունք,
Այդ ճաշակով յիշատակդ—
Պահպանում եմ իմ սիրահար։

Սուլթանի հոգուցը կեղտոտ—
Շապիքը կպել է կուրծքէս,
Կապոց քանդել, նոր շոր հագնել,
Չէ անցնում տանջուած մտքէս։
Թող զէնքերս մաքուր լինեն,
Փաշան մահ ստանայ ձեռքէս,
Կռիւ, սարսափ, մահ ու վրէժ,
Լսողը հասկանայ երգէս։

Կը մնամ ես երկար տարի—
Հաւատարիմ նուիրական զէնքին,
Մինչև որ էլ ոչ մի վտանգ—
Չէ սպառնում հայի կեանքին։
Անուշ կոյսս—իմ սիրուհիս,
Ես կհասնեմ իմ բաղձանքին,
Երբ կազատուի թշուառ հայը,
Վերջ կը դրուի դառ տանջանքին։

Այն ժամանակ կերթամ Նեմռութ,
Կլողամ բնական տաք—ջրերով,
Յոգնած մարմինս կը զարգարեմ,
Քս յիշատակ թանկ շորերով։
Կգամ քեզ աւետիք տալու,
Սուլթանին յաղթող զէնքերով,
Ուշք գնալու չափ զգածուած,
Գիրկդ կընկնեմ կարօտ սիրով։

ԻՄ ԴԱՒԱՆԱՆՔԸ

Երուսաղէմը ծէնեվում,
Էջմիածինը Սասունն է,
Աստուածաշունչս գերութիւնից—
Փրկուած ազգաց պատմութիւնն է։

Նիկիայի ժողովքն է,
Բրիւսէլի նոր կոնկրէսը,
Վասպուրականն Առաքելոց,
Նահատակաց սուրբ կրկէսը։

Քրիստոնէութիւնս լրացնելու,
Եղել եմ յեղափոխական,
Լուսաւորչական կրօնս—
Դարձել է զուտ Դաշնակցական։

Իմ կրօնս ողբեր ունի,
Թուրք մարդակեր բռնութիւնից,
Իմ հաւատս զրզուանք ունի,
Հայ հարուստի անխիղճ տանից։

Իմ սատանան թիւքերըն են,
Լէգէօնըս չար սուլթանը,
Դժոխքըս է Ելդըզ պալատ,
Բելիարս հայ դաւաճանը։

Եկեղեցիս բուրժուայի—
Դէմ կռուող ուսումնարանը,
Ապագայի դրախտըս է,
Ազատ—անկախ Հայաստանը։

ԻՄ ՍՐՏԱԿՑԻ ՍԷՐԸ ԴԷՊԻ ԻՆՁ

Քեզանից առաւել բարձր սրբութիւն—
Չկայ այս աշխարհում թշուառիս համար,
Դու իմ վեհ սրբուհի, կեանքիս բարերար,
Քո լուսովն եմ ապրում, ով իմ սիրահար։

Երկնքի Աստուածն էլ քեզ չափ գութ չունի,
Չրկել է չտեսնեմ լոյս ու արեգակ,
Բայց դու չես զրկել քո վեհ հովանուդ տակ,
Պահում ես հալածուած անբաղդիս մենակ։

Երբ խաւար ամբոխը յուզուած անարդար,
Կամենում էր ինձ քարկոծել վրէժով,
Իսկ դու, վեհ սրբուհիս, հասար օգնութեան,
Հին դարերում պաշտուած Աստղիկի ուժով։

Ազգ, երամ, բարեկամ թողին հեռացան,
Ճշմարտախոս մարդուն ով կլնի պաշտպան,
Բայց դու չհեռացար, փրկիչս աննման,
Արտասուքն աչքերիդ հասար օգնութեան։

Վերջապէս այս տաղտուկ ձանձրալի կեանքը,
Էլ չեմ կարող տանել, ազնիւ սիրուհիս,
Սկզբունքի դաւաճան վատ ընկերները,
Մարել են եռանդս, մաշել են հոգիս։

Ոչ ազգս, ոչ Աստուած եղաւ կարեկից,
Միայն դու ես կարեկիցն իմ սիրական,
Դու ես ատէ անխիղճ ամբոխի նման,
Որ մեռնիմ ազատուիմ, հանգչիմ յաւիտեան։

ԻՄ ՍԻՐԵՑԵԱԼ ԱՄՈՒՍՆՈՒ ԱՆՄՈՌԱՑ ՑԻՉԱՏԱԿԻՆ

Անցան շատ տարիք, սև ու սուգ օրեր,
Քեզ չուրախացուցի ապահով ձեռքով,
Բայց դու, իմ սիրելի, հայ կնոջն յատուկ—
Պահեցիր թշուառիս պատիւը փառքով։

Ազգատութիւնը չը խախտեց հաւատդ,
Սիրեցիր պստկիդ օրուայ վառ սիրով։
Նատ անգամ ընկերից դաղդուած հոգիս,
Մխիթարեցիր դու բարձր խօսքերով։

Քեզ թողի միայնակ, միշտ թափառեցի,
Բայց ոչ շահախնդիր սոսկ թափառական,
Այցելեցի անթիւ գեղեր քաղաքներ,
Տարածեցի մտքեր ուժիս համաձայն։

Տարածեցի Ծերենց, մեծ մարդ Բաֆֆի,
Լացկան Աբովեանը լցուած վշտերով,
Սիրովըդ օժտուած, միշտ աջող կռուայ,
Զինուած ու պատրաստուած նոր դաղափարով։

Կաղմեցի ամեն տեղ բազմամարդ ժողով,
Խօսայ ճշմարտութիւն, զրկուայ չարաչար,
Անթիւ հալածանքներ կանցնէր ամպի պէս,
Երբ զգում էի որ դու կաս ինձի համար։

Երբ ես խօսում էի հայ կնոջ մասին,
Քո տիպդ էի յիշում, ազնիւ նազելիս,
Բայց աւաղ, թշուառիս թողիր բէմուրազ,
Հեռացար լաւիտեան, անգին սիրելիս։

Մահուան հոգեվարքիդ լալով խնդրեցիր,
Երեք որբիկներըդ խղճիս յանձնեցիր,
Դու միամիտ եղիր, իմ կեանք ու հոգիս,
Արդէն կը կատարուի ինչ որ խնդրեցիր։

Ազիզ խաթրիդ համար լինիմ կրօնասէր,
Դաւանեմ ժամ, աղօթք, վերջին դատաստան,
Հանգիստ ոսկերացդ, իմ Տողակաթիս,
Տայ Աստուած քեզ դրախտ—հանգիստ օթեւան։

ՀԱՆԳՈՒՅԵԱԼՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ի՞նչ անուշ է ձայնդ աշուղ,
Սազդ դարտլի, երգդ լացկան,
Երգում ես Բասենի դէպքը,
Հառաչանքդ է սուգն ազգութեան։

Ես քեզ մեռնիմ, իմ ունկնդիր,
Լսիր երգը կարիճներուն,
Նոքա ընկան կռուի դաշտում,
Վրէժ կուզեն, Ասսու սիրուն։

Ստուաձային բժիշկ Խաչիկ,
Խան, Զմշկեան, Նովրուզ, Զհան,
Սերոբ աղան, երկու որդին,
Փառքն էին Դաշնակցութեան։

Յոգնած — տանջուած, ասատիկ քնհատ,
Կռիւ սկսուեց լուսահատ,
Դուշմանն ընկաւ մէկին հարիւր,
Հաստատեցին լոյս ու հաւատ։

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՈՅԺԸ

Քո անունով՝ երգ երգեցի,
Անաստուած վաշխառուն լսեց,
Թողեց իրան ոսկու կասսան,
Նա էլ ինձ հետ սուգն սկսեց։

Քո անունով՝ երգ երգեցի,
Երկիր կործանողի տունը...
Ահ ու սարսափ պատեց իրան,
Աչքերից հեռացաւ քունը։

Քո անունով՝ երգ երգեցի,
Լուսանկար և նկարչին,
Նկարեցին վեհ պատկերդ,
Նուիրեցին անյաղթ քաջին։

Քո անունով՝ երգ երգեցի.
Ոսկի պաշտող խանումներուն,
Թողին հեշտասէր պարերը,
Յանձնուան ազգու խօսքերուն։

Քո անունով՝ երգ երգեցի,
Քաջ կտրիճին, բանաստեղծին,
Ուխտեցին թողնել ամեն ինչ,
Միայն քեզ համար մտածեն։

Քո անունով՝ երգ երգեցի,
Քոյր ու եղբայր զէնք վեր առան,
Երկար տարի գործելուց վերջ,
Ստամբօլի ցոյցին մեռան։

Վերջապէս դու աստուածացած—
Բարձրութիւն ես իմ իդէալը,
Դու փրկութիւն որբ ազգերու,
Ահա այս է իմ գիտնալը։

Անունիդ վերջն ազատութիւն,
Սկիզբն յեղափոխութիւն,
Թող հայը հաւատայ քեզի,
Անշուշտ կը գտնի փրկութիւն։

ՊԵՏՕՅԻ ՊԱՅՄԱՆԸ

Հաւաքուեցէք քաջեր բազում,
Ժամանակ է, ձեզ եմ ասում,
Այնպէս մէկ ընկեր եմ ուզում,
Ուր որ գնամ, գայ ինձի հետ։

Առնեմ փամփուշտներ պիտանի,
Հազարից պակաս չը լինի,
Արեան նալէ որպէս գինի,
Թէ խմեմ, խմէ ինձի հետ։

Որպէս ջանֆիտահ հարազատ,
Գոռա առիւծի պէս ազատ,
Դաշտ ու հովիտ, լեռ անապատ,
Թէ մնամ, մնայ ինձի հետ։

Երբ մեզ պաշարեն հազարով,
Զը վախենաք կռուել սրտով,
Դէմքը ուրախ, սիրտն ապահով,
Երբ խնդամ, խնդայ ինձի հետ։

Կռուի դիրքերը ըմբռնէ,
Արծիւի նման սաւառնէ,
Ձեռք ու ոտքն իրար չխառնէ,
Երբ ձայնեմ, ձայնէ ինձի հետ։

Կռիւը համարէ հարսնիք,
Ուրախանայ ինչպէս մանկիկ,
Բռնեցին՝ չը պատմէ գաղտնիք,
Թէ մեռայ, մեռնի ինձի հետ։

ԻՄ ԵՐԱԶՆ ՈՒ ԻՂՁԸ

Ես կուզէի մեր խեղճ ազգը,
Ազատ լինէր թուրքերուց,
Հեռու բոլոր զուր ու զրկանք,
Անխիղճ բարդուած տուրքերուց։

Քուրտ անօրէն, Զէյբաք, Թաթար,
Զը քանդէին մեր տունը,
Գազան Սուլթան, դահիճ բէգեր,
Զը խմէին մեր արիւնը։

Ես կուզէի իրաւունքից —
Զրկուէր անսիրտ Օսմանցին,
Որ ընդհանուր մարդկութեանը,
Անթիւ վնաս հասուցին։

Զրիակեր — ցեց ազգերու,
Այդ մարդագայլ — բորենիք,
Միլիոնաւոր չարիքներով,
Քանդեցին մեր հայրենիք։

Ես կուզէի ամեն մէկ հայ —
Լցուէր վրիժու նախանձով,
Զայրութ զգար դէպի թուրքը,
Հայհոյանքի անէծքով։

Ստոր ճանաչէր այդ ծոյլ ազգ,
Յատուկ վնաս հայութեան,
Սուլթանական մեղկ լակոտներ,
Միշտ հակառակ գիտութեան։

Ես կուզէի հայրենիքս —
Զարդանար նոր ճաշակով,
Հայ ռամկավարութիւնը —
Պանծար իւր դրօշակով։

Հոտած — նեխուած թուրք վարչութեան —
Տեղը իշխան հայկական,
Սուլթանական բռնութիւնից,
Ազատ լինէր Հայաստան։

Ես կուզէի նոր Հայկական -
Պալատի մօտ մի տաճար,
Այնտեղ պահուէր հայդուկների,
Նուիրական սուրբ նշխար։

Ամեն տարի տօն կատարուէր,
Մեծ բազմութեան հոսանքով,
Զանգիտահը լիշատակուէր,
Պատարագի մաղթանքով։

Ես կուզէի Հայաստանում—
Ծաղկած լինէր ամեն բան,
Գերազանցէր Զուիցերեային,
Տար նոր օգուտ մարդկութեան։

Բերդի, բանդի, բռնութեան տեղ,
Դպրոց, արհեստ հիմնուէր,
Սուրբ մամուլի ազատութիւն,
Ժողովուրդը վայելէր։

Ես կուզէի հայրենիքիս,
Ամենալաւ դրութիւն,
Գործողներն անկաշառ հոգով,
Զունենային թերութիւն։

Ունենային ուղիղ օրէնք,
Դառնար կեանքի ղեկավար,
Հարուստն աղքատին չը խեղդէր,
Մարդը ապրէր հաւասար։

Ես կուզէի խճուղիներ,
Երկաթուղիք, նոր կարգեր,
Երաշտութեան դէմ կռուելու —
Տարածուէին ջրանցքներ։

Երկսեռով լի համալսարանք,
Ամեն ինչով ապահով,
Ժողովուրդը օրուայ հացը,
Միշտ ձեռք բերէր հեշտ կերպով։

ՈՒԽՏԵԱԼ ՋԱՆՖԻՏԱՀՆԵՐ

Մենք երդուած զինուորներ ենք —
Բռնութեան դէմ կռուելու մշտական,
Ձենք խնայիլ մեր վերջին կաթիլ արիւնը,
Զոհերըն ենք փրկութեան։

Թող բամբասեն, զրպարտեն մեզ —
Անտեղի, չը մասնակցող հայերը,
Թող կզերն էլ իւր հակառակ քարոզներով,
Պահէ թուրքի շահերը։

Ոչ Սուլթանի բարկութիւնը,
Ոչ թերահաւատներու խօսքերը, —
Ձեն կարող թուլացնել մի մազաչափ,
Ջանֆիտահի սրտերը։

Մեր զէնքը կը դադարի,
Երբ կը տրուի հայ ազգին ազատութիւն,
Անվերջ կը շարունակենք ահեղ կռիւ,
Մինչ ձեռք բերենք փրկութիւն։

ՄՀԵՑԻ ՄՈՒՔԱՑԷԼԻ ԽՕՍՔԸ ԻՒՐ ՆՀԱՆԱԾԻՆ

Քաղցած, ծարաւ, խոնաւ բանդում,
Տանջանքներս էր սոսկալի,
Դեռ սիրոյ որբ կարօտ սիրտս,
Քեզ լիշում էր, նազելի։
Զքնաղ դէմքդ չէր հեռանում,
Քնի կարօտ աչքերէս,
Մեղմացնում էր տանջանքներս,
Որ չմաշուեմ աւելի.
Մի յոյս որ ինձ ապրեցնում էր,
Այն քո սէրն էր, սիրելի։

Զար Սուլթանը խորհուրդ արեց—
Շէյխ—Իւլ—Իսլամ օձի հետ,
Սովն ու սուրը միացուցին,
Դժոխային բոցի հետ։
Երբ ամենքը կատարվում էր,
Մեր լեռներն էր անպաշտպան,
Դո՛ւ, Անո՛ւշս, սուր վերցուցիր,
Յոյս շնչեցիր հայերուն.
Որպէս կռուի աստուածուհի,
Հոգի տուիր քաջերուն։

Ես ազդուայ մեծ հաւատով,
Դէպի քեզի հեռուայ,
Երբ ամբոխին դէպի կռիւ,
Տանում էիր աներկրայ։
Ծանր վէրքերով ծածկուած,
Արեան դաշտում վայր ընկայ,

Այնուհետև ես քո սիրով,
Ապրում էի սիրական.
Որ չը մեռայ խոնաւ բանդում,
Քո սիրոյն եմ պարտական։

Զեն փշրուել ոսկորներս,
Որպէս մի թոյլ առարկայ,
Նոցա մէջը դէպի թուրքը,
Հազարաւոր վրէժ կայ։
Ժամանակն է բռնկուելու,
Սպասելու ճար չկայ,
Փայլուն սուրը հազիւ պէտք է,
Վառուած սրտիս յաղուրդ տայ.
Պէտք է լինել դէպի թուրքը —
Անխիղճ, անսիրտ, անզգայ։

Երկար դարու մութ օրերում,
Պիտի ծագէ նոր արև,
Յայնժամ կգամ քեզ, Անուշը,
Կտամ նոր կեանք նոր բարև։
Հարենիքիս փրկութիւնը,
Քեզ կը պատմեմ երգերով,
Ազատութեան երկրպագու,
Խնդայ — ցնծայ յոյսերով.
Ազատ Հայրենիքիս գրկում,
Պիտի ապրեմ քո սիրով։

ԱՆՁՆՈՒԻԷՐ ԶԻՆԻՈՐԻ ԶԳԱՑՄՈՒՆՔԸ

Զարթել է թմրած խոր քնից,
Նորոգուել է աւեր սիրտս,
Լսել կսկիծ—ողբ աղաղակ,
Գնում է անվեհեր սիրտս.
Արծիւի պէս կուզէ թռնել,
Շուտ երթայ անհամբեր սիրտս,
Ո՞վ կարող է ճանապարհից—
Դարձնել կամքի տէր սիրտս.
Ժամ յառաջ կուզէ օգնութեան -
Հասնել ազգի նուէր սիրտս,
Վրէժխնդիր լինել թուրքին,
Թափել արեան ծովեր սիրտս։

Լաց մի՛ լինիր, մայր իմ անուշ,
Քաջալերէ՛, ինձ մի յոյս տուր,
Գուցէ վերջին տեսնելդ այս է,
Մի՛ խնայիր երկու համբոյր.
Ի՞նչ անէ տաճկահայ կինը,
Տարիներով տրտում տխուր,
Ո՞վ գիտէ թէ նրա մարդը,
Որ վատ բանդում մաշվում է զուր.
Աղջիկ, տղայ սրախողխող,
Մայրեր լալիս են կցկտուր,
Տառապեալներին օգնութեան,
Գնում է ազգասէր սիրտս։

Մնաս բարեաւ իմ սիրեկան,
Մնաս բարեաւ իմ թանկ հոգեակ,
Մի ժամ առաջ կուզեմ գնալ,
Այնտեղ առնել իղձ ու փափագ.
Կրետէ, Մակեդոն, Արաբ,
Գործում են մեզ հետ ներդաշնակ,

Դաշնակցութեան զօրեղ ձեռքով,
Այնտեղ բացուել է դրօշակ.
Զօրավարներն ռազմագէտ,
Զինուորներն անվարձ—անթոշակ,
Պիտի անցնի սարեր ձորեր,
Լինի նոցա ընկեր, սիրտ։

Ծուռ Մուշեղին, Գարեգինին,
Հինգ—վեց օր լինինք աշակերտ,
Բէգ ու փաշա ջնջելու մէջ,
Դառնանք մասնագէտ լաւ վարպետ.
Հրով, թրով, դինամիտով,
Խնկարկելով հասնել Խարբերդ,
Փրկել բազմաչարչար հային,
Հանգստանալ Տիգրանակերտ.
Հանգստութիւն տիրէր Վանում,
Կիլիկիայից մինչև Բաբերդ,
Ցայնժամ իրեն տեղը գաղար—
Կառնէր ազգի նուէր սիրտ։

Ռամկավարութեան մեծ փառքով,
Խնդար—պանծար Հայաստանը,
Հայ զինուորի ձեռքում լինէր,
Վերջին սիստեմ հրացանը.
Հաց տուող դպրոց ամեն տեղ,
Համալսարան շինուէր Վանը,
Մարդավայել օրէնքներով,
Ազատ լինէր տպարանը.
Հողը համայնքին սեփական—
Լինէր այս արդար պայմանը,
Բանուորի դրրութիւնը լաւ—
Կուգէր աւետաբեր սիրտ։

ՆՈՐՔԵՑԻ ԱՐՄԵՆԱԿԻ ՑԻԶԱՏԱԿԻՆ

Իմ սիրելի Արմենակ,
Բաց աչքերդ՝ շուրջդ դիտէ,
Քո տեսլի Երևանը,
Տես թէ որքան լաւն է փոխուէ.
Նա դարձել է հայրենասէր,
Այժմ զոհել, զոհուել գիտէ,
Հսկաների մեծ տաղանդով,
Կովկասեան հային է փրկէ։

Խելքից, խղճից զուրկ պարսիկը,
Երևանից նոր դաս առաւ,
Թալանի տենչ վանդալական,
Գազան հոգին իր մէջ մեռաւ.
Այդ նոր դասի արձագանքը,
Շուշի, Բագու, Սիսիան թռաւ,
Թաղիովի ծրագիրը,
Շիա—Ալու գոռին վառաւ։

Հայրենասէր տէր Զաքարը—
Ղըրխբուլաղի այդ հրաշքը,
Առաւ հին քաջերի հոգին,
Տուեց իր նոր զինուորներին.
Գայլ Վահանի ուղղութիւնով,
Առպատակեց թուրք գեղերը,
Այրեց—ջնջեց հանգստացուց,
Նախջուանի սուրբ զոհերը.

ԴԱՀԵՆԱԿՑԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Թուրք խուժանն ստոր հակումով,
Ուշի գեղն է կենդրոնանում,
Հայաջինջ վատ գաղափարը,
Նոցա մէջ արձագանք գտնում։

Արամայիս՝ որպէս հեղեղ,
Իւր քաջերով այնտեղ գնում,
Երդուեալ Ուսուլ՝ Ախալցխեցին—
Քաջերի հետ վրէժ լուծում։

Առիւծ—Աւագն իրալ խմբով,
Պաշտպանում է ժողովրդին,
Յիսուն հոգով դէմ են դնում,
Հազարաւոր պարսկին, քրտին։

Մենք այս երկրի կուլտուրան ենք,
Հաւատացէք այս խորհրդին,
Երբ մենք զինուենք, միշտ կը յաղթենք,
Վերջ կը դնենք անմիտ ջարդին։

Անգլիան տասն հազար զօրքով,
Միշտ զսպել է Հնդկաստանը,
Շնորհիւ ուսման ձեռքն է պահել,
Բազմամիլիոն մուսուլմանը։

Մեզ էլ կաջողուի ուսման ձեռքով,
Ապահովել Հայաստանը,
Թողնենք խաղաղ կեանքը, հայեր,
Միայն սիրենք հրացանը։

ՁՕՆ ՀԵՐՈՍ ԴՈՒՄԱՆԻՆ

Շէն ու ապատ պայծառ Բագուն,
Դրել են վատ դրութեան,
Կոտորում են մեզ հայերիս,
Վերջացել է ամեն բան.
Առ քաջերդ, ել ասպարէզ,
Հասիր, հոգիս, օգնութեան,
Քեզ էլ մատաղ, քո գործին էլ,
Ղարաբաղի փառք Դուման։

Տուր հրահանգ, երկու տեղով —
Ձեր կեդրոնը հաստատէք,
Անզէն մարդիկ նենգ դաւադրութեան՝
Մեքենայից ազատէք.
Դասախօսէք յիմար պարսկին,
Հրացանով խրատէք,
Թող Հայն հասնի մինչ տաճկաստան,
Դաշնակցութեան փառք Դուման։

Հին գազանը արթնացել է,
Գարշ բէգերի խրատով,
Շտապեցէք, քաջութիւնը —
Ծածկվում է արատով.
Բաց դրօշակ՝ կռուի յաղթող,
Տղամարդի հաւատով,
Փրկէք հայ պատիւն անպայման,
Ամբողջ հայի փառք Դուման։

ՆՈՒԷՐ ԻՄ ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍԻՆ

Սաթենիկս, քեզ էլ ազգեց,
Եսթերի պէս սուգն ազգութեան,
Կարեկից է բարձը խղճով,
Զգայուն սիրտդ մայրական.
Վարդաժըպիտ երեսներըդ,
Յանձնուել է խոր տխրութեան,
Հեկեկանքով լաց ու կոծըդ,
Ողբերուս արձագանքն է այդ։

Մօր արցունքով քոյր թշուառի,
Ոսկեպաշտ խանում չես անմիտ,
Դու բարեգութ հրեշտակուհիս,
Պատրաստ ես զոհ լինել ազգիդ.
Բազմապատիկ սուրբ իղձերով,
Թրթռում է անկեղծ հոգիդ,
Հաստատ յոյսով սիրտդ է զարկում,
Ապագայի բերկրանքս է այդ։

Հազարաւոր անտուն—անտէր,
Անբաղդները դառնան երկիր,
Անո՛ւշ քոյրս, այդ խորհուրդը,
Դարձել է քեզ օրուայ խնդիր.
Քարասիրտ դիպլոմատներու—
Գործին նայում հեռաքրքիր,
Սպասում ես ազատութեան,
Երկար տարու տենչանքս է այդ։

Վարք ու բարքովըդ անարատ,
Օժտուած վեհ բնութիւնով,
Ցաւերով լի սրտիս բժիշկ,
Ազնիւ, բարի սրբութիւնով.

Ոգևորուած էք մշտական,
Իմ Վանեայիս մեծ անունով,
Մնաք անմոռաց, սիրելիս,
Անկեղծօրէն բաղձանքս է այդ։

Վառ երևակայութիւնդդ,
Ստեղծել է անթիւ յոյսեր,
Զունիս դադար գիշեր ցերեկ,
Քարոզում ես մեր ազգին սէր.
Գաղափարական դիցուհիս,
Նկարել ես մի վեհ պատկեր,
Մայր Հայաստանի նկարն է,
Իդէալական պարծանքս է այդ։

Քո մէջ տեսայ հայի կնոջ —
Բարձր բարոյականութիւն,
Հարուստ խղճմտանքով ունիս,
Մարդասէրի սուրբ յատկութիւն.
Միշտ լսել ես խոր թախիծով,
Ցահրատից տխուր պատմութիւն,
Վկայ եմ որ ազգու լացդդ,
Սրտագին հառաչանքս է այդ։

ՄԻԱՑԵՂ ԳՈՐԾԵՆՔ

Ամբողջ հայ թուից եօթ հարիւր հազար,
Կազմենք մեծ բանակ — մի զօրաց դումար,
Մեր սեփական ոյժով փրկել հայրենիք,
Օտարը զոհ չի բերէ մեզ համար։

Թող կուռք Եւրոպան մնայ զարմացած,
Մենք սարեր ձորեր ներկենք արիւնով,
Թող գործէ ոյժը, անսիրտ երկաթը,
Թող հանգչի կեանքը մեր փրկութիւնով։

Բոլղար, Կրետէ մեզ չափ հարուստ չեն,
Դրամի հարցով չը դժուարանանք,
Խեղդենք հարուստին, թէ չի մասնակցում,
Անարգենք սերունդն, իսպառ ուրանանք։

Լինենք մէկ հոգի, մէկ սիրտ, մէկ մարմին,
Ամենքիս կամքը թող լինի մէկ բան,
Հարուստը ոսկով, աղքատը որդով,
Համերաշխ ուժով փրկենք Հայաստան։

ՄՈԿՈՒՆՔՑԻ ԵՍԹԵՐԻ ՑԱՐԴՈՐը

Ե՛լ ֆիտալի, ա՛ռ քաջերդ,
Գնա՛ դէպի խլամին,
Զօրքեր ցրուէ, բանակ կոտրէ,
Ճաքեցուր չար Սուլթանին։

Ցոյց տուր որ Սերոբ փաշալի -
Յաջորդըն ես, լոյս հալի,
Կռիւ, սարսափ, ահ ու վրէժ,
Մահը դարձիր թուրքիալի։

Ել սարերը արձիւի մօտ,
Ճաք երեսիդ հով դիպցուր,
Նոր սիստեմի հետ դինամիտ,
Գաղան պետի քով դիպցուր։

Անյաղթ քաջեր հետը առած,
Ամպրոպ կուգայ օդնութեան,
Զիֆտակ Ղումրիներն էլ հետն են,
Եէֆ Անդրանիկ քեզ դուրբան։

Երկու Արշակներ միասին,
Քաջ տղամարդ Մաշադին,
Ուխտ ու պայմաններով ձեռք են —
Մեկնել հզոր Մուրատին։

Գործեր գործէք որ ամաչէ —
Կռապաշտ հայ հարուստը,
Անամօթ Մ. դուցէ զգայ,
Թշուառ հայի կորուստը։

Գործեր գործէք հեռու տեղից,
Զարմանալի լուր առնեմ,
Ընթերցողներ բացականչեն,
Եէֆ Անդրանիկ քեզ մեռնեմ։

ԳԻՈՐԳ - ՁԱՒՈՒՉԻՑ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Մօտակայ օրերում փրկութեան լոյս կայ,
Հոգիք նորոգելու կենսատու բոյս կայ,
Հայի խաւար հորիզոնում մի լոյս կայ,
Հզօր Անդրանիկի գէնքերի բոցն է։

Պարզել է դրօշակ, կռվում համարձակ,
Քուրտին սարսափ, թուրքին դարձել է կրակ,
Սասունից մինչ Ելդըզ ձգուել մի օղակ,
Յաղթող Անդրանիկի գալարուն օձն է։

Ով ինչ երգէ՝ Անդրանիկը չի լսէ,
Կելնէ ֆուֆքը — քարը անվերջ կոպասէ,
Նա մի ձայն է սիրում, միշտ կուզէ լսէ,
Այդ ձայնը Սուլթանի մահուան տնքոցն է։

Փաշաներ, բէգ, մոլլալք չեն օժանդակում,
Իզուր Եւրոպացիք դարման մշակում,
Մի մեծ վէրք Սուլթանին մահ է գուշակում,
Յայտնի Անդրանիկի հասցուցած խոցն է։

ՀԵՐՈՍՆԵՐԻ ԿՏԱԿԸ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Արաբօ և Զաթօ, Շերօ, քաջ Նատօ,
Գուրգէն, Աշոտ, Սիմօն, Ճարտար, Մարանտօ,
Բազմահոչակ Սերոբ փաշա, վեհ Պետօ,
Թողին քեզ արեան կտակը, Անդրանիկ։

Ստեղծեցին կենաց մահու կռիւը,
Մաքրեցին հին դարու կնճռոտ հաշիւը,
Վեհ յաղթողի պսակ, ազգի պատիւը,
Քեզ յանձնեցին դրօշակը, Անդրանիկ։

Դու ընտրուած յաջորդ անյաղթ քաջերուն,
Գէորգ - Զաւուշի հետ պատրաստ մեր սիրոյն,
Տալ ռամկավարութիւն տանջուած հայերուն,
Այս է քո սուրբ նպատակը, Անդրանիկ։

Յաղթողի զարգանդով՝ դէմքդ է քաջութիւն,
Հրամանքդ վճիռ՝ կռիւդ իսկութիւն,
Դաշնակցութեան փառքը, ազգի փրկութիւն,
Հայոց հարցի յաղթանակը, Անդրանիկ։

Տասը հազար զօրքին միացած խուժան,
Երեք անգամ յարձակուեցին՝ ջարդուեցան,
Կոտորեցիր բառիս բուն նշանակութեամբ,
Յետ մղեցիր թուրք բանակը, Անդրանիկ։

Հայ աղջիկներ, քաջեր, ծեր ու երեխայ,
Կաղօթեն որ կեանքդ անվտանգ մնայ,
Թնդացուցիր Լօնդոն, Փարիզ, Հաագայ,
Յառաջ տարար մեր փափագը, Անդրանիկ։

Ծնուար Շապան—Գարահիսար քաղաքէն,
Բոլոր հայեր հոգւով սրտով քեզ կ'յարգեն,
Հայրդ Անտօն իսկ Օգանեան կանուանեն,
Օրհնեալ լինի յիշատակը, Անդրանիկ։

ՏԱԾԿԱՀԱՅՈՑ ԿՈՉԸ

Սաստիկ ձմեռ, բուք ու բորան,
Թշնամին չը քաշուեց ցրտէն,
Խուժանի հետ զօրք միացած,
Կգան մեզ կը շրջապատեն.
Ձմեռն անցաւ տաք կռիւով,
Յոյսը չէ կտրել մեր սրտէն,
Իսէր Աստուծ, քաջեր արէք,
Յանկալի օգնութիւն բերէք։

Առաւօտից մինչ երեկոյ,
Ձեզ ենք նայում անթարթ աչքով,
Երբ դուք չկաք—չէք երևում,
Մենք լցվում ենք խոր հառաչով.

Երկար կռիւներից յետոյ,
Ապրումենք մի կերպ հրաշքով,
Ազնիւ քաջեր, ձեզ կսպասենք,
Եկէք մէկտեղ գործ սկսենք։

Գէորգ—Զաւուշ, Խիան, Փիսան,
Անդոք կանգնել պարոն Վահան,
Երջում լեռներ, Անդրանիկ ջան,
Գլուխ անցել ժողովրդեան.
Արիւն կհեղայ ամեն տեղ,
Վատ վիճակի է Հայաստան,
Թողէք երեկոյթներ, ճառեր,
Ժամանակն է, եկէք քաջեր։

ԱՌ ԱՆՁԿԱԼԻՆ

Մի իդէալիստ թափառական,
Մեն եմ գալիս երկրէ երկիր,
Խնամք արա, իմ սիրական,
Եղել եմ թշուառ տարագիր։
Վարքդ անուշ, բարքդ անուշ,
Լիզուդ անուշ,
Տարուել եմ հոգով մարմնով,
Ուշագրաւիչ երգդ անուշ,
Անուշ—անուշ.
Ա՜խ իմ հազուագիւտ դիցուհիս,
Ձեռքիդ ձեռք եմ տուել զգոյշ։

Անոգոք բաղդը չար դաժան,
Վճռել է որ ապրենք բաժան,
Երնէկ տեսոյդ լինիմ արժան,
Ըստանայի անկեղծ համբոյր։

Աշխոյժ, կայտառ, խօսքերդ են վառ,
Բոց ու կրակ,
Պարզ է քո ներքին աշխարհը,
Տխուր սիրտս տիրող պայծառ,
Պայծառ — պայծառ.
Նուիրական կեանքի անհատ,
Սիրոյդ զոհն եմ անսպատճառ։

Իմ նազելիս, լաւ մտածէ,
Երկրպագուդ եմ սէր տածէ,
Մթթէ սիրտդ քարացած է,
Որ չես լսում լաց ու խնդիր։
Պատկերդ սիրուն, աչքերդ սիրուն,
Ունքերդ սիրուն,
Յուսահատին յոյս ներշնչող,
Կենսատու խօսքերդ սիրուն,
Սիրուն — սիրուն,
Խելքով մտքով, բարձր հոգիս,
Հազար երանի քո տիրուն։

ԿՌԻԻ ՄՂԵՆՔ

Հերիք է Հայեր, շէնացնենք երկիր,
Մեր սեփական աշխարհից մեզ —
Կը հալածեն — կառնեն տարագիր։

Լեռները ելնենք, պաշտպանենք պատիւ,
Երկար տարիք մղենք կռիւ,
Քաջի զէնքով մաքրենք հին հաշիւ։

Քարը անենք բարձ, թողնենք փափկութիւն,
Կռուենք տղամարդի նման,
Թափենք արիւն, փրկենք ազգութիւն։

Մեղք ենք մենք հայեր, շատ ենք ստորացել,
Ամեն մի ազգ էլ ազատուած,
Միայն գերի մենք ենք մնացել։

Հերիք է հայեր, ընկնենք ոտքի տակ,
Կռուենք քաջերի պէս մենակ,
Առնենք վրէժ, ցրուենք մեծ քանակ։

ՔԱՋԵՐԻ ՔԱՑԼԵՐԴԸ

Չենք — չենք, հին հայերի պէս վախկոտ չենք,
Նոր — նոր, նոր զգացմունքներով լի ենք,
Վրէժխնդրութեան կրակով զինուած ենք —
Մեր թշնամի թուրքերու դէմ.
Մեր կայք ու գոյքն յափշտակողներից —
Պէտք է սրով յետ պահանջել,
Վերջ տալ գանգատին մեր անարատ արիւնով։
Ժամանակը պահանջում է մեզանից,
Միանանք հայեր.
Պէտք է գործել խելքով, զէնքով,
Չը վհատել, փրկել մեր վեհ հայրենիք։
Եկէք քաջեր այս դրօշակի տակ,
Որ գործողն է անմահ հերոս,
Մեռնողն է սուրբ հայրենիքի նահատակ։

Մենք — մենք, ուխտել ենք տղամարդու պէս,
Չ՛ը — չ՛ը, խոնարհուել սուլթաններու դէմ,
Լինել անվախ, գործել ազատ,
Առնել վրէժ գոռ իսլամից դարաւոր.
Չը ափսոսալ, չը խնայել թուրքին,
Դէք ու նախատինքով յիշել —

Նոցա իշխանական անխիղճ օրէնքը.
Ի՞նչ կարիք կայ սուլթաններին ցոյց տալ—
Լաց ու հառաչանք
Վերջ տալ լացին, սուր վեր առնել,
Էլ չունենալ արցունք թափելու բաղձանք։
Եկէք քաջեր և այլն։

Թող—թող, շրջապատեն մեր լեռները,
Թունդ—թունդ, որոտան կատաղի թուրքեր,
Չի զարմանայ անվախ Զէյթունը,
Միշտ տեսել է իր թշնամին յաղթուած։
Թող տեղայ կարկտի պէս գնտակներ,
Միշտ տեսել ենք Մահմէտի կիսալուսինը
Ծռուած մեր ժայռերու տակ.
Մեզ չէ հրամայում չար սուլթանը,
Կռուէք ինձ համար.
Բայց մեզ հրամայում է մեր հայրենիք,
Եւ մեր փառքն ազատութիւնն է։
Եկէք քաջեր և այլն։

ԱՔՍՈՐՈՒԱԾ ՈՐԴՈՒ ՀՕՐ ԿԱՐԾԻՔԸ

Մատնիչ քահանային

Տունդ քանդուի, անաստուած մարդ,
Մատնիչ ձեռքով սրտիս դիպար,
Բաժանեցիր միակ որդիս,
Հայրենիքից հեռու աշխարհ.
Նորերդ սև, հոգիդ էլ սև,
Օրս արևս արիր խաւար,
Դաւ լարեցիր Կայէնական,
Թողիր ինձի անմխիթար։

Օրը նոր՝ համոզմունքդ նոր,
Շուտ փոխում ես դաւանանքդ,
Կեղծաւոր մարդկանց ստուերով,
Ապահովել կուզես կեանքդ.
Դու խաւնակիչ շատ գեղերի,
Մեռած է քո խղճմտանքդ,
Ազգ վրդովողի վերջն է մահ,
Ոչ ոք չի մոռանալ յանցանքդ։

Ազգաբնակութեան բաղդի —
Հետ խաղ անելը լաւ բան չէ,
Ուրացող մարդ, քեզի համար,
Երբէք լաւ բան մի պահանջէ.
Որովհետև ասուն ես քանդել,
Անմեղ մարդիկներ ես տանջէ,
Մի օր ժողովուրդը քեզի—
Արդար ատեանը կը կանչէ։

Վա՛յ քեզ և վա՛յ քո սերունդին,
Այդ դատն ունի դանակ, գնտակ,
Յաւիտենական նախատինք,
Հուր գեհենի—անշէջ կրակ.
Ոչ մի վատ մարդի սերունդը,
Չեն ատէ երկար ժամանակ,
Բայց մատնիչի որդոց որդին—
Կատեն որպէս իժի զաւակ։

ՀԱՅԴՈՒԿԻ ՍԷՐԸ

Զինար ես—բարձրացել ես,
Ե՛կ—ե՛կ կարօտըս առնեմ,
Սիրտդ ինձ խոստացել ես,
Թո՛ղ—թո՛ղ մատաղդ լինեմ։
Անմահական նազելիս,
Զեմ մոռանայ քեզ սիրելիս,
Իմ իդեալը դարձել ես,
Սևիկ աչեր, կամար ունքեր,
Սիրուն պատկեր,
Նուշան, Նուշան, հոգիս։

Վիրաբոլժ են ձեռքերդ,
Դի՛ր-դի՛ր վիրաւոր սրտիս,
Զեմ ուզում բժիշկներուն,
Դո՛ւք—դո՛ւք բժշկեք հոգիս։
Հպարտ վայելուչ հասակ,
Հիացել եմ—զարմացել եմ,
Երկնային քոյր մազերուդ,
Սիրականս, հոգի՛ ջանս,
Անմահանս,
Ջէյրան—ջէյրան,

Ջէնքի հետ պսակուած հոգիս,
Մի՛ք—մի՛ք թողնի միայնակ,
Հազարներուն չը խոնարհուող,
Միայն—միայն քեզ եմ հպատակ։
Գաղափարական կոյսըս,
Համբոյրներդ են այրել սիրտս,
Ինչպէս մի բոց ու կրակ.
Դու լուսընթաց, դու արեգակ,
Դու իմ պսակ,
Մարալ—մարալ, հոգիս։

Սերոբ փաշին փամփուշտ տանեմ,
Սար - սար, էն սարին զուրբան,
Նեմոուշ սարէն քեզ ջուր բերեմ,
Եար – եար, ես եարին զուրբան։
Խմես սիրտդ հովանայ,
Անմահական ջրի արժան,
Հայրենասէր հոգիդ սիրեմ,
Հովէն կուգամ, ծովէն կուգամ,
Քաջերու քովէն կուգամ.
Թառլան – թառլան, հոգիս։

ԱՂԲԻՒՐ ՍԵՐՈԲԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

Հայոց երկրի ասպղ ու լուսին,
Պայծառ դէմքին քօղ են առել,
Իսէր Աստծու, գետեր, լճեր,
Պղտոր արեան գոյն են դառել։
Սուգ է երկինք, սուգ է երկիր,
Ո՜հ, ինչ տխուր փոփոխութիւն,
Որովհետև ազգի պաշտպան,
Վեհ Սերոբ Փաշան է մեռել։

Սերոբ փաշա, ես քեզ մեռնեմ,
Ինչո՞ւ որբ թողիր քաջերուն,
Ինչո՞ւ նորէն սուգ սփռեցիր,
Գարտ վարամով լի հայերուն։
Տասնուչորս տարի անընդհատ,
Դիմադրեցիր թուրքերուն,
Զոհուար բարձր գաղափարին,
Ի՞նչպէս մոռնանք, Աստու սիրուն։

Թող հայ կղերին Աստուած պատժէ,
Պատրիարքին փափը տիրէ՝
Թէ որ քեզի մեծ ցոյցերով,
Հոգեհանգիստ չը կատարէ։
Դու բարձր ես շատ շատերէ,
Հայ զինուորն անմխիթար է,
Կռապաշտ և քարասիրտ է,
Ով որ քեզ սրտով չի սիրէ։

Ո՜հ, Աստուած իմ, խղճա Հային,
Իսկապէս մեծ է աղէտը,
Զինուորները սրգի մատնուել,
Չկայ վեհ զինուորապետը։
Հազար ափսոս, մեռաւ քաջը,
Դիւցազնական որդին հետը,
Եղբայրներն էլ իւր վիճակին,
Ջնջուաւ հոյակապ տան հետքը։

Սերոբն՝ արդար Աբէլի պէս,
Կը բողոքէ պաղատանքով,
Մեր ճակատին պոզ կը բուսնի,
Կայէնի պէս ամօթանքով։
Իսէր Աստու, հայեր – հայեր,
Ոտքի ելնենք հպօր ջանքով,
Մեծ մարդու վրէժը լուծենք,
Անձնուէրի յաղթող զէնքով։



ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ԲՈՂՈՔԸ

Օտար երկրից վերադարձած,
Իմ սիրելի հայրենիք,
Ես հիւանդ եմ մինչ մերձ իմահ,
Ոչ ոք չի գալ ինձ մօտիկ։

Տներ քանդող մեծ վաշխառու,
Վնասակար, անպատիւ,
Ես չեմ եղել ցեց մարդկութեան,
Ու չեմ ապրել անհաշիւ։

Բայց ինչո՞ւ անգութ խուժանը,
Ցանկանում է մեռնելս,
Ինչո՞ւ նրան դուր է գալիս,
Մահու ճամբայ բռնելս։

Ես պատմել եմ անթիւ գրքեր։
Երգերս վիշտ են փարատէ,
Պատուի տեղ անխիղճ ամբոխը,
Անարգանքով ինձ կատէ։

Ա՜խ, Աստուած իմ, արդեօք կգա՞ն,
Այն երջանիկ օրերը,
Որ Հայ ազգն էլ ուրիշի պէս,
Զգար իրան ցաւերը։

Չը հալածէր գաղափարը,
Չը քարկոծէր իւր զոհին,
Գոնէ անկեղծ սրտով սիրէր,
Ով ծառայէր իւր շահին։

Յուսահատ չեմ, գիտեմ կգայ —
Շուտով մի լոյս հոսանքով,
Յաղթական վեհ գաղափարը,
Կը տարածուի պարծանքով։

Խաւար մասսան պրինց Ցուանի,
Նենգաժոտ վճռից ազատուած,
Աշխարհ կգայ՝ ճշմարտութեան,
Գիտութիւնով անկասկած։

ՍԵՐՈԲ ՓԱՇԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Երբ Սերովբէն խաղաղ կեանքից —
Հրաժարուած դարձաւ զինուոր,
Երջակայքում լուր տարածուեց,
Նրա մասին խիստ ահաւոր.
Նրա կեանքի պատմութիւնը,
Ամենի դարձաւ օրէ օր,
Զայնը հասաւ Ելզբզ պալատ,
Նա միշտ մնաց անյաղթ հզօր։

Սերոբ փաշա հռչակեցին,
Քուրտերը նորա անունը,
Պատկառանքով իրարու մօտ —
Պատմեցին գեղեցկութիւնը.
Ոչ ոք չէր կարող ուրանալ,
Զարմանալի քաջութիւնը։
Նա փառքն էր Դաշնակցութեան,
Դողում էր քուրտ ու թուրք բոլոր։

Դրախտավայր սքանչելի,
Նէմռութի վիհը գեղեցիկ,
Հազարաւոր տեսակ ծաղկանց —
Մէջ քչքչում ջուրն անուշիկ։

Ծառով, ծաղկով, լճակներով -
Զարդարուած վիհը երջանիկ,
Սերոբ նստած կարդում նամակ.
Նայում շուրջը խորհրդաւոր։

Ոտքից գլուխ զինուած քաջերը,
Զանֆիտահոս նուրբ ճաշակով,
Բարձր լեռը ծփում, ցնծում,
Ազատութեան դրօշակով.
Վրէժխնդիր դրօշակը -
Զարդարուած էր մանուշակով,
Սիրուն Սօսօն ձեռքն էր առել,
Ասպետական կեանքին սովոր։

Սերոբ փաշի թիկնապահը —
Իրայ կինն էր — հսկայ Սօսօն,
Ահ ու սարսափ տարածում էր,
Նեմռութ սարից մինչև Սասուն.
Աջ կողմում կանգնած էր Սօսօն,
Ձախ կողմում Յակովբն ու Սամսոն.
Բաղդաւոր մարդ, ձեռին մօսին,
Զինուորական կոչմանն արժան։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՆՅԵԱԼԸ

Ա՜խ, հայրենիք սիրոյդ վառուած —
Սիրահարդ կորուցիր,
Վառուող — կրակուող քո սիրոյդ,
Հոգատարդ կորուցիր.
Դահ, գայլսոն և թագ ու սուր —
Ամենքն եղան բնաջինջ,
Զրկուար մեծամեծ փառքերից.
Թանկ գոհարդ կորուցիր։

Ո՞ւր է Աբգար, Լևոն, Տրդատ,
Արշակ, Արամ իշխանդ,
Ո՞ւր է Գուրգեն, քաջն Յովնան,
Սմբատ, Վարդան, Վահանդ,
Ո՞ւր է Գագիկ Բագրատունի,
Աշոտ արքայ, Տիգրանդ,
Կառավարիչ կայք ու գոյքիդ,
Ղեկավարըդ կորուցիր։

Մարդ մի անգամ միտք բերելիս,
Տատանվում է հէք սրտով,
Դաւիթ բէգի ճիդ ու ջանքն էլ,
Զարաւ քեզի ապահով.
Մատնուեցար չիք Կիրակոս —
Քահանայի վատ ձեռքով,
Բոլոր վէրքերիդ փարատում,
Դեղ ու ճարըդ կորուցիր։

Ինչո՞ւ այդպէս սևով անցաւ,
Քո չար բաղդի շրջանը,
Ինչո՞ւ բոլոր դրացիք չար,
Փորին քո դերեզմանը.
Բոլորից զրկուեցար միայն —
Քեզ մնաց Խրիմեանը,
Վարժապետեան Ներսէսի պէս՝
Բարերարըդ կորուցիր։

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆՇԱՆԱԲԱՆԸ

Անդրանիկը սարէն իջաւ,
Արեան ծովէն խապար ունի,
Զղեր ցնցող պատմութիւնով,
Յուզուած ներքին աշխարհ ունի։

Զէնքն է լռել կռուի դաշտում,
Քաջը քարոզիչ է դարձել,
Կգայ մեր ամբարիշտ հոգին—
Միացնել ու մէկտեղ ձուլել։

Բանդ, հալածանք, մահ, կախաղան,
Վիշտ ու թախիծ, սուգ ու շիւան,
Կռուի արեան գոլորշիով—
Եփել—դարձուցել է մէկ բան։

Այդ բոլոր սարսափներիցը,
Ուժանակ է շինել ուժգին,
Բերել է որ զարկէ թափով,
Մեր եսական—յամառ խղճին։

Մեծ մարդը իւր բարձրութիւնից—
Պիտ ասէ մեր թերութիւնը,
Խռովարար—կուսակցական—
Մեր ամբարիշտ դրութիւնը։

Մնաք բարեաւն ասել Կոմսին,
Գէորգ—Զաւուշ թողել Վանը,
Կերթայ անգութ Եւրոպային,
Պատմէ տխուր Հայաստանը։

Եկէք հայեր, մէկտեղ կրկնենք —
Ջան Անդրանիկ, խան Անդրանիկ,
Ասենք — փառքը թող տարածուի,
Ամբողջ Հայաստան, Անդրանիկ։

Ցահրատ դու էլ խղճուկ ձայնդ —
Բարձրացուր ժողովրդի հետ,
Թող սլանայ դէպի երկինք,
Որպէս աղեղից թռած նետ։

ԹՈՐԳՈՄ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եկէք քաջեր պաշտելու չափ —
Յարգենք — սիրենք այն սուրբ մօրը,
Որ իւր գրկում սնոյց — բուսցուց.
Հայրենասէր վեհ հզօրը.
Երբ մեծացաւ զգայունը,
Զգաց հայութեան սև որը,
Բանդ, կախաղան, մահ, հալածանք,
Նորան ազդեց այս բոլորը։

Սուրը ձեռքին հանդէս եկաւ,
Ղարաբաղի ժեռ բարձունքէն,
Նա մի պարգև էր որ եկաւ,
Որբ հայի համար երկնքէն.
Թողեց պետական պաշտօնը,
Հրաժարուեց փափուկ կեանքէն,
Զոհուել բարձր գաղափարին,
Երբէք չը վախցաւ վտանգէն։

Դիւցազնական ելևէջով—
Ունէր ուժգին ազդու խօսքեր,
Պատմում հայրենիքի վիշտը,
Լացացնում էր շատ քար սրտեր։
Երբ ոգևորուած կրկնում էր,
«Գնանք երկիր, քաջ ընկերներ»,
Աստուածախօս պատգամի պէս—
Նորոգում էր միշտ վառ յոյսեր։

Խօսել գիտէր Մենակի պէս,
Քաջ էր Անդրանիկի նման,
Հնարագէտ Երկաթի պէս,
Ուշք ու միտքն էր Հայաստան։
Իմ Քղեցի Պողոսի պէս,
Հաւատարիմ էր անպալման,
Բոլոր քաջերի պսակը,
Ես քեզ մեռնեմ, ազիզ Թումման։

Մեծն Ներսէսի մահի պէս,
Սուգը պատեց որբ հայ ազգին,
Շիրակ, Կարս, Բասեն Մուշ, Սասուն,
Լալիս են նախշուն Թորգոմին.
Հէգ հայուհին նստած—կայնած,
Տեղը ցոյց տալիս անցորդին,
Հարազատ մօր արտասուքով,
Ողբումեն ազնիւ Թումանին։

Ժողովուրդը հիասթափուած,
Էլ չէր պաշտում հին սուրբերուն,
Նոր սուրբ դարձաւ անուշ քաջս,
Տիրեց մարդկանց հէք սրտերուն։

Որսորդ, Վաղարշակ, Տէր Ղազար,
Մատաղ անկեղծ ընկերներուն,
Ես դժբաղդ պատմիչը ինչպէս—
Մոռնամ Թումանն, Ասսու սիրուն։

Թէ զինուոր և թէ քարոզիչ,
Ազգը ճանաչում էր նորան,
Երկու հզօր ինքնակալներ,
Փնտռում էին քաջն Թուման.
Սահմանի մօտ գտան նորան,
Կռիւ սկսուեց յուսահատ,
Քաջի վայել փառքով ընկաւ,
Ընկերների հետ անբաժան։

Մեծ մարդը իւր մեծ գործերով,
Ծանօթ դարձաւ հայ աշխարհին,
Ազգը թաղեց պատմութեան մէջ,
Այնպէս յարգեց բարերարին։
Արձանագիրն հայ սրտերու—
Մէջը տպուեց փոխան քարին,
Պատկերը նկարուեց երգչի,
Տիւր լալագին քնարին։

Երգիչները հեծեծանքով,
Երգում են քաջի անունը,
Ջղեր ցնցող պատմութիւնով,
Արտայայտում են խկութիւնը.
Երգ ու նուագ, անկեղծ սրտեր,
Պսակում են վեհութիւնը,
Կեցցէ Թուման, կեցցեն քաջեր,
Որ բարձրացրին հայ անունը։

ԱՌ ՍԻՐՈՒՀԻՆ

Կիզող կրակ է դարձել սէրըդ ինձի, սիրելիս,
Այրըվում զոր ու գիշեր սիրով սիրական,
Բայց դու անգութ, չես խնայում շեշտակի նետեր,
Ուժգին թափում ես վիրաւոր սրտիս հոգեհան։

Իսէր Աստուծ, քոզի տակ մի առնի պատկերդ,
Բաց թող ազատ, մարդիք տեսնեն կամար ունքերդ,
Հերիք տանջես, գթա խեղճիս, խոստացիր սէրդ,
Մի թողնի թշուառիս անյոյս, անդեղ անդարման,

Դու մի բոյս ես թշուառ հային, ծաղիկ անթառամ,
Հոտոտուն տերևներով բացվում ես ամէ ամ,
Սիրէ սիրելիդ սրտով, մի լինիր անխնամ,
Սիրահարից մի բաժանուի, մինչ մահ գերեզման։

Հայրդ է Հայկ, եղբայրդ Արամ, սիրուն նազելի,
Ի՞նչպէս մարդ պիտի լինի՝ քեզ չասէ սիրելի,
Քեզ յարգումեմ, իմ հոգի ջան, կեանքէս աւելի,
Անձնազոհ եմ դարձել սիրոյդ, ով իմ գովական։

ԻՄ ՅԱՀԵՐԸ

Ո՞ր մէկը քեզ պատմեմ, ազնիւ եղբայրս,
Պատահել են յաւեր բիւր — հազար ինձի,
Խաւարել արևս, աւրել աշխարհս,
Դէպքն է արել հողին հաւասար ինձի։

Մեռաւ թերափափագ հզօր պաշտպանս,
Խորտակուեց ամեն յոյս, դժուար է բանս,
Դեռ չը ապաքինուած, թափաւ դարմանս,
Չկայ ողջ մնալու մէկ հնար ինձի։

Վաղուց ինձ սպանել էի հեշտ կերպով,
Էլ չէի տանջուիլ դառ կսկիծներով,
Բայց թշնամուց վրէժ առնելու յուսով,
Ապրեցնումեմ մի կերպ խեղճ անճար ինձի։

Կորաւ փառք ու պարծանք, իմ խրախճանը,
Կորուցի թանկագին իմ հոգի ջանը,
Աստուած էլ չը խղճաց իմ դրութեանը,
Վճռեց ու պինդ զարկեց քարէքար ինձի։

ԱՆՄԱՀ ՔՐԻՍՏՈՓՈՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայկական Միկատօն էիր,
Գոյութիւնդ էր նուիրական,
Անհուն սիրով կապուած քեզ հետ,
Դու բոլորիս սուրբ սիրական.
Ցատուկ մեծ մարդու կոչումով,
Ստեղծեցիր կեանք պատուական,
Քո գործդ էր մեզ փրկութիւն,
Բառիս բուն նշանակութեամբ։

Որքան մեծ մարդ ունեցել ենք,
Որոնել են ազատութիւն,
Հայ ու ողբի հառաչանքով,
Կուզէին գտնել փրկութիւն.

Որը նոր ձև լրագրով —
Բացատրում էր գերութիւն,
Որը անթիւ գրուածքներով,
Պատմում տխուր, սև պատմութիւն։

Ոչ ոք չեղաւ քեզ պէս հուժկու,
Տղամարդի վեհ հաւատով,
Որ հանդէս գար սրով—թրով,
Դինամիտի սուրբ խրատով.
Բանդ խորտակէր, բերդեր քանդէր,
Եղթան կտրէր սուր պողպատով,
Ահաբեկէր բռնակալին,
Գերութիւն ջնջէր արմատով։

Մատաղ լինեմ Զօկաց երկրին,
Որ ծնեց քաջ Քըրիստափոր,
Ազատութեան լուսոյ աղբիւր,
Դաշնակցութեան պաշտպան հզօր.
Մեծ անցեալիդ, մեծ յիշատակ,
Զը մոռնանք — յիշենք ամեն օր,
Յեղափոխութեան դրօշակը,
Կանգնի քեզ արձան փառաւոր։

Ողորմած թագաւորի պէս,
Մահդ դարձաւ ուզ ու շիւան,
Բոլգարիայից հեռագրով,
Տարածուեցաւ ողջ Հայաստան։
Սուգդ համազգային կերպով—
Ազդեց տխուր ժողովրդեան,
Ճառախօսներդ խոր խոցուած,
Դրուատեցին փառքդ անվախճան։

Հայ տիկինը մօր պէս լացեց,
Քրոջ պէս մազերը փետեց,
Սուգը կատարեալ էր, հերոս,
Հայ զինուորը արցունք թափեց.
Շատ զգայուն լացկան սրտեր,
Մահիդ առթիւ բաներ գրեց,
Ուր որ հայ կար, անկեղծ սրտով,
Հոգեհանգիստդ կատարեց։

ԻՄ ՀՈԳԵՀԱՏՈՐ Ա. ՁՈՓՈՒՌԻՆ

Ա՜խ, երանի թէ գիտնայիր, սիրական,
Ի՜նչ օրի է քո ընկերդ, սիրելիս,
Երբէք չեմ մոռացել, ազնիւ պատուական—
Խորհրդաւոր սուրբ խօսքերդ, սիրելիս։

Ա՜խ, երանի թռչունի պէս թռնէի,
Գայի քեզ տեսնէի, կարօտս առնէի,
Մէկ ձայնդ լսէի, յետոյ մեռնէի,
Ինձ տար հողին քո ձեռներդ, սիրելիս։

Լամ – թափեմ աչքերէս արցունք արիւնոտ,
Ախ քաշեմ սրտէս՝ ամեն առաւօտ,
Ընկած երկրէ երկիր, երեսիդ կարօտ,
Դարձել է ինձ տանջանք սէրդ, սիրելիս։

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՀԱՄՈԶՄՈՒՆՔԸ

Նուէր մեր հին ուսուցիչ Աղէք. Մխիթարեանցին

Հային ասէք, խիստ հոյակապ—
Լաւ ժամ շինէ, մեծ զանգ կախէ,
Ուրախութեամբ նա կընդունի,
Այդ մասին հոգին կը ծախէ.
Լուսաւորութեան յոյս մի դնի,
Դէպքերը նրան չեն փոխէ,
Գիտնական, զուր մի սխալուի,
Հայը կրօնի ժողովուրդ է։

Հազար տարուայ պաշտուած կրօնքից,
Միշտ մեծ զեղծումներ կիմանայ,
Նոր գործերից մի մասնաւոր—
Զեղծում լսեց՝ շուտ կուրանայ.
Ժամի մոլի, ուսման անփոյթ,
Կրթութեանն հակառակ կգնայ...
Գիտնական զուր և այլն։

Երբ ամուսնանալ ուզենան,
Միջնորդը տէրտէր կըլինի,
Վարդապետներից կխօսին,
Երբոր ձեռքերն առան գինի.
Նախապաշարմունք հաւատող,
Հակառակ ամէն լաւ բանի...
Գիտնական զուր և այլն։

Վաճառական դասակարգը,
Արծաթապաշտ, ոսկու գերի,
Ինտելիգենտն դատարկ խօսող,
Գործելու մէջ տհաս—թերի.

Լրագրները՝ հայհոյող —
Խրախուսող վատ բարքերի...
Գիտնական զուր և այլն։

Մինչև անգամ պրոֆեսոր —
Մարդի գործին չը աչակցեց,
Հասկանալի բարձր գործի —
Առջև՝ իւր աչքերը փակեց,
Հին դարերի փառք — պարծանքը,
Չը հասկացաւ ու չը յարգեց...
Գիտնական զուր և այլն։

Հային թշնամի Վիլհելմի —
Հարուստները՝ զգածուեցին,
Հայաստանի կոտորածին,
Շատ տեղեր որբանոց բացին,
Այդ չը տեսաւ հայ հարուստը,
Փարիզ շինեց եկեղեցին...
Գիտնական զուր և այլն։

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՆԱՏՕՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բարբարոսի ծանր բեռը —
Վերցընել չը կարողացար,
Դու տանջուած երկրի զաւակ,
Կեանքդ ազգին զոհ խոստացար.
Լաց են լինում ընկերներդ,
Ասպարէզից շուտ հեռացար,
Ափսոս, շուտով թառամեցար,
Դեռաբողբոջ ծաղիկ Նատս։

Թաթուլի և Դժոխքի խմբի—
Հետը եղար Դալիբաբա,
Ամբողջ Բասեն քեզ կլիշէ,
Չէ մոռացել մինչև հիմա.
Հաստատակամ ծառայեցիր,
Ոկզբունքով միշտ աներկբայ,
Յեղափոխութեան լաւագոյն,
Իղձերով երջանիկ Նատո։

Վարդենիս գիւղ թող պարծենայ,
Որ քեզպէս յիշատակ ունիր,
Կախաղան բարձրացող Մարգար—
Վարժապետից դասրդ առիր.
Ազնիւ զինուոր, երկար տարի,
Հաւատարիմ ծառայեցիր,
Դժգոհ չեղաւ ոչ ոք քեզնից,
Դուրեկան—անուշիկ Նատո։

ՔՂԵՑԻ ՊՕՂՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նուիրումեմ Մոկացի Գրիգորին

Հայդուկմ ունիմ հզօր առիւծ,
Վրէժխնդրութեան կայծակն է,
Երկրաշարժի ահեղ լաւա,
Յեղափոխութեան կրակն է.
Թուրքին զէնք ծախողներուն մահ,
Ցատուկ նրա նպատակն է,
Մատնիչներուն ահ ու սարսափ,
Ասսու բարկութեան փայլակն է,

Քեաֆիր լինէք, հայ աղջիկներ,
Ծանօթացէք քաջիս անուան,
Երգեր ասէք—լէլէ հիւսէք,
Անմահ քաջիս գովքն սկսէք.

Ձեր երևակայութեան մէջ,
Անմահիս պատկերը տեսէք,
Ֆիտահների պատմաբանից,
Քաջիս պատմութիւնը լսէք։

Յեղափոխութեան փայփայանք,
Դաշնակցութեան հզօր կուռքն է,
Հազարաւոր զրկուած աղջկանց,
Արտասուքի — լացի տուրքն է.
Տանջուած ժողովրդի պաշտպան,
Ընկած տաճկահայի փառքն է,
Մահ սրփռողի զէնքը ձեռին,
Սարսափահարի շնորհքն է։

Եզակի շէնքով — շնորհքով,
Որքան բարձր՝ այնքան խոնարհ,
Կարգապահութեան ենթակայ,
Լուրջ զինուոր — իւր դերին յարմար.
Պօղոս Քղեցին է քաջը,
Ռազմագէտ, — կռուի հանճար,
Ընկերասէր, ուրախ, զուարթ,
Միշտ անարատ, գործը արդար։

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՎԱՌ ԶԳՈՑՄՈՒՆՔԸ

Երկար տարի ազատութիւն —
Ես երգեցի յոյսերով։
Բայց հասկացայ, այդ յոյսերին —
Զոհեր են պէտք հազարով։

Կռիւ, վրէժ, ահ ու սարսափ,
Զինուած ուժի կողմնակից,
Իմ կոչտ սիրաս վրէժ կուզէր,
Հայակեր բռնակալից։

Հոգիս ըմբոստ, միտքս կռուող,
Սիրտս վրէժով լցուած,
Բայց և այնպէս, դէպի կինը—
Անհուն սիրով զգածուած։

Ես սիրումեմ կնոջ գրգռանք.
Վառ իղձերի բերկրանքով,
Հաղարումէկ պչրանքներու,
Ջերմ համբուրի յարգանքով։

Անուշ կոյսը, քեզ եմ դիմում,
Լի յուզմունքի տենչանքով,
Բարձր կոյսէդ ձեռք կը խնդրեմ.
Երջանկութեան բաղձանքով։

Գաղափարի վեհ մարտիկս,
Ձեզ մօտ խոնարհ, իմ հոգեակ,
Յուսահատիս յոյս ներշնչէք,
Իմ գերագոյն թանգ էակ։

Սասուն, Զէյթուն, Ղարաբաղի—
Բարձունքներից խապրի կարօտ,
Այժմ սիրտս խապրիկ կուզէ—
Անուշիկէդ՝ տաք հոգւոյս մօտ։

ԻՄ ՎԻՃՏԸ

Իզուր էք ինձ մեղադրում, ընկերներ,
Դժուարին է բանս, ինչպէս դիմանամ,
Թողէք առատ արցունք թափեմ զոր գիշեր,
Չկայ հզօր պահապանս, ես կուլամ։

Երկար տարի չաջողուեց—անցաւ իզուր,
Վերջը անգութ բաղդին եղայ անձնատուր,
Բաղդը դարձաւ խիղճը մեռած Լանկթամուր,
Քանդեց բերդ ու ապաստանս, ուր գնամ։

Չկայ մխիթարանք, չկայ սիրական,
Չկայ էլ ապրելու մի լուսոյ նշան,
Բաղդը, մահը, չար դիպուածը միացան,
Տարան անմանս, ինչպէս ողջ մնամ։

ԻՄ ՀԻԱՍԹԱՓՈՒՄԸ

Թողել էի տիեզերքում, ամեն ինչ ստեղծող Աստուած,
Պաշտում էի մոլի կերպով, Թիֆլիզում մի քանի մարդկանց,
Դարձել էին իմ իդէալս, կարօտով սէրս էր չափազանց,
Կարծում էի մի մեծ գործի պաշտպան, լաւ մարդիք անձնուրաց,
Լցուած յոյսերով գնացի—հեռու տեղից դէպի սորանց,
Շատ ժամանակ չտևեց որ մնացի խեղճ հիասթափուած։

Ամենքին էլ այցելեցի—գտայ ցրտոտ սառը քամի,
Հասկացայ որ իզուր բան է՝ յոյս դնելը բարեկամի,
Աղքատ մարդին կարհամարհեն, թէկուզ փիլիսոփայ լինի,
Գաղափարը նշան չունի, ամեն տեղ պէտք է խնամի.
Լցուած յոյսերով և այլն։

Փաշայի պէս դրուատեցին, բոլորս, դէմքս, հագուստներս,
Քողի տակով ակնարկեցին, անյարմար անպէտք լինելս,
Լաւ հարուստ, կամ լաւ օրիորդ չէի, որ դուր գար պատկերս,
Այդպէս գտայ ժողովրդի համար լացող ընկերներս.
Լցուած յոյսերով և այլն։

Ես զգացի իմ սխալս, որ սխալուած եմ չարաչար,
Լաց լինելով ես կրկնեցի, անգութ մարդիք և վատ աշխարհ,
Ինչու՞ անարդ ոսկու փայլին զոհվում են բարձր գաղափար,
Մինչդեռ պարոններս երդըւել են որ լինեն բարերար.
Լցուած յոյսերով և այլն։

Երկար տատանուելուց յետոյ, որոշ կարծիքների հասայ,
Իմ իդէալս իրագործուած՝ ժողովրդի մէջը տեսայ,
Հեռու կեղծ ինտելիգէնցիայից, որ կազմումեն անպէտք մասսայ,
Որոնում են չաղ պաշտօններ, կամ հարուստի լինել փեսայ.
Լցուած յոյսերով և այլն։

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՌՔԸ

ՆՈՒԻՐՈՒՄԵՄ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻՆ

Հազար բաբաններով չիսորտակուող բերդի հիմքն ով փորեց,
Ո՞ր հազար դարեր գուշակող հեռատեսը տեղը ընտրեց,
Ո՞վ էր ճարտարապետը, որ քարտէզին համաձայն շարեց,
Ազգերի ուշադրութիւնը դէպ այնտեղ հրաւիրեց,
Երբ աւարտեց շինութիւնը, անունն աստուածակերտ դրեց,
Անդժբդելի կնիքներով անունը արձանագրեց։

Լսեց պարսից հզօր Յաղկերտ գոռող արքայ օձ իշխանը,
Դրդուած չար մոգպետներից, տուեց կռուի հրամանը,
Կուզէր քանդել, բերդի տեղ շինել իւր կուռքերի մեհեանը,
Կռուելու համար բերել էր հետը Ալան և Քուշանը,
Եկան յաղթուան գնացին, բերդակալն իւր գործը վարեց,
Կարծես բիւրաւոր դարի վրկայ բերդը միշտ կանգուն համարուեց։

Լսեց Պապը, դրդեց Յունաց, Դաղղիային և Հունգարին,
Կեղտոտ Մահմետականներն էլ իրանց հետ դաշնակից արին,
Իսպառ քանդել բերդը հիմքից, այսպէս խորհրդի տակ դրին,

Ուժերը քիչ համարելով Նեստոր—Մար Շիմոնն էլ բերին,
Ճիզուիթապետ Լոյոլային իրանց հետը միացրին.
Եկան յաղթուան գնացին և այլն։

Ոչ Մահմետ փէղամպար, Աբուբէքր, Օմար, ոչ Զալիատան,
Ոչ Հասան, Հիւսէին, Ալի, Վալի, հարգաթ Աբաս իման,
Ոչ Լանկթամուր, ոչ Չինկիզ խան, ոչ Բուղայ, ոչ Զափր, Օսման,
Ոչ Իւսուֆ ոստիկան, ոչ Կաշմ և ոչ ամբողջ Արաբիստան,
Ոչ Շահ Աբաս, ոչ Սուլէյման, ոչ Նուրէտտին, Մաղուտ Սուլթան,
Զը կարեցան խրոխտ բերդից խաղդել մի ո՛ և է նշան,
Եկան յաղթուան գնացին, բերդակալն իր գործը վարեց,
Յաւիտենից մինչ յաւիտեան, բերդը միշտ կանգուն համարուեց։

Զգոյշ եղիր, միամիտ հայ, ամուր բերդն Էջմիածինն է,
Դարաւոր պաշտպան հայ ազգի, մեր սուրբ նախնեաց արեան գինն է,
Հեռու այլ և այլ ճիզուիթից, միայն անկախ հայ ազգինն է,
Արշակունի գահին մօտիկ, Պարթև Գրիգորի հիմն է,
Այժմեան բերդակալը Խըրիմեանը խելացի ուշիմն է,
Օգնականը Հայր Իզմիրլեան, հայ ազգի անխոնջ Գրիմն է.
Եկան յաղթուան գնացին և այլն։

Եղիր տոկուն, ով ազնիւ հայ, ունեցիր բարձր յատկութիւն,
Ոսկու փառքով մի՛ շլանայ, մաքուր պաշտպանէ հայութիւն,
Քո նախնիքներըդ թողել են բազմահռչակ—բարի անուն,
Զարգացիր բազմակողմանի, կարդա գրքեր, շատ պատմութիւն,
Մտիր լեղափոխութեան ծոց, սովորիր քաղաքականութիւն,
Որդով, ոսկով, արեան գընով, որ ձեռք բերես ազատութիւն,
Երգիչ Ֆահրատուս խնդիրն է, ճանաչես կրօն, ազգութիւն,
Դաւանէ անշփոթ սրտով, Էջմիածինն է իսկութիւն.
Եկան յաղթուան գնացին և այլն։

ՄԵՐ ԱՆՑԵԱԼԸ ԵՒ ՆԵՐԿԱՆ

Մենք հին ազգ ենք այս աշխարհում, պատմաբանը գիտէ մեզի,
Լատին, Հռոմ, Յունաց պերճ գրրադարանը գիտէ մեզի,
Պրոֆեսոր Էմիլ Դիլոն — պատուականը գիտէ մեզի,
Ռէնդալ, Հարրիս, սոցեալ ծորէս — մեծ պաշտպանը գիտէ մեզի,
Գլադստոն սուրբ մարդասէր մեծ իշխանը գիտէ մեզի,
Հայագէտ Ֆրրանսիացի Լանկլուանը գիտէ մեզի,
Մոլի Իսլամը չգիտէ, բայց գիտնականը գիտէ մեզի։

Մենք Աւետարանի աշակերտներ ենք, Ղուռանական չենք,
Բղջախոհութեան հետևող պղծասէր Ալի - Օսման չենք,
Քառասուն կին պահող Հարէմ խանա ածանդիական չենք,
Դրախտի մէջ հիւրի—փէրի առնող հէք իսլամական չենք,
Բոլոր բարութիւններից զերծ մոլեռանդ մահմետական չենք,
Տիկին Էլիզա, դոքտոր Լէբցիուս, Պիեր Մօռանը գիտէ մեզի,
Տգէտ իսլամը չգիտէ, բայց գիտնականը գիտէ մեզի։

Մեր գիտնականները մեռան, թողին մեզ գրուած սրբրութիւն,
Ֆիզուլ Հաֆիզի պէս չթողին ցնորք — հէքեաթներ-սրտութիւն,
Բնութիւնը մեզ չէ զրկել, տուել է հանճար գիտութիւն,
Արհեստաւոր, վաճառական, ունինք մշտատև քաջութիւն,
Մեր մէջն է տարածուել ինքնաճանաչութեան սէր — միութիւն
Զգում և գործադրրումենք եղբայրական ինքնօգնութիւն,
Տիկին Հէյզէ, Գէորգ — Բրանդէս, Էմիր Զիբրանը գիտէ մեզի,
Մոլի իսլամը չը գիտէ, բայց գիտնականը գիտէ մեզի։

Կրօնական եղուիթներն են յայտնի ճշմարտութիւն ստող,
Լուսաւորչի կրօնն է սուրբ, հաստատուն է, ունի հսկող,
Մեր կաթուղիկոսները միշտ եղել են ազգ կառավարող,
Ազգի համար Օսման, Պարսկի մէջը եղել են միջնորդող,

Իրանց հիւանդ գառն այլոց առողջ գազանի հետ չը փոխող,
Մանաւանդ ներկայիս Հայը Խրիմեան որբերին է մխիթարող,
Բարձն Լինչ, Մարը—Պրոֆեսոր, Ալիշանը գիտէ մեզի,
Մոլի խալամը չը գիտէ, բայց գիտնականը գիտէ մեզի։

Լատին, Պարսիկ, Ալան, Քուշան, հին ազգ էին մեզ հետ ընկեր,
Շատերը կորան գնացին, թողին մի պատմական ստուեր,
Անցաւ մեր կեանքը կռիւով, դիպան մեզ բազմաթիւ նետեր,
Չը կարացին մեզի ջնջել, ինքնուրոյն ապրանք շատ դարեր,
Պարսիկ, Արաբ, Ալբան, Հռոմի հետ թուր զարկող մեր պապեր,
Մեր անցեալ փառապանծ փառքին վկայ են ամրոցներ, բերդեր,
Ներկայիս հմուտ խորագէտ գիտնականը գիտէ մեզի,
Մոլի խալամը չը գիտէ, պատմաբանը գիտէ մեզի։

Ամեն հզօր տէրութեան մօտ մենք անուանի իշխան ունենք,
Վարչական ազգ համարուելու յատկութիւն բնական ունենք,
Զինուորական կոչմանն արժան, յատուկ պաշտօնական ունենք,
Տարածուած երկրրէ երկիր, բազմաթիւ գիտնական ունենք,
Ուսում, հանճար, ձիրք ու տաղանդ, գիրք մատենագրան ունենք։
Ազատ լեզու, որոշ տառեր, ամեն տեղ տպարան ունենք։
Ազնիւ մարդու խղճմտանքի դատաստանը գիտէ մեզի,
Անսիրտ Սուլթանը չը գիտէ, գիտնականը գիտէ մեզի։

ՀՐԱՑՐԻ ՍԻՐԱԾ ՈՂԲԸ

Կուզեմ հանգիստ քուն լինել. ինձ չէ աջողվում,
Ընկերիս խոնաւ բանդը, երազովս եմ տեսնում,
Շղթաների շառաչման հետ լսում եմ հայ զինուորի
Ախ—հառաչանքները.
Անցան—անցնում են տարիներ,
Ոչ ոք չէ մտածում.
Դեռ կռապաշտ հայ հարուստը,
Ոչ մի զոհ չէ բերում։

Ի՞նչպէս չլամ—չը ողբամ, սգամ սև օրս,
Տեսնումեմ դուշմանի հետ միացած եղբօրս,
Հարուստ դառնալու ձգտումով եղել են դաւաճանները,
Անցան սև ու սուգ տարիներ,
Ոչ ոք չի մտածում.
Դեռ քարասիրտ հայ ջահիլը,
Դինու տակառն է պաշտում։

Երանի քեզ, ընկերս, փակուած ես բանդում,
Հայ հարուստի ազգուրաց վատ հոգին չես տեսնում,
Պարտական ես քո մութ բանդին, ոսկեպաշտ
Խանումների խօսքերը չես լսում.
Անցան երկար ու ձիգ տարիք,
Ոչ ոք չի մտածում.
Դեռ անասուած հայ աղջիկը,
Զարդարանք է պաշտում։

Մեռնումենք հազարներով, կոլը են, չեն տեսնում,
Զբաղուած են գեղխութեամբ, մեր լացը չեն լսում,
Բարձրանումենք մինչ կախաղան, դարձեալ խաբեբայ
կոչում.
Ծաղրումեն սուրբ գործին,
Անցան տրտում—տխուր տարիք,
Ոչ ոք չէ մտածում.
Դեռ անզգայ հայ գիտունը,
Մեծ պաշտօն է փնտռում։

Դժոխք—դժոխք, հուր ու բոց թափէ դու անվերջ,
Սուլթանից հազար անգամ վատ աղաներուն,
Ով անտարբեր է մեր վշտերին, նա դաւաճան է հային,
Որդի է Ղուռանի.

Անցան լաց ու ողբի տարիք,
Ոչ ոք չէ մտածում.
Դեռ անխիղճ հայ հոգևորը,
Իւր գրպանն է պաշտում։

ԴԱՐԱԼԱԳԵԱՁԻ ՀԵՐՈՍԻՆ

Սերոբ փաշայ, դարձեալ դու ես որ՝
Հասնումես քաջ, մեզի օգնութեան,
Աշակերտիդ սուրն է շողում,
Սարսափում է թուրքը Կովկասեան.
Քաջութիւնէդ սերուած Առիւծ —
Աւագն է ջնջում գիւղն Իթզուան,
Էշխի տարուած զինուորը քեզի —
Տեսնում է գործի մէջ մշտական։

Ասաց խմբապետ քաջ Աւագը,
Ռումբը պէտք է մեծ քաղաքներուն,
Ֆիտայական անշեղ գնդակներ,
Հարկաւոր են այս վատ շներուն.
Մարտիրոս գիւղը պաշարուած էր,
Երբ անվախ քաջին նոր լուրեր բերին,
Խօսքից անցաւ նա փայլուն գործին,
Իսպառ ջնջեց գոռող թուրքերուն։

Մարտիրոս գիւղի երկրորդ պաշարման,
Պատահեցաւ այս մեծ հրաշքը,
Շահսէվանները եկել էին,
Զը կատարուեց նրանց փափագը.
Ինչպէս եկան՝ այնպէս ջնջուան,
Կեցցէ Խլաթայ քաջ Աւագը,
Կեցցէն իր հետ գործող քաջերը,
Կեցցէ մեր անարատ դրօշակը։

Զաթմալիի մօտ պատահեցաւ—
Գոռոզ Ալասկեարի հետ կռիւ,
Հրամանատարի հմտութեամբ,
Վերջացաւ հին դարաւոր հաշիւ.
Երբ ընկաւ գոռոզ Ալասկեարը,
Թուրքերը եղան ամեն տեղ ցրիւ,
Հպատակուեցան կուլտուրային,
Տուին յաղթող քաջերին պատիւ։

Սօղանլուխ, Դամուր—Թափայի մօտ,
Եօթ հազարով քուրտեր ու թուրքեր,
Խումբն յաղթեց այդ մեծ բազմութեանը,
Գրաւեց ամրապինդ դիրքեր.
Սօֆուեալի մօտը մեղմացաւ,
Բարբարոս խուժանի չար կրքեր,
«Էվալլա՛յ—գոչեցին—ջանֆիտա՛հ»
Եւ խնդրեցին հաշտութեան ձեռքեր։

Վերջապէս փրկուած էր տմարդ,
Անհիւրասէր, թոյլ Դարալագեազ,
Այժ տեսան գոռոզ պարսիկները,
Կատարեցին հաշտութեան նամազ.
Անիծեցին իրանց բէգերին,
Որ ղրկեցին չուղուլ—հելլաբազ,
Բարեմաղթեցին դրացութիւնը.
Նալլաթ, գոչեցին, շէյթաններուն։

Վարդան, Դուման, Պետո և Թուման,
Գոռուել են միշտ տաճկահայաստան,
Աւագ, Մուրատ, Սեղուհ, Ֆահրատ,
Ղումրիք կը կռուին դաշտն Արարատեան,

Չկայ մեր մէջ ոչ մի տարբերութիւն,
Կեցցէ գործը վեհ Դաշնակցութեան,
Այստեղ—այնտեղ մի և նոյն բանն է,
Անաչառ կը գործեն մշտական։

ԻՄ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՐԱՉԱՏԻՆ –

(Գալուստ Իսահակեանի յիշատակին)

Վարդավառի ուրախ օրըս—
Յանկարծ փոխուեց սգի—լացի,
Խաւարուեց արև լուսինս,
Քաջ զեկավարս կորուցի.
Վէրքերս խոր—անբուժելի,
Երկար հառաչանքով լացի,
Ա՜խ, մի հնար—ճար չը գտայ,
Կարօտ սիրոյ, որբ մնացի.
Բաժանեցին անգութ մարդիք,
Գէթ միանգամ չը գգուեցին,
Լաւ է մեռնել, քան թէ ապրել,
Անուշ սիրական կորուցի։

Երկինքն էր օժտել սիրելոյս,
Մարդասէր, սուրբ ու աննախանձ,
Պարթևական դէմքն առնացի,
Վեհ, զգայուն, սիրտն էր վեհանձ.
Ազնիւ ճանապարհով օգնել—
Կուզէր շրջապատող մարդկանց,
Շնորհ հարճար, ձիրք ու տաղանդ,
Գոհար, անսպառելի գանձ...
Ժողովրդին ծառայելու—
Ջանքերի մէջն էր չափազանց,
Ցայտնի մարդկերանցը ծանօթ,
Գովքի արժան գովական կորուցի։

Իւր խելացի վարք ու բարքով,
Ծանօթ էր նա ժողովուրդին,
Տարիներով գոհ կը մնար,
Ով որ կը դիմէր խորհուրդին.
Նա երբէք չէր գաւառաճանի,
Ընկերական ազնիւ ուխտին,
Բալերարս օգնել կուզէր,
Թշուառին, որբին, պանդուխտին։
Բազմահմուտ բանաստեղծս,
Աւաղ, որ զոհ գնաց բաղդին,
Ժողովրդին սիրող, յարգող,
Անմահ գիտնական կորուցի։

Վեղուվ լեռան լաւաներու —
Տակ մնայի — չտեսնէի,
Մտերիմիս տանջանքներով —
Հեկեկանքը չը լսէի.
Նստած մահուան անկողնի մօտ,
Յուսատու խօսքեր կասէի,
Դեռ սիրելոյս վերջին շունչն էր,
Առողջութիւն կսպասէի.
Երբեմն բժշկին յուսալով,
Երբեմն ինձ կը հակասէի,
Ցանկարծ վերջացաւ ամեն ինչ,
Կեանք, յոյս — ամեն բան կորուցի։

Օրը երեք անգամ պէտք է —
Այցելեմ այն սրբավայրը,
Ասեմ, հանգիստ ոսկերացդ,
Դրախտի ժառանգ իմ արդարը.
Աղիողորմ արտասուքով —
Ողբամ — ցօղեմ շիրմի քարը,

Վարդի թփեր բուսնեն շուրջը,
Խաղաղ քնի իմ եղբայրը.
Ո՞վ կարող է մինչև մահը —
Մոռանալ իւր բարերարը,
Ողբամ հազար ափսոսանքով,
Կեանք ու հոգի չան կորուցի։

ՀԱՅ ԶԻՆՈՐԻ ՀԱՅՐՄԵՐԸ

Պաշտօնական թերթ հրատարակեցիր,
Դրօշակ վերնագրով Ամսագիր,
Զգոյշ դիպլօմատ — առիւծ քաջի պէս,
Երևան բերիր հայկական խնդիր.
Երգեցիր դինամիտ, վառօդ, կապարով,
Նմանդ չտեսնուած, նոր տեսակ դպիր,
Զայնդ տարածուեց արար աշխարհին,
Մայր Յեղափոխութեան՝ վեհ Դաշնակցութիւն։

Սուլթանի դիւական ծրագիրն է ծալուել,
Խելքի մօտ գործունէութեանդ առաջև,
Արիւնոտ երկրի դատին նուիրուած,
Պաշտպան որբերի, երկնային պարգև.
Երկրի խաչագողներն ես մաքրել,
Ազդել ես գործին, ո՛վ հսկայ պարթև,
Ո՛չ կրօնաւորներ, ո՛չ թոյլ հարուստներ,
Դու յոյսն ազգութեան՝ վեհ Դաշնակցութիւն։

Պարսկաստանի գործեր, Սարայի կռիւ,
Նաւէշի պարտութիւն, Վանայ դէպքերը,
Մարգկանց սրտի մէջ տեղ գրաւեցիր,
Համբաւդ գրաւեց քաջերի սէրը,

Եկան խմբուեցին դրօշակիդ տակ,
Աշխարհի չորս կողմից անհատ քաջերը,
Սուլթանը ծենեւում ուղարկեց դեսպան,
Ինչան պարտութեան՝ վեհ Դաշնակցութիւն։

Ստամբոլի կուիւ, այլեւայլ ցոյցեր,
Եւրոպական միտինգները զարհուրած,
Վեց մեծ պետութիւն ուլտիմատումով,
Դիմեցին Սուլթանին խիստ վիրաւորուած.
Անյայտութեան միջից հանեցիր հալին,
Տեսանք բոլորիս իղձը կատարուած,
Պատճառ դարձար, Եւրոպացիք թուրք գործին—
Միջամտութեան, վեհ Դաշնակցութիւն։

Թուրքի հետ կռուող ոչ մի ազգ չարաւ,
Ինչպէս գրաւեցիր բանկրն Օսմանին,
Բանկ Օտտոմանից յաղթողի նման,
Դեսպանք սպասեցին քո հրամանին.
Դեսպանք ձեռք քաշեցին քո դաշնագրին,
Ստորագրել տուին Սուլթանին,
Երեւակայութիւնը արիր իրական,
Մօտեցար փրկութեան՝ վեհ Դաշնակցութիւն։

Հարուստ պատմութիւնդ լի է փաստերով,
Թէ զէնքի, թէ բարոյական ոյժ կայ քեզ,
Խանասորիկի մեծ արշաւանքդ,
Մէկ ցեղի ջնջելդ համոզել է մեզ.
Խաստուր, Բաբշէն, Վ.ազրի քեօշքի պայթումը,
Անորէն Սուլթանի կեանքը արաւ կէս,
Մակեդոնի հետ մեզ միացուցիր—
Եղբայրմիութեամբ՝ վեհ Դաշնակցութիւն։

ՍԱԽԱԼԻՆԻ ԱՔՍՈՐԵԱԼԸ

Արեգակը ցուրտ ու մռայլ,
Օդը խոնաւ, մարդիք անգութ,
Ամեն ինչուց զուրկ երկրում,
Ոչ մի բան չկայ ինձ օգուտ.
Երբ կը մթնէր, երբ կը լուսնար,
Ոչինչ չէր ինձ հետաքրքրում,
Դաժան երկրի սև օրերը,
Գալիս գնում էին անփոյթ։

Թէև ամեն ինչուց զրկուած,
Դեռ ինձ մնացել էր մէկ բան,
Զգում էի հայրենիքում —
Սրտով սիրած ընկերներ կան.
Ասում էի, գուցէ մի օր,
Կարժանանանք մենք տեսութեան,
Այդ յոյսերի երազներով,
Ապրում էի ես մշտական։

Յոյսերն ինձի չը խաբեցին,
Փոխուեց աշխարհ, փոխուեց շատ բան,
Մէկ էլ յանկարծ Սախալինից —
Ես ինձ գտնում եմ Հայաստան.
Երևում են Սիս ու Մասիս,
Ես ձեզ կգամ, ջան — տղէք ջան,
Ղարսում ընկած Բիծի գիրկը,
Համբոյրներին չկայ վախճան։

Իմ սիրելի Յարութիւնս,
Կորած էի մեծ փորձանքով,
Կեանքս բերի քեզ յանձնեցի,
Հազարաւոր դառ տանջանքով.

Յանուն հայրենիքի գործենք,
Դարձեալ նախկին հզօր ջանքով,
Հայրենասէր քաջի զէնքով,
Ազնիւ մարդի խղճմտանքով։

Գոհ եմ, որ ինձ չէք մոռացել –,
Ձեր հէք Պօղոս – Եղիային,
Տանջուած հոգիս բերի դարձեալ,
Որ զոհ տամ ճնշուած հային.
Խոստացել ենք, սուրբ ընկերներ,
Որ ծառայենք ազգի շահին,
Որպէս հաւատարիմ զինուոր,
Նշանակութիւն չտանք մահին։

ՔԱՀԱՆԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՆՈՒԷՐ Մ. ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑԻ ՑԻՉԱՏԱԳԻՆ

Չէի լինի խղճուկ Հայերուն տէրտէր,
Մինչև չգնայի մեծ ուսումնարան,
Ուսումի հետ կունենայի հաստատ սէր,
Նոր կասէի, խնդիր ունիմ, սրբազան։

Մաս կառնէի Սահակ Պարթևի կարգէն,
Չէի հրաժարուի Ներսէսի վարքէն,
Ինձ անուն կնքել կտայի Տէր Գուրգէն,
Կսիրէի հայի անուն իսկական։

Մեղմիկ բառերու հետ՝ ազնիւ բնութիւն,
Սիրտս չէր ունենայ նախանձ, դառնութիւն,
Միշտ կը քարոզէի կրօն, ազգութիւն,
Երկուսն էլ կը ճանչէի հային սեփական։

Հայկական հինգերորդ դարու բառերը,
Շնորհալի սուրբ Նէրսէսի ճառերը,
Մեծ Մեսրովբի աստուածադրոշմ տառերը,
Կը ճանչէի մտքի, հոգու սուրբ թարգման։

Բազմերախտ հայը Լուսաւորչի սուրբ սէրը,
Կարծարծէի երկրէ երկիր խօսքերը,
Բերան կանէի Նարեկացու ոգերը,
Ծոցէս միշտ անբաժան սուրբ Աւետարան։

Ինճիճեան, Պալասան — պատմագիրք հայոց —
Կարդալով, կլլիշէի պատմաբան սրբոց,
Անմահ Խորենացուն կասէի հոգւոց,
Կըլլիշէի Փաւստոս, Եղիշէ, Սուրբ Յովհան։

Մխիթարեան միաբանական ուխտից —
Կուենենայի ընտիր գրքեր հոգելից,
Ղևոնդ Ալիշանի հարուստ գրքերից —
Կուենենայի Յուշիկք, Այրարատ, Սիսուան։

Թովմա Արծրունի, Եզնիկ Կողբացին,
Հեթում պատմագիրը, Ղազար Փարպեցին,
Վարդան պատմիչ և Սամուէլ Անեցին,
Ինձ ծանօթ կըլլինէր, մեծըն Չամչեան։

Առաքել պատմաբան, Լաստիվերտացին,
Ասողիկ պատմագիր — մեծ Տարոնացին,
Գօշ Մխիթար, Ղևոնդ և Գանձակեցին,
Անմոռաց կուենենայի Պէշիկթաշլեան։

Կը գիտնայի Շիրվանզատէի խօսքերը,
Գամառ—Քաթիպայի անմահ երգերը,
Մանաւանդ Բաֆֆու անթիւ գրքերը,
Կը սիրէի, Ծերենց, Պերճ—Պռօշ, Դուրեան։

Գարեգին Սրուանձտեան, Նարպէյ գեղեցիկ,
Կսիրէի ազգիս օգտաւէտ մարդիկ,
Սիրաք—Սամուէլ, Վանդոյժ, Դրախտի Ընտանիք,
Հեղինակ կըճանաչէի Հայրիկ Խրիմեան։

Կտանայի Մշակ, Արձագանք, Նոր—Դար,
Արաքս, Աղբիւր, Արևելք, Հայաստան, Խիկար,
Լսելով սուրբ խօսքեր, խրատ անհամար,
Կը վարուէի ազգիս հետ լաւ մշտական։

Փառք ու պատուով խաբուած՝ չէի ուրանայ,
Խիղճս հանգիստ, լեզուս դադար չէր մնայ,
Միշտ կլիշէի սրտով՝ չէի մոռանայ,
Ֆալակեան, Ահարոնեան, լացկան Աբովեան։

Գրողներին կեանք կխնդրէի Փրկչէն,
Նմուշ կունենայի ամեն երգիչէն,
Յակովբ Պարոնեանի ոսկի գրիչէն,
Տիւսաք, Զարէլ կճանչէի կանանց զարդարան։

Վերջապէս կը լինէի սրբութեան անօթ,
Այժմեան քաղաքականութեան մոտիկից ծանօթ,
Ամեն հայ վիպասանից վէպ ինձ մոտ—
Կունենայի ընտիր մատենադարան։

Իբրև հայ քահանայ լինել հեռատես,
Չէ թէ լինել թեթեւամիտ խենթ հոսոս,
Պօղոս չեպիսկոպոս, կամ չիք Կիրակոս,
Չէի լինիլ Նիկոլ, Գիրսաս դաւաճան։

Ոսկէ թագի փոխարէն՝ սաղաւարտ պողպատ,
Սուրբ սկիհս ապակի, բուրվառս երկաթ,
Մասնատուփս կապար, առանցի արծաթ,
Սուրբ մէջը կունենայի դաւազան։

Մի խօսք չէի խօսի զուր—աննպատակ,
Բարի գործքով կդառնայի օրինակ,
Շաբաթ դասախօսել, կիրակի պատարագ,
Կը դառնայի Ղեւոնդ Երէց անվախճան։

Հոգիս հաւատարիմ հայկական սէրին,
Չէի դաւաճանիլ ազգիս իղձերին,
Գիտակցօրէն կը զինէի անմահ քաջերին,
Համոզմունքով կը ղրկէի Տաճկաստան։

Երբ կգար Նաւասարդ—հայոց նոր տարին,
Տարին կը շնորհաւորէի սուրբ Վեհափառին,
Աստուածակերտ Էջմիածնայ տաճարին,
Կը խնդրէի Տէրը պահէր անսասան։

Բաֆֆու խօսքերը ամենքից աւել—
Օգուտ կուտար մեր գործերուն առաւել,
Քարոզներով կը յայտնէի Սամուէլ,
Թէ ինչպէս հայը ու մայը զոհեց ազգութեան։

Կը թողնէի հրէայ Յոբ ու Յակոբ,
Փափագ սրտով կլիշէի թարգմանիչ Մեսրոպ,
Սահակ Պարթև, հայոց սրբերը ամփոփ,
Իշարս այդ սրբոց կըլիշէի Վարդան։

Ում որ պսակէի բնական սիրով,
Կասէի զօրանա՛ք քաջ որդիներով,
Օրհնէնքիս վերջ կուտայի այս խօսքերով,
Ապրէ՛ք բազդաւոր, բայց՝ սիրէ՛ք Հայաստան։

Մկրտուողին կը կնքէի հայ անուն,
Սմբատ, Աշոտ, Արշակ, Վաչէ, Պապ, Մամգուն,
Քաւորին կայտնէի – խորհուրդ նորութիւն,
Որ սանիկին առնէր ընծայ հրացան։

Հրացանը գլխատակին մեծանար,
Գնար ուսումնարան ազնիւ մարդ դառնար,
Մինչև մահը հայ կրօնով ծերանար,
Չէր լինի կեղծաւոր կամ այլադաւան։

Իբրև հայ քահանայ՝ կոչումիս յարմար,
Կաղօթէի — կը խնդրէի անդադար —
Բարերար Սանասարեանցի սուրբ հոգու համար,
Կը խնդրէի դրախտ – հանգիստ օթևան։

Կատարէ՛ խորհուրդս, երկնա՛յին Փրկիչ,
Ուղարկէ մեր ազգին մխիթեան ուսուցիչ,
Թէ և չեղայ տէրտէր, բայց դարձայ երգիչ,
Ցահրատն եմ, պարտքս կճանաչեմ մշտական։

ԳԷՈՐԳ—ՉԱՒՈՒՇԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բոլոր ընկերները թողին հեռացան,
Միայն նա մնաց որբ երկրին պաշտպան,
Ոչ Վիեննա գնաց և ոչ Ռուսաստան,
Հալածուած ամբոխին մնաց ապաստան։

Տասնուչորս տարիներ գործեց անարատ,
Բայց միշտ փառք պատիւը յանձնեց ուրիշին,
Երբ որ վտանգ տեսնէր խեղճ ժողովուրդը,
Կը փնտռէր իւր սիրած Գէորգ—Չաւուշին։

Արեան ծովի ափում, փարոսի նման,
Հասնում էր օգնութեան՝ խեղճ ժողովրդեան,
Հալածուածների յոյս, գերելոց պաշտպան,
Մտքի երկրպագու, զոհը փրկութեան։

Երբոր Սերոբ փաշան յանձնեցին հողին,
Ուխտեց նրա տեղը չը թողնել թափուր,
Ուխտին հաւատարիմ, գործին անձնատուր,
Յարգուած ժողովրդից՝ միշտ մնաց մաքուր։

Յայտնի Անդրանիկին հաւասար ընկեր,
Բայց միշտ սոսկ զինուորի անուան տակ գործեց,
Նրան փառք, պատիւ պէտք չէր, գործ էր հարկաւոր,
Դորա համար կեանքը գործին զոհ բերեց։

Պատրիարք և Սուլթան անգութ, անտարբեր,
Սովը կոտորում էր՝ տարաբաղդ Հայեր,
Իշաւ Սուլուխ գեղը, կանչեց թուրք բէգեր,
Համոզեց որ հաց տան, խեղճ ժողովրդին։

Խնդիրը յարգուեց, հաց բաժանեցին,
Սիրելի Դէորգի՝ կեանքը օրհնեցին,
Անգութների մէկին՝ բաժին քիչ տուին,
Դնաց թուրքին մատնեց խեղճ երկրի յոյսին։

Արիւնարբու զօրքը եկաւ կատաղած,
Բեսսայ—Բինբաշու հետ կռիւ սկսուեց,
Դուրն եկաւ իւր դիրքից՝ անվախ հերոսը,
Կեանքի գնով հին թշնամին խորտակեց։

Գալէն, Խարսցի Յակոբ իւր հետը տարաւ,
Յոյսը կորած երկրի՝ ճրագը մարաւ,
Հոգեվարքին մրմնջաց Սեպուհ և Մուրատ,
Ընկերներու խղճին՝ իւր կտակն արաւ։

ԱՓՍՈՍ ՔԱՋԵՐԻՆ

Վեց շահու ամսավճարներ—
Տալու համար են ուրանում,
Ազատութեան ճաշակ չունին,
Իրենց փրկողին չեն սիրում.
Դրամներ չը տալու համար,
Սուտ պատմութիւններ յօրինում,
Այսպէս անխիղճ ժողովրդի—
Համար, ափսոս, մեռած քաջեր։

Դեռ երեկ էր՝ իրանց մորթող—
Թուրքին՝ այսօր զէնքն են ծախում,
Ուխտադրուժ մարդկանց նման,
Թուրքի հետ հոգի են փոխում,

«Իրշատ»—ներու գիրկը ընկած,
Բէգերի դռներն են բաղխում,
Այսպէս նամարտ ժողովրդի—
Համար, ափսոս, մեռա՛ք քաջեր։

Խուժանների գլուխ անցած,
Վաղուց թմրած բէգութիւնը,
Ոգևորուած գործ ըսկսեց—
Ֆանատիկոս թուրքութիւնը.
Ամեն տեղ մա՛հ, սարսա՛փ, աւեր,
Վատ էր Հայի դրութիւնը,
Դո՛ւք փրկեցիք՝ ձեզ ուրացա՛ն,
Ափսո՛ս ձեզի, ազնի՛ւ զոհեր։

Ինչե՞ր ասես, որ դո՛ւք չարե՛ք,
Այս անաստուած ազգի համար,
Օսմանեան արիւնոտ երկրում,
Գնտակահարուա՛ք չարաչար.
Մերթ Սասուն, մերթ Բաղու, Թիֆլիզ,
Մուշ, Ղարաբաղ կռիւ անդադար,
Դարձեալ սառն են դէպի ձեզի,
Հազար ափսո՛ս ձեզի, քաջեր։

Ազգերու կեանք, հոգի տուող,
Յեղափոխութիւնն ուրացան,
Բացարձակ՝ լրագիրներով—
Մատնեցին և ձեզ մոռացան.
Անխիղճ զրպարտութիւններով,
Սև օձի ճամբով հեռացան,
Միշտ գերութիւն սիրող ազգի—
Համար, ափսո՛ս, մեռա՛ք քաջեր։

Ձեր վարձատրութիւնն է, ձեր,
Ստեղծած մեծ պատմութիւնը,
Ձեր փառք ու պատուի պարծանքն է,
Անաչառ սուրբ քննութիւնը.
Ձեր պարտքը դուք կատարեցիք,
Ձերն է յաւիտեան կացութիւնը,
Օտար ազգեր պիտի յարգեն —
Ասեն, ափսոս, մեռա՛ք քաջեր։

ՆՈՒԷՐ ՄԵՐ ԳԻԺ ԴԱՒԻԹԻՆ

Զը հասկացան առքդ ու փառքդ,
Իգտիրի Հայ աղջիկները,
Այդ մօտալի գերիները,
Թող չը կարեն քո շորերը.
Ես եմ կարօտ առք ու փառքիդ,
Հոգիս գրաւել քո սէրը,
Հարուստ պատմութեանդ մէջը —
Ամփոփել եմ իմ իղձերը։

Իրենց պատուի համար մեռնող —
Զինուորին նրանք չեն սիրե,
Շլեապ չունիս, շորերդ է հին,
Նոքա քեզ չեն համակրե.
Ով հասկանում է անցեալդդ,
Հոգին քեզի կընուիրէ,
Զուր մի՛ տխրի, իմ սիրելիս,
Ընկերդդ քեզ շոր կը կարէ։

Օսմանլուի իսլամ զօրքը —
Սիրով քեզ հետ է միացե,
Մօտալի տարուած աղջիկը,
Այդ խորհուրդը դեռ չը գիտէ.

Գիտեցողի մօտն յաճախէ,
Որ քեզ հոգու մէջն ամփոփէ,
Տասչորս տարուայ հաւատարիմ—
Ծառայելը գնահատէ։

Իմ ազնիւ Պօղոս—Քղեցուս,
Քաջ պատմական՝ գիժ Դաւիթն ես,
Զօհրիեան իշխանի սիրած,
Ազնիւ պատուական՝ Դաւիթն ես.
Կոմսի, սիրելի Վարդգէսի—
Ազիզ—սիրական Դաւիթն ես,
Քուրտի, Հայի, արդար միջնորդ,
Գործի պահապան՝ Դաւիթն ես։

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Գեղեցկուհիմ տեսայ Հայոց դպրոցում,
Քաղցր լեզուով՝ անմահ սուրբ բան էր կարդում,
Աստուծով ներշնչուած գրիչը ձեռքին,
Խաղաղութեան աւետարան էր կարդում։

Նա էլ ազատ չէր սիրոյ վառ կրակից,
Քարերն էին ողբում իւր աղաղակից,
Թուխակի պէս ձայն էր տալիս վարդակից,
Սոխակի պէս միշտ դուրեկան էր կարդում։

Երնէկ չը տեսնէի, իմ այդ հոգեակը,
Գուցէ չը քաշէի սիրոյ փափագը,
Հասկանում էր սրտիս վիշտ ու կրակը,
Իմ իղձ ու բաղձանքը բերան էր կարդում։

Բնութիւնը նրան տուել ամեն բան,
Կազմուածքը սիրուն, վարքը գովական,
Անսիալ ճարտասան, ինչպէս Ալիշան,
Սիրելի Աստղիկիս նման էր կարդում։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Մ. Մաշտոցի անվան

ՑԱՆԿ

	Երես.
Բնութիւնը օժտել է քեզ	7
Ընարատեան բարբառ հոգոյս բարեկամ	9
Ոչ ոք մեզ այնպէս չէ հարուածել	10
Իսլամների գոռ վաշտերը կատաղի	13
Ծուխ – մառախուղ ամեն տեղ	14
Հնարագէտ լինենք Հայեր	15
Տամ քեզի աւետիք գերի Հայրենիք	16
Սասունայ սար փչէ ուր հով	17
Ով որ քաջ է, ինչ կսպասէ	18
Մենք անկեղծ զինուոր ենք	19
Զարթէք, զարթէք, ձրը Ասսու սիրուն	21
Ես երգեցի մի երգ յուզուած	23
Ես կանիծեմ Էդիսոնին	24
Հիւանդ եմ ես, գուցէ մեռայ	26
Ելդըզ քեօշքից հրսման	27
Վերքերով լի Ջանֆիտահ եմ	28
Հայաստանից եկած զինուոր	30
Սարեր ձորեր իրար տուող	31
Սիրուններ դուք մեր նեղանայ	33
Ոչ փառք ու պատիւ, ոչ պարծանք	35
Սուրբ զինատար Մասիս խումբ	36
Մանկութեան օրից խիստ հաւատարիմ	37
Պատրիարքից մինչ ժամկոչ	38
Ո՞վ էր այն մութ դարերին	39

Երբ պատանի աշխոյժ սիրով մտար ասպարէզ . . 41
Սիրել եմ քեզ պաշտելու չափ 42
Եղբայրս թուրքի բանդում 44
Պատանի աշխոյժ մտաւ ասպարէզ 45
Սիրոյ որբ եմ, անխիղճ մարդիք 47
Զարթնումեմ խոր քնից 49
Մի հոգի կայ Աստծու պէս անկաշառ. . . . 50
Ես հանեցի սուրս պատեանից 51
Զես թողնի որ հանգիստ մնամ 53
Հայ աղջիկը անհոգի է 54
Բռնութեան դէմ կռուող հոգիս 56
Զոկեցի անհատ քաջերը 57
Այն օրը որ ես քեզ տեսայ 58
Գնաց խաղաղութիւնն անարդար ձեռքով . . . 60
Արդեօք մտաբերում են ինձ իմ ընկերները . . 61
Աղքատ ընտանիքից ծնուեց 62
Երեք օր է, որ չեմ տեսել նազելիս 64
Երանի քեզ սիրուն Բասեն 64
Իմ անուշիկ քոյրիկս 66
Ես ընկել եմ քիւրտերի մէջ 67
Մնաք բարով սուրբ ընկերներ 69
Դաշնակցութեան վեհ սուրհանդակ 70
Եկ համբուրեմ կուրծքդ 71
Դուշմաններ չորս կողմից շրջապատել են . . . 72
Մեր երկիրն է որբացել 73
Ա՜խ նազելիս, չեմ մոռացել 74
Երուսաղէմը ծէնևում 76
Քեզանից առաւել բարձր սրբութիւն 77
Անցան շատ տարիք, սև ու սուգ օրեր . . . 78
Ի՞նչ անուշ է ձայնդ աշուղ 79
Քո անունով երգ երգեցի 80
Հաւաքուեցէք քաջեր բազում 81

Ես կուզէի մեր խեղճ ազգը 82
Մենք երդուած զինուորներ ենք 85
Քաղցած, ծարաւ, խոնաւ բանդում 86
Զարթել է թմրած խոր քնից 88
Իմ սիրելի Արմենակիս 90
Թուրք խուժանն ոտոր հակումով 91
Շէն ու ապատ պայծառ Բագուն 92
Սաթենիկս, քեզ էլ ազդեց 93
Ամբողջ հայ թուից եօթհարիւր հազար . . . 94
Ե՛լ Գիտալի, ա՛ռ քաջերդ 95
Մօտակայ օրերում փրկութեան լոյս կայ . . . 96
Արաբօ և Զաթօ, Շերօ, քաջ Նատօ 97
Սաստիկ ձմեռ, բուք ու բորան 98
Մի էդէալիստ թափառական 99
Հերիք է Հայեր, շէնացնենք երկիր 100
Չենք—չենք, հին Հայերի պէս վախկոտ չենք . . 101
Տունդ քանդուի անաստուած մարդ 102
Դեռ չեմ տեսել մէկ սիրահար 104
Անբաժան ենք, իմ եղբայրս 105
Զինար ես—բարձրացել ես 106
Հայոց երկրի աստղ ու լուսին 107
Օտար երկրից վերադարձած 109
Երբ Սերովբէն խաղաղ կեանքից 110
Ա՜խ հայրենիք սիրոյդ վառուած 111
Անդրանիկը սարէն իջաւ 113
Եկէք քաջեր, պաշտելու չափ 114
Կիզող կրակ է դարձել սէրդ ինձի 117
Ո՞ր մէկը պատմեմ, ազնիւ եղբայրս 117
Հայկական Միկատոն էիր 118
Ա՜խ, երանի թէ գիտնայիր սիրական 120
Հային ասէք, խիստ հոյակապ 121
Բարբարոսի ծանր բեռը 122

Ուշ. 1 61
20
20

Հայդուկմ ունիմ հզօր առիւծ 123
Երկար տարի ազատութիւն 124
Իզուր էք ինձ մեղադրում, ընկերներ 125
Թողել էի տիեզերքում, ամեն ինչ 126
Հազար բաբաններով չխորտակուող 127
Մենք հին ազգ ենք այս աշխարհում 129
Կուզեմ հանգիստ քուն լինել՝ ինձ չէ աջողում . 130
Սերոբ փաշա, դարձեալ դու ես որ 132
Վարդավառի ուրախ օրս 134
Պաշտօնական թերթ հրատարակեցիր 136
Արեգակը ցուրտ ու մռայլ 138
Չէի լինի խղճուկ Հայերուն տէրտէր 139
Բոլոր ընկերները թողին հեռացան 144
Վեց շահու ամսավճարներ 145
Չը հասկացան առքդ ու փառքդ 147
Դեղեցկուհիմ տեսայ Հալոց դպրոցում . . . 148

19509

2013

Oc
56